# ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

Աշխարհի ժողովուրդներին, ներառյալ՝ հայությանը, ընդգրկած ճգնաժամի հիմքերի հիմքը արժեքային համակարգի ճգնաժամն է: Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) կոչվող երևույթը փորձում է համահարթեցնել բոլոր արժեհամակարգերն ու բոլորին պարտադրել իրե՛նը՝ անկախ այն բանից՝ վերջինս հարի՞ր է տվյալ ազգի կամ հանրության պատմական զարգացմանը, մշակութային առանձնահատկություններին, ավանդույթներին, հոգեկերտվածքին... Իսկ ովքեր փորձում են կոշտ դիմադրություն ցույց տալ, անգլո-սաքսոնական զորքերը չեն վարանում բիրտ ուժով և արյա՛մբ պարտադրել համաշխարհայնացման արժեհամակարգը:

Ի՞նչ անել ուրեմն: Չդիմադրե՞նք... Եվ որպես ուրույն, մարդկային տեսակ մենք մեզ դատապարտենք ինքնասպանությա՞ն... Ո՛չ: Երբե՛ք: Բայց ինչպե՞ս, ի՞նչ հիմքերի վրա կազմակերպել այդ դիմադրությունը, որպեսզի գերժամանակակից զենքն ու զինամթերքն անգամ ի զորու չլինեն ընկճելու հայության հավաքական կամքը:

Պատասխանը շատ հստակ է՝ հենվել միմիայն սեփակա՛ն արժեհամակարգի վրա, իհարկե, հաշվի առնելով ոչ սեփականները, երբեմն էլ նրանցից վերցնելով մեզ հարիր դրականը կամ էլ մեզ համար ընդունելի արժեքները՝ սրբագրելով, հայացնելո՛վ դրանք, ինչպես արեցինք քրիստոնեության պարագայում: Սակայն ո՛չ մի դեպքում նույնությամբ չվերցնել, այսինքն՝ չկապկել օտար արժեհամակարգերի տարրերը: Դրա անխուսափելի հետևանքն ուծացումն է, հայի՝ որպես ուրույն տեսակի, մահը:

Հայ իրականության մեջ թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, ցավոք, գերիշխող է դարձել վերջինս: Առավել տարօրինակն ու վրդովեցուցիչն այն փաստն է, որ հայությանը ղեկավարելու կոչված անձինք ու կառույցներն իրե՛նք են օտարոտի և կործանարար համաշխարհայնացման տարրերը բերում, պարտադրում հայությանը՝ պճնազարդվելով «եվրոպական ինտեգրացում», «էկումենիզմ» և նման այլ պիտակներով: Բարբառելով ազգայինից՝ նրանք (գրեթե մեծ մասը) հայության համազգային հարցերի լուծումը փնտրում են հայությունից դուրս՝ դաս չառնելով պատմությունից:

Կար ժամանակ, երբ հայոց ղեկավարները «խորհրդակցելու» էին մեկնում Հռոմ, Բյուզանդիոն, Տիզբոն... Վերջին տարիներին սրանց փոխարինել են Վաշինգտոնը, Բրյուսելը, Ստրասբուրգը, Մոսկվան... Այս իմաստով մեզ համար տարբերություն չկա, թե ով է այդ քայլին դիմում: Եթե հենվում են օտար ուժերի վրա, եթե խաղում են կեղծ ժողովրդավարություն, ուրեմն ղեկավարվում են ո՛չ հայկական՝ ապազգայինհակազգային արժեհամակարգերով...

Մենք միանշանակ մերժում ենք այսպիսի՛ «ժողովրդավարությունը», քանի որ դա անհարիր է հայոց հոգեմտակերտվածքին, մեր մարդկային և ազգային ձգտումներին:

Մեր զորությունը ազգային ինքնուրույնության մեջ է, ինքնուրույնություն, որը ո՛չ թերագնահատում է դարերի փորձություններին դիմակայած հայոց արժեհամակարգը, ո՛չ էլ միանշանակ մերժում է այլ արժեհամակարգերի դրական որոշ հատկանիշները: Առաջինի դեպքում մենք կունենանք ստորակայության, երկրորդի դեպքում՝ գերակայության բարդույթներ. երկուսն էլ նույնքան մերժելի են:

ՀՀ-ում ճգնաժամից դուրս գալու ելքը, կարծում ենք, ո՛չ թե անձերի և պաշտոնների փոփոխման, այլ պետականակերտման մտայնության արմատականացման և քաղաքական ասպարեզի առողջացման մեջ է: Քանզի այդ դաշտն զբաղեցնողների մեծամասնությունն օտար արժեհամակարգի մունետիկներ ու ներդնող-պատվաստողներ են, ովքեր շատ հաճախ լավ էլ գիտակցում են դրանց քանդիչ էությունը, սակայն շրջանցում են այն, միայն թե օտար տերերը գոհ մնան «նվիրյալների» աշխատանքից և պատվեն հավուր պատշաճի...

Մեր իրականությունից պետք է մեկընդմիշտ վերանա օտարներին սպասարկող այս ամբողջ «դասակարգը»:

Մեր վերածնունդը կայանալու է հայկական հնագույն արժեհամակարգի վերակենդանացումով, անշուշտ՝ հաշվի առնելով աշխարհի այսօրվա զարգացումները, այլապես կդոփե՛նք տեղում, իսկ դա հղի է հայկական պետության կործանման կամ, առնվազն, նրա գերիշխանության կորստի վտանգով:

Ահա թե ինչու հայկական միջավայրում համակարգային փոփոխությունների միակ ձևը մենք համարում ենք ազգային ինքնուրույն հայեցակարգով առաջնորդվող ուժի ստեղծումը՝ իր առողջ, դարերի փորձություններն արժանապատվորեն հաղթահարած, կենսունակ արժեհամակարգով:

Հասկանալի է, որ նման հոսանքի ուժեղացմանը խոչընդոտելու են թե՛ շահագրգիռ կառույցները, թե՛ օտարներից սնվող բոլոր թափթփուկները, թե՛ մեր պետականության տկարացումն ու քայքայումը երազող օտար ուժերը, ովքեր, նոր Բելի կամ Ներոնի պատմուճան հագած, սուր են բարձրացրել բոլոր ժողովուրդների դեմ: Այդպիսիներին հիշեցնենք անմահ Խաչատուր Աբովյանի խոսքը. ***«Էդ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:***

# «ՀԱՇՏԵՑՈՒՄԻՑ» ԴԵՊԻ «ՄԵՐՁԵՑՈՒՄ»...

2000թ. հոկտեմբերի 27-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում (Մեծ մեջլիս) չորսժամյա մտքերի փոխանակության արդյունքում որոշվեց Երևան գործուղել թուրք գիտնականների մի խումբ՝ պարզաբանելու, իրենց արտահայտությամբ, «ոչ վաղ անցյալին վերաբերող որոշ հարցեր», ավելի որոշակի՝ «հայերի համառությամբ չափազանցված արհեստական պրոբլեմը»:

Թուրքական իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ այս հարցը պետք է լուծեն ոչ թե քաղաքագետները, այլ գիտնականները: Բայց նկատենք, որ եթե հարցը գիտական լիներ, քննարկման առարկա չէր դառնա աշխարհի խորհրդարաններում, և համապատասխան դատապարտող բանաձևեր չէին ընդունի: ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ չունեցող երկիրը, ինչպես նշված է Թուրքիայի ԱԳՆ 2000թ. նոյեմբերի 13-ի հայտարարության մեջ, խրատում է նրան՝ «հաշտվել պատմության հետ և վերջ տալ իր հարևանների նկատմամբ թշնամական քաղաքականությանը»: Ավելին՝ կարճ ժամանակ անց՝ Թուրքիայի արտաքին գերատեսչությունն իր կառավարության քննարկմանը ներկայացրեց **«Հայկական հարցի չեզոքացման»** և **«Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման»** նախագծերը: Համաձայն առաջինի՝ նախատեսվում է «պատմությունը պատմաբաններին թողնելու թեզը» («Միլլիյեթ», 23. 11. 2002): Ըստ երկրորդ նախագծի՝ Թուրքիան իր առջև խնդիր էր դնում Հայոց ցեղասպանության շուրջ ծավալվող բանավեճը խորհրդարաններից փոխադրել գիտաժողովներ («Ջումհուրիեթ», 11. 01. 2001): Թուրքագետ Հակոբ Չաքրյանի կարծիքով՝ **«Թուրքիայի հետ երկխոսության մեջ մտնելու պարագայում, բանավեճը փոխադրելով գիտաժողովներ, Հայաստանը դառնում է Հայոց ցեղասպանության բանաձևերի չեզոքացման անմիջական մասնակիցը»**:


Ա. Միհրանյան

Այս քննարկումներից շատ չանցած՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը կասկածի տակ առավ ՀՀ-ի հետ երկխոսության նպատակահարմարությունը. 2001թ. փետրվարի 21-ին արտաքին հարաբերությունների հանձնաժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչումը դատապարտող օրինագիծ, որով Թուրքիան **«մերժում է պատմականորեն չապացուցված «Հայոց ցեղասպանության» մասին պնդումները և դրանք որակում որպես թշնամական քայլ»**:

Այս շրջանին է վերաբերում Եվրամիության՝ հայ-թուրքական երկխոսություն սկսելու նախաձեռնությունը: Ուշագրավ է Եվրախորհրդարանի 2001թ. նոյեմբերի 15-ի կոչը՝ ուղղված թուրքական կառավարությանն ու Թուրքիայի Ազգային մեծ ժողովին՝ «հրապարակայնորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը»: Դրան նախորդել էին Հայոց ցեղասպանության ճանաչման Ֆրանսիայի Սենատի ընդունած օրենքը և Իտալիայի խորհրդարանի վավերացրած բանաձևը: Այդ օրերին Հայոց ցեղասպանությունը ճանաչել էին նաև Վատիկանում: Ի հակակշիռ եվրոպական երկրներում ծավալվող Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի՝ 2001թ. հուլիսին ԱՄՆ-ը հանդես եկավ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախաձեռնությամբ. ԱՄՆ պետդեպարտամենտը «կյանքի ուղեգիր» տրվեց անչափ տարօրինակ, եթե չասենք զավեշտալի անվանմամբ՝ «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովին» (ԹՀՀՀ), այսինքն՝ հաշտություն զոհի և ցեղասպանություն կատարած ու համառորեն այն չճանաչող դահճի միջև: Այսինքն՝ հաշտեցման խնդիրը դրվում է հենց հայերի՛ առաջ...

Ի դեպ, այս հանձնաժողովի ստեղծումը «Ամերիկայի հայկական համագումար» (ԱՀՀ) կազմակերպությունն անվանեց «առաջընթաց քայլ», իսկ 2001թ. հուլիսի 10-ի ԹՀՀՀ-ի ժնևի հանդիպումը գնահատեց իբրև «միջազգային նշանակալի իրադարձություն»:


Իլթեր Թյուրքմեն

Այս որակումը, գրեթե նույնությամբ, կրկնվեց հիշյալ հանձնաժողովի լուծարման կապակցությամբ նրա նախաձեռնող անդամներից մեկի՝ ՌԴ նախկին նախագահի արտաքին քաղաքական հարցերով խորհրդական, ՌԴ հայերի միության անդամ, քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանի գնահատականում. «...քննարկվել են հարցեր, թե ինչպես է հնարավոր ձևավորել վստահություն երկու ժողովուրդների միջև մշակույթի, գիտության, այլ ասպարեզներում: Այս առումով ԹՀՀՀ աշխատանքն անգնահատելի էր, ունեցավ իր նշանակությունն ու արդյունքը» («Ազգ», 17. 04. 2004):

ԹՀՀՀ գործունեությունը, որ կասկածելի էր նրա ձևավորման առաջին իսկ օրվանից, հասարակության ուշադրության կենտրոնում էր: Հայկական «պատվիրակության» կազմում էին, Ա. Միհրանյանից բացի, ՀՀ ԱԳ նախկին նախարար Ալեքսանդր Արզումանյանը, Սիրիայում ՀՀ նախկին դեսպան, այժմ՝ ԵՊՀ դոցենտ Դավիթ Հովհաննիսյանը, ԱՀՀ տնօրենների խորհրդի նախագահ Վան Գրիգորյանը: Թուրքական կողմը ներկայացնում էին նախկին դեսպան, ներկայումս՝ «Թրքիշ դեյլի նյուզի» մեկնաբան Գյունդուզ Աքթանը, «Բողազիչի» համալսարանի նախկին նախագահ Ուսթյուն Էրգյուդերը, Թուրքիայի ԱԳ նախկին նախարար Իլթեր Թյուրքմենը, Թուրքիայի նախկին ԱԳ փոխնախարար, այժմ Ստամբուլի TESEV կենտրոնի գործադիր տնօրեն Օզդեմ Սանբերկը, Թուրքիայի զինված ուժերի գլխա-վոր շտաբի հետախուզության բաժնի նախկին պետ, պաշտոնաթող գեներալ Շադի Էրգյուվենչը և Վիրջինիայի համալսարանի (ԱՄՆ) հոգեբույժ Վամիկ Վոլքանը: Այսինքն՝ վեցը՝ չորսի դեմ, իսկ քաղաքական տրամաչափե՞րը...


Վան Գրիգորյան

ԹՀՀՀ-ն մի շարք գաղտնի հանդիպումներ է ունեցել ԱՄՆ-ում, Եվրոպայում, Թուրքիայում՝ հայրենական ու սփյուռքահայ մամուլում մշտապես արժանանալով հայ պատմաբանների, ինչպես նաև գիտության և մշակույթի գործիչների քննադատությանը: Այս հանձնաժողովի ստեղծման նպատակների մասին «Վասն Հայության» շաբաթաթերթում ժամանակին Հակոբ Չաքրյանն այսպիսի պարզաբանում է տվել. «Սա ամերիկյան նախաձեռնություն է, իսկ միտումները թուրքական են: Այդ միտումների մասին խոսելու համար պետք չէ վերլուծաբան լինել: Դեռ անցյալ տարվա (այսինքն՝ 2000թ. - Հ. Գ.) նոյեմբերին Թուրքիայի ԱԳՆ-ն մշակել էր «Հայկական հարցի չեզոքացման» նախագիծ.... Այն քննարկվել էր նաև Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդում: Այնտեղ սևով սպիտակի վրա գրված է, որ Թուրքիան ամեն ինչ պետք է անի՝ Հայոց ցեղասպանության բանաձևը եվրոպական երկրների խորհրդարաններից դուրս թողնելու համար:

Ինչպե՞ս: Պատմությունը պատմաբաններին թողնելու թեզին համաշխարհային հնչողություն հաղորդելով: Այս հանձնաժողովի նպատակն է պատրանք ստեղծել, իբր Հայոց ցեղասպանության հարցը փոխանցված է հասցեատերերին, նրանք էլ քննարկում են: Հետևաբար կարիք չկա այս կամ այն երկրի խորհրդարանում քննարկումներ կազմակերպել դրա շուրջ, առավել ևս՝ որոշումներ ընդունել» («Վասն Հայության», թիվ 3, 11. 09. 2001):

«Ազգ» օրաթերթն այս տարվա հունվարի 24-ի համարում տեղեկացրեց, որ Անդրանիկ Միհրանյանը դադարեցնում է իր մասնակցությունը ԹՀՀՀ աշխատանքներին՝ հետևյալ պատճառաբանությամբ: 2003թ. հոկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցած Հայկական համաշխարհային կոնգրեսի (ՀՀԿ) հիմնադիր համագումարը որոշել է 2004թ. մայիսին Երևանում կազմակերպել փորձագետների հանդիպում, որի ընթացքում կձևակերպվի «համահայկական մոտեցում հայ-թուրքական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության, տարածքային և փոխհատուցման հարցերի վերաբերյալ»: **Ապրիլի 14-ին իր «գլխավոր նպատակներին հասած» ԹՀՀՀ-ն հայտարարեց իր լուծարման, այսինքն՝ իր «պատմական առաքելությունը գերազանց» կատարելու մասին**: Հանձնաժողովի հայտարարությունից պարզվում է, որ «ԹՀՀՀ-ն պետք է գործեր մեկ տարի, սակայն իրադարձությունների ընթացքը պահանջեց ավելի երկար ժամանակ՝ իրականացնելու մեր (այսինքն՝ իրենց - Հ. Գ.) նպատակները»: Նույն այս հաղորդագրության մեջ կարդում ենք, որ **ԱՄՆ պետքարտուղարության աջակցությամբ ձևավորված հանձնաժողովն «ավարտեց իր աշխատանքը՝ Թուրքիայի և Հայաստանի կառավարություններին ներկայացնելով հանձնարարականների մի շարք՝ ինչպես բարելավել հայ-թուրքական լարված հարաբերությունները»** («Ազգ», 17. 04. 2004): Իսկ այս «հանձնարարականների» բովանդակությունն առայժմ հայտնի չէ...

ԹՀՀՀ լուծարման մասին «Ազգի» նույն այս հրապարակման մեջ մոսկվաբնակ քաղաքագետը կարևորել է իրենց հանձնաժողովի աշխատանքները. **«ԹՀՀՀ-ն ստեղծեց համապատասխան պայմաններ, որ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, որոնք, անշուշտ, ունեին սերտ կապեր և՛ թուրքական, և՛ հայկական կառավարությունների հետ, հող նախապատրաստեին կառավարական մակարդակով քննարկելու այն հարցերը, որոնք մեծ հետաքրքրություն էին ներկայացնում և՛ Թուրքիայի, և՛ Հայաստանի համար: Հանձնաժողովի շրջանակներում շոշափված հարցերն արձագանք էին գտնում երկու երկրների արտգործնախարարություններում»**:

ՀՀԿ՝ Երևանում ծրագրած հանդիպումը կայացավ մայիսի 6-7-ը՝ «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում» խորագրով: Փորձագետների քսաներկու հոգանոց խմբում ընդգրկված էին նաև ԹՀՀՀ-ում «պատմական առաքելությունը» «հաջողությամբ» կատարած Ա. Միհրանյանն ու Վ. Գրիգորյանը:

Այս անգա՛մ էլ տարօրինակ է գիտագործնական հայտարարված հավաքի խորագիրը: **Հայոց ցեղասպանությունը, որ պարտադրվել է մեզ իբրև ճակատագիր, այսօր քննարկման նյութ է դառնում իբրև «գործոն»՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում, և դա այն դեպքում, երբ ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Թուրքիան ներկայացնում է կոշտ և անընդունելի նախապայմաններ: Իրականում ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների միարժեքորեն մերժումը հայ ժողովրդի անկախ պետականություն ստեղծելու իրավունքի մերժում է:**


Գյունդուզ Աքքան

2004-2009թթ. ՀՀԿ-ի իրականացվելիք աշխատանքային ծրագրում այդ «գործոնի» մասին էր հայտնի իրավաբան-միջազգայնագետ, Մոսկվայի իրավունքի և քաղաքագիտության հայկական հաստատության ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր Յուրի Բարսեղովի զեկուցումը: Աշխարհահռչակ գիտնականն առաջարկում էր Հայոց ցեղասպանության ամբողջ ժամանակաշրջանը բաժանել երկու մասի՝ ա) 1876-1914թթ. և բ) 1915-1923թթ., որը տարակարծությունների առիթ տվեց՝ իր վրա սևեռելով գրեթե բոլոր փորձագետների ուշադրությունը:

Նման տեսակետներին կամ մոտեցումներին գնահատական տալը մեր իրավասությունից դուրս է:

*Համլիկ Գուլակյան*

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԳՈՐԾՈ՞Ն»...

**Զրույց՝ «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործում» գիտագործնական կոնֆերանսի փորձագիտական խմբի անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանի հետ**

**- Գիտաժողովից մոտավորապես մեկ ամիս է անցել, իսկ դա արդեն բավական ժամանակամիջոց է՝ վերլուծելու, գնահատելու այնտեղ ներկայացված թեզերն ու տեսակետները: Սակայն մինչ այդ ցանկալի է լսել Ձեր կարծիքը այս նախաձեռնության մասին: Արդյո՞ք ճիշտ էր ընտրված խորագիրը: Ո՞վ է այն վերնագրել:**

- Մոտավորապես երկու ամիս առաջ գրավոր հրավեր եմ ստացել՝ այդ գիտաժողովին մասնակցելու համար, իսկ նախօրյակին՝ հրավիրատոմս: Վերնագրի նախնական տարբերակում չկար «կարգավորում» բառը: Պարզապես նախատեսվում էր հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող գիտաժողով և, բնականաբար, ես համաձայնեցի մասնակցել, քանի որ այն տեղի էր ունենալու ՀՀ ԳԱԱ-ում:

Առաջին նիստում արդեն իսկ նկատեցի, որ մթնոլորտն անհասկանալի է: Կազմակերպչական առումով բավական թերություններ կային: Ուրախալին միայն այն է, որ ընդգրկված էին ցեղասպանության լավագույն մասնագետները: Ցավոք, ներկա չէր այդ ոլորտի մեր ամենախոշոր մասնագետներից մեկը՝ Վահագն Տատրյանը:

Անկախ ամեն ինչից՝ փորձ է արվել հավաքվել և համատեղ մշակել մեկ ընդհանուր հայեցակարգ ինչպես Հայոց ցեղասպանության, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների «կարգավորման» վերաբերյալ: Այդ «կարգավորումը» կարծես թե հանդես է գալիս ՀՀԿ հովանու ներքո: Կարծում եմ՝ հետագա աշխատանքներում, եթե այդ հանձնախումբը շարունակելու է իր գործունեությունը, պետք է հանի «կարգավորում» բառը և փորձի զուտ գիտական խնդիրներ լուծել:

Հարցը գիտական դաշտ տեղափոխելը մեզ համար անընդունելի է, որովհետև կյանքը ցույց տվեց, որ 2001թ. հուլիսի 10-ից գործելով՝ թուրքերի հետ հաշտեցման, առավել ևս գիտական առնչությունների գնալը հղի է ծանր հետևանքներով: Մեկ անգամ ևս համոզվում ես թուրքերի՝ մեզ ծուղակ գցելու քաղաքական մոտեցմանը: Դա Հայոց ցեղասպանությունը միջազգային ասպարեզում ամենաբարձր՝ խորհրդարանական մակարդակով ճանաչելու հաղթարշավը կանխելու, կասեցնելու նպատակ է հետապնդում և պատահական չէ: 2002-2003թթ. ընթացքում այդ

հանձնաժողովի անդամները համատեղ դիմել էին միջազգային մի դատական ատյանի՝ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին, որպեսզի վերջինս որոշեր, թե արդյո՞ք 1915թ. դեպքերը ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայով որակվում են ցեղասպանություն: Սակայն թուրքական կողմը, առանց ԹՀՀՀ հայ անդամներին տեղեկացնելու, անկասկած՝ վախենալով ոչ թուրքանպաստ որոշումից, այդ ատյանից պահանջել էր այլևս չքննարկել Հայոց ցեղասպանության հարցը՝ փորձելով վիժեցնել բանաձևի ընդունումը:

Այն, որ ԱՄՆ պետդեպարտամենտն էր կազմակերպել այս ամբողջ շղթան, երևաց հիշյալ դատական ատյանի որոշման մեջ, որը փորձում էր բավարարել կողմերի մոտեցումները Հայոց ցեղասպանության վերաբերյալ. մի կողմից փորձում էր ներկայացնել այն որպես ցեղասպանություն՝ խոստովանելով, որ այն համապատասխանում է Կոնվենցիային, մյուս կողմից՝ վերապահումներ կատարում՝ ձգտելով հաճոյանալ թուրքերին: Հայկական կողմը բողոքեց, որ թուրքերը միակողմանի՝ «սեպարատ» տարբերակով փորձել են խնդիրը հանել այդ դատական ատյանի քննարկումից:

ԹՀՀՀ-ն ինքն իրեն դատապարտեց և ինքնալուծարվեց: Նույն այդ հանձնաժողովի անդամներն իրենք էլ համոզվեցին, ըստ երևույթին, որ թուրքական ծուղակի մեջ են հայտնվել: Պարզապես հենց սկզբից անիմաստ էր փորձել հաշտեցնել դահճին և զոհին:

**- Դուք ասացիք, որ ընտրվել են լավագույն մասնագետները: Իսկ ի՞նչ կասեիք այդ հանձնախմբի արտասահմանյան փորձագետների մասին: Հատկապես ուզում եմ խոսեք ԹՀՀՀ անդամների մասին. արդեն իսկ վարկաբեկված հանձնաժողովի ներկայացուցիչները հայտնվել են նաև այստեղ...**

- Ե՛վ Անդրանիկ Միհրանյանի, և՛ Վան Գրիգորյանի հետ առաջին անգամ հանդիպեցի այս գիտաժողովում: Չեմ կարող նրանց մասին կարծիք հայտնել...

**- Իսկ գործունեությա՞ն...**

- Արդեն ասացի, որ ԹՀՀՀ-ում նրանք քանիցս հայտնվել են շատ ծանր վիճակում, խոստովանել են, որ փորձում են դուրս գալ այդ հանձնաժողովից, այս կամ այն հարցի վերաբերյալ իրենց մոտեցումներն ունեն, չեն համերաշխվում թուրքերի հետ, երբևէ չեն զիջել Հայոց ցեղասպանության փաստարկն ընդունելու խնդրում, բայց մյուս կողմից էլ, եթե իրենք նախապես հայտարարում էին, որ այդ հանձնաժողովում աշխատում են՝ նախապայման ընդունելով Հայոց ցեղասպանության իրողության փաստը, կյանքը ցույց տվեց, որ թուրքական կողմը երբևէ համաձայնություն չի տվել գործունեության մեջ առաջնորդվել այն ելակետից, որ տեղի է ունեցել Հայոց ցեղասպանություն: Նրանց մասնակցությունն այլևս ավելորդ էր ԹՀՀՀ-ում:

Ինչ վերաբերում է այս ՀՀԿ-ի հետագա աշխատանքներին և, առավել ևս, այդ երկու անդամների մասնակցությանը, չեմ կարող ասել, թե նրանք ազգադավ գործունեություն են ծավալել, բայց մյուս կողմից՝ նրանց գործունեությունը մեկ անգամ ևս ապացուցեց, որ նման հանձնաժողովում աշխատելը միանգամայն ավելորդ է:

**- Ինչպե՞ս եք գնահատում Յուրի Բարսեղովի տեսակետը՝ Հայոց ցեղասպանության տարեթվի վերաբերյալ: Միջազգայնագետն արտառոց երևալու**

Աշոտ Մելքոնյան

**նպատա՞կ ուներ, թե՞ նրա մոտեցումը մեզ համար անհասկանալի ինչ-որ բան է պարունակում իր մեջ...**

- Այդ կապակցությամբ բուռն քննարկում եղավ հատկապես երկրորդ օրը: Եկանք ընդհանուր հայտարարի: Իմ կարծիքով ի սկզբանե այս պետությունը ցեղասպան պետություն էր բոլոր հպատակ ժողովուրդների համար և, անկախ ամեն ինչից, եթե նույնիսկ չլիներ ցեղասպանություն, հայ էթնիկ տարրը պետք է անհետանար Արևմտյան Հայաստանից:

Տարօրինակ թվաց այն մոտեցումը, որ Բարսեղովը հիմնականում շեշտադրությունը կատարում էր 1894-96թթ. և 300 հազար զոհերի խնդրի վրա՝ պնդելով, որ, եթե այդքան հայ է կոտորվել, բնականաբար, ցեղասպանություն է: Դա այնքան թվաքանակի խնդիր չէ, որքան սպանության դրդապատճառների և նպատակների, այսինքն՝ դա ֆիզիկական բնաջնջման առաջին դրսևորումն էր: Ես ելույթ ունեցա և ասացի, որ մենք կրկնում ենք միմյանց՝ տարբեր վարկածներով: Խնդիրը շատ նուրբ է. հենց որ մեկը մեր հայեցակարգից փորձում է շեղվել, շատ հիվանդագին ենք ընդունում...

**- Ներեցեք, Ձեզ ընդհատում եմ: Աշխարհի բազմաթիվ խորհրդարաններ արդեն դատապարտել են Թուրքիայի իրագործած Հայոց ցեղասպանությունը և, որպես կանոն, նրանց բանաձևերում շեշտված են 1915-1923 թվականները: Կարծում եմ՝ ճիշտ չի լինի, եթե փորձենք նոր տարեթվեր առաջադրել...**

- Անկասկած: Պետք է ցույց տալ, որ շղթան այդպիսին է, որի մեջ 1894-96թթ. մի օղակ են՝ որպես առանձին դրսևորում, իսկ 1915-1916թթ. ցեղասպանությունը դասական էր... Փոխել շեշտադրությունը դեպի 1894-1896թթ., կթուլացնի 1915թ. խնդիրը:

**- Անդրադառնանք Ա. Միհրանյանի գնահատականներից մեկին՝ ԹՀՀՀ աշխատանքներին: Նա ոչ միայն դրական է գնահատել իրենց գործունեությունը, այլև հանձնաժողովի աշխատանքներում ընդգծել է նաև նվաճումներ: Ինչի՞ մասին է խոսքը:**

- Բացարձակապես ոչ մի նվաճում չեմ տեսնում: Արդեն ասացի, որ մեկ անգամ ևս մենք համոզվեցինք, որ հայտնվել ենք թուրքական ծուղակում: Այսինքն՝ դասեր քաղելու իմաստով միակ դրականը դա էր (եթե կարելի է այն դրական անվանել): Իրականում ոչ մի առաջընթաց չեմ տեսնում: Եվ պատահական չէ, որ այս հանձնաժողովի՝ դրսից թելադրված գործունեությանը զուգընթաց, օրինակ, Թուրքիայի ԱԳ նախարար Իսմայիլ Ջեմն անընդհատ, պետական մակարդակով, նախապայմաններ էր առաջադրում մեզ (նույն այդ ԹՀՀՀ-ին զուգահեռ), հայ-թուրքական հարաբերությունները մերձեցնելու ուղղությամբ՝ հրաժարվել Հայոց ցեղասպանությունից, պահանջատիրությունից, զորքերը դուրս բերել Արցախից և կրավորական վարքագիծ դրսևորել Թուրքիայի նկատմամբ, մի բան, որ, ցավոք, մեզանում նկատում եմ: Մե՛նք պետք է լինենք այստեղ պահանջատերն ու թելադրողը և ոչ թե մեզ պարտադրեն ինչ-որ նախապայմաններ:

**- Երևանյան գիտաժողովի նպատակը, Ա. Միհրանյանի արտահայտությամբ, «հայ-թուրքական հարաբերությունների, Հայոց ցեղասպանության տարածքային և փոխհատուցման վերաբերյալ համահայկական մոտեցում ձևավորելն» էր: Ի՞նչ քայլեր կատարվեցին այդ ուղղությամբ:**

- Չէի ասի, թե այդ հարցը լրջորեն քննարկվեց այստեղ, բայց բոլորի մոտեցումը միանշանակ էր՝ պետք է լինի հատուցում: Մենք այս մասին չենք խոսում. առաջինը ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցն է մեզ համար: Որպես պատմաբան ես

ավելի քան համոզված եմ, որ պետք է լինի հատուցում: Պատմությունը տեսել է դրա նախադեպը՝ Հոլոքոստը և հատուցումը: Մեր պարագայում հատուցումը, նյութականից բացի, անկասկած պետք է լինի նաև տարածքային. մենք հայրենիք կորցրինք: Նման քննարկում խորությամբ չեղավ:

**- Հրեաների ողջակիզումը տեղի ունեցավ ո՛չ նրանց հայրենիքում և, ընդ որում, որքան էլ Գերմանիան հատուցեց և շարունակում է հատուցել, միևնույնն է, հրեաները չեն ներում նրանց: Ինչպե՞ս: Նման գիտաժողովներն, առհասարակ, ընդունում են հայտարարություն, դիմում կամ այլ փաստաթուղթ: Սա էլ իր տեսակի մեջ բացառություն չէր, սակայն նախապես պատրաստված հռչակագիրը չընդունվեց: Ինչո՞ւ:**

- Ես նույնպես դեմ արտահայտվեցի այդ հռչակագրին: Ի՞նչ հռչակագրի մասին է խոսքը, երբ շոշափելի արդյունքներ չարձանագրվեցին: Մենք «կարգավորո՞ւմ» ենք հայ-թուրքական հարաբերությունները: Ինչպե՞ս կարող ենք մենք «կարգավորել» հայ-թուրքական հարաբերությունները, եթե, կրկնում եմ, պահանջատերը և նախապայման դնողը թուրքական կողմն է, առավել ևս՝ սահման բացողը: Առաջարկություն եղավ զուտ հայտարարություն անել, տեղեկացնել, որ մայիսի 6-7-ը ՀՀԿ հովանու ներքո տեղի ունեցավ նման համաժողով, որի արդյունքում հայ մասնագետները, օտար գործընկերների հետ միասին, իրենց պատրաստակամությունը հայտնեցին նպաստել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, ցեղասպանության հետևանքների վերացման գործընթացին: Նկատի է առնվում առաջին հերթին պահանջատիրությունը և հատուցումը:

**- Փորձագետների այս խումբն ինչպե՞ս է շարունակելու իր հետագա աշխատանքը, որտե՞ղ:**

- Հայտարարվեց, որ հետագայում տեղի կունենան նման այլ հանդիպումներ: Կարծում եմ՝ մինչ հաջորդ հանդիպումը պետք է հստակորեն մշակենք մեր մոտեցումները, թե իսկապե՞ս ճիշտ ուղու վրա ենք, որ կրկին մի ինչ-որ ծուղակի մեջ չհայտնվենք: «Փորձագետ» բառը փոխարինվեց «մասնագետով»: Ներկաների մեջ կային պատմաբաններ, քաղաքագետներ, իրավաբաններ, այսինքն՝ մասնագետներ: Իմ կարծիքով փորձագետն առավել վերաբերում է քաղաքական դաշտին, իսկ Ա. Միհրանյանից բացի քաղաքական դաշտի գործիչ այնտեղ չկար: Ես այս հարցը չեմ ուզում տեսնել՝ գիտական և քաղաքական հարթությունները նույն նժարի վրա դնելով:

**- Անշնորհակալ գործ է գուշակություն անելը: Ինչպե՞ս կկատարի իր պարտականությունը ՀՀԿ-ն, ցույց կտա ժամանակը: Հստակ է մի բան՝ փորձագետների խմբում կան պատվախնդիր մարդիկ, ովքեր ակնկալվող արդյունքին չհասնելու պարագայում, համոզված եմ, կհեռանան այդ նախաձեռնությունից, սակայն ցանկալի կլիներ հակառակը, որպեսզի խումբը համալրվեր արժանապատիվ մասնագետներով...**

**Անդրադառնանք Ձեր հիշատակած ծուղակին՝ հայ-թուրքական երկխոսության թեմային: Թուրքիայի դիրքորոշումն անփոփոխ է ՀՀ-ի նկատմամբ: ՀՀ պատմաբանները տարակարծիք են հայ-թուրքական երկխոսություններին մասնակցելու հարցում: Վերջերս «Երկիր» շաբաթաթերթին տված հարցազրույցում (23-29. 04. 2004) այն գիտնականների դիրքորոշումը, ովքեր «հակված չեն գնալ բանավեճի» Դուք գնահատել եք ճիշտ: Սակայն գաղտնիք չէ, որ նաև այդ հանդիպումների շնորհիվ Թուրքիայում սկսեցին բարձրաձայն խոսել Հայոց ցեղասպանության մասին՝ թեկուզ ժխտողական տեսանկյունից: Կարելի է ասել՝ այս թեմայից վերացվել է «տաբուն»: Իսկ դա չի՞ նշանակում, արդյոք, որ չպետք է բաց թողնել ոչ մի երկխոսություն՝ անկախ այն բանից, թե ով է կազմակերպիչը, իհարկե, խիստ կարևորելով հայ պատվիրակության ճիշտ կազմ ընտրելու հանգամանքը:**

- Անկասկած, գիտական առնչությունները պետք են: Մանավանդ, որ օտարները կարող են մեղադրել մեզ, որ իբր մենք չունենք ծանրակշիռ և համոզիչ փաստարկներ՝ Հայոց ցեղասպանության իրողության վերաբերյալ: Ես ավելի շատ մտահոգված եմ այս խնդրով: Բայց մյուս կողմից շատ ավելի վտանգավոր է, երբ ցեղասպանության ճանաչման հաղթարշավը շարունակվում է. Շվեյցարիան՝ 2003թ. դեկտեմբերին, Կանադան՝ վերջերս ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը, և համոզված եմ, որ այս շղթան հասնելու է մինչև ՄԱԿ և ԱՄՆ-ի Կոնգրես: 2002 թվականին երկու անգամ խնդիրը սառեցրին. առաջինը՝ Եվրամիությունում, որ նախապայման էր դնում Թուրքիայի առջև՝ Եվրամիություն մտնելու համար, երկրորդը՝ Գերմանիայում: Բունդեսթագը որոշում կայացրեց՝ քանի որ ԹՀՀՀ-ն գործում է, շատ տրամաբանական է թուրքերի այն պնդումը, որ առայժմ պետք է սառեցնել նման քննարկումները, և հարցը հանվեց օրակարգից: Համոզված եմ, որ եթե հետագայում ևս նման «հանդիպումները» շարունակվեն, այդ գործընթացը կարող է դուրս գալ միջազգային ասպարեզից:

Անդրադառնամ հարցի գիտական կողմին: Մենք բազմաթիվ լեզուներով հրատարակել և շարունակում ենք հրատարակել ժողովածուներ: Առ այսօր թուրքական կողմից չենք նկատել այս կամ այն ժողովածուն վիճարկելու փորձեր: Օրինակ՝ գերմանական, ավստրոհունգարական, ֆրանսիական և այլ վավերագրերը հրապարակելով՝ մենք արտահայտել ենք մեր գրավոր կարծիքը: Վիեննայում առաջիկայում նախատեսվող հանդիպմանը, Լավրենտի Բարսեղյանի և իմ մասնակցությամբ, նախապայման էինք դրել, որ, եթե թուրքերը ցեղասպանության խնդիրը նկատեն որպես կատարված իրողություն, մենք կշարունակենք գիտական բանավեճը՝ նախապես ներկայացնելով մեր փաստարկները Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այդ օրերին մամուլում հաղորդագրություն եղավ՝ իբր մենք համաձայնություն ենք տվել հանդիպել թուրքերի հետ՝ առանց նախապայմանի:

(Նման մի գիտաժողով էլ նախատեսվում է հոկտեմբերին: Ես իմ նախապայմանն արդեն ուղարկել եմ Վենետիկ, այն է՝ եթե թուրքերից որևէ մեկը համարձակվի վիճարկել ցեղասպանության փաստը, ես չեմ մասնակցի: Պատասխանեցին, որ իրենք չեն կարող գիտական ծանրակշիռ միջավայրում փակել այս կամ այն մարդու բերանը՝ նկատի ունենալով թուրքական կողմին: Պատասխան հեռագրով հրաժարվեցի մասնակցել նման գիտաժողովի): Քանի որ այսօր թուրք հանրությունը հիվանդ է և բացարձակապես պատրաստ չէ անգամ կես քայլ կատարելու՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ, միանգամայն հասկանալի է նաև մեր հասարակության հակազդեցությունը: Մեր հասարակությունը ճիշտ է համարում, որ նման առնչությունները գիտական մակարդակով ուղղակի թշնամու պատրաստած ծուղակ են:

**- Վիեննայի համալսարանի նախաձեռնած հանդիպման մասին Դուք խոսել եք նաև «Երկիր» թերթին տված Ձեր արդեն հիշատակածս հարցազրույցում, սակայն, հստակ չէ, մասնակցելո՞ւ եք այդ հանդիպմանը, թե՞ ոչ: Եթե մեկնելու եք, ի՞նչ փաստերով, եթե ոչ՝ ինչո՞ւ:**

- Մեր համաձայնությունը նախապես եղել է փաստաթղթեր ուղարկելու վերաբերյալ: Եթե թուրքական կողմը պնդում է (մանավանդ մամուլում արդեն մի քանի թուրքական հաղորդագրություններ են եղել), որ իրենք գնում են Հայոց ցեղասպանության խնդիրը վիճարկելու, նման պայմաններում, իմ կարծիքով, մեր մասնակցությունն ավելորդ է: Այսինքն՝ նրանք չեն ընդունել մեր նախապայմանը, իսկ դա նշանակում է՝ մենք Վիեննա գնալու մտադրություն բացարձակապես չունենք:

**- ԹՀՀՀ լուծարման մասին հաղոր-**

**դագրությանը զուգահեռ «Ազգը» (17. 04. 2004) ներկայացրել էր Ա. Միհրանյանի որոշ գնահատականներ՝ այդ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ: Այսպես՝ վերջինս կարծիք է հայտնել, որ հնարավոր է՝ «հայ-թուրքական հարաբերությունները կտրվեն հայ-ադրբեջանական հարաբերություններից», այսինքն՝ «Ղարաբաղի հարցը զատվի հայ-թուրքական հարաբերություններից», որ «հնարավոր է այս տարի հայ-թուրքական սահմանը բացվի»: Թուրքիայում նո՞ւյնպես այդքան շատ են հոլովում ճանապարհների բացման հարցը, Թուրքիան իրո՞ք շահագրգռված է բացել սահմանը, թե՞ դա էլ է թելադրվում դրսից, ինչպես «հաշտեցումը» կամ այսօրվա «կարգավորումը»...**

- Շատ հետաքրքիր հարց է, որի մեջ ինչ-որ իմաստով նաև պատասխանն ընկալեցի: Հայ-թուրքական սահմանի մասին ենք խոսում, բայց դրա բացողը մենք չենք: Բացողը թուրքերն են:

Ա. Միհրանյանը խոսում է այն մասին, որ կան ադրբեջանական խնդիրները թուրքականից զատելու միտումներ: Նման բան չեմ տեսնում, որովհետև դրանք փոխպայմանավորված են: Դա հայկական կողմի ցանկությունն է, և գնահատում եմ որպես կրավորական վարքագիծ և՛ թուրքական սահմանը բացելու իմաստով, և՛ Հայոց ցեղասպանության խնդիրներից հրաժարվելու: Այս հարցում մե՛նք պետք է լինենք թելադրողը: Ես ամենևին էլ խանդավառված չեմ հայ-թուրքական սահմանի բացմամբ: Համոզված եմ, որ մեր տընտեսությունն այնքան հզոր չէ այսօր, որ կարողանա դիմանալ թուրքական էժանագին և անորակ ապրանքների «հեղեղին». մենք կհայտնվենք շատ ծանր վիճակում, և ամենամոտ ապագայում ՀՀ-ում կստեղծվի համատեղ կամ զուտ թուրքական ձեռնարկությունների մի ամբողջ շղթա, որից չենք կարողանա ձերբազատվել այլևս: Եվ ամենակարևորը, գաղտնիք չէ, որ հայ-թուրքական սահմանը բացելով՝ բացում ենք պանթուրքիզմի ճանապարհը դեպի Ադրբեջան և Միջին Ասիա: Այդ սահմանը մեզ պետք չէ: ՀՀ-ն, իր անկախությունից ի վեր ստեղծված դժվարին պայմաններում, ցույց է տվել, որ կենսունակ օրգանիզմ է, որ կարողացել է դիմակայել այս դաժան շրջափակմանը: Իսկ եթե վաղը կամ մյուս օրը, նորմալ պայմաններում, բացվի սահմանը, մենք ավելի լուրջ տնտեսական հաջողություններ կարձանագրենք: Սահմանի խնդիրը մեր խնդիրը չէ: Մենք այն չպետք է պայմանավորենք մեզնով: Թող իրենք «տապակվեն» այդ յուղի մեջ:

**- Եվս մեկ հարց, որ կրկին ածանցվում է ԹՀՀՀ հայտարարությունից. 2004թ. աշնանն անցկացնել «Թուրք-հայկական մերձեցման և հաշտեցման մեծ համաժողով», որը, հավանաբար, տեղի կունենա Հարվարդում (ԱՄՆ)՝ Հակամարտությունների լուծման կենտրոնում: Ա. Միհրանյանը տեղեկացրել է. «Այդ կոնֆերանսում քննարկվելու է հարցերի լայն շրջանակ՝ հայ-թուրքական հարաբերություններ, իրադրությունն Անդրկովկասում, մեծ տերությունների մոտեցումներն ու շահերը տարածաշրջանում: Սա զուտ ԹՀՀՀ միջոցառում չէ»: Այդ դեպքում ի՞նչ է:**

- Չի բացառվում, որ դա այդ հանձնաժողովի գործունեության մեկ այլ տարբերակ է: Եվրոպական երկրներից ամեն ամիս հրավերներ ենք ստանում՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական խնդիրներին նվիրված հայ, թուրք և եվրոպացի մասնագետների զանազան հավաքների, գիտաժողովների և այլն: Անկասկած, ցեղասպանությունն ուղղակիորեն նշում են՝ հասկանալով, որ դա ամենամեծ ողբերգությունը և ամենանուրբ խնդիրն է հայերիս համար, անպայմանորեն գիտեն, որ հայ-թուրքական քաղաքական հարաբերություններում այսպես թե այնպես այդ խնդիրը գալու է մեջտեղ, այդ պատճառով էլ փորձում են մեր պատմաբաններին ներքաշել այդ դաշտ: Կարծում եմ՝ ԹՀՀՀ-ի շնորհիվ մենք համոզվեցինք, որ դա թուրքական հերթական ծուղակ է:

**- Նրանք արդեն «մերձեցման» մասին են խոսում...**

- Ի՞նչ «մերձեցման» կամ «հաշտեցման» մասին է խոսքը: Չի՛ կարող նման բան լինել:

Թաներ Աքչամ

Թուրքական հիվանդ հասարակությունն այսօր մեղայականի ոչ մի լուրջ հայտ չի ներկայացնում: Թաներ Աքչամը կամ մի քանի այլ անձինք, նույնիսկ թուրքական ծագմամբ հազարավոր մարդկանց ստորագրությունները, ոչինչ չեն ասում: Այսօր թուրքական կողմը սարսափելի կարծր դիրքերի վրա է կանգնած և կես քայլ անգամ զիջում չի անելու այս հարցում: Մենք պետք է մեր բարձրության վրա գտնվենք, արժանապատվորեն ներկայանանք աշխարհին: Պատահական չէ, որ հրեաները «պատրաստ չեն» Գերմանիայի կանցլերին ընդունել Թել Ավիվում, ստիպում են կրկին նստել օդանավ և վերադառնալ այնտեղ, որտեղից եկել է: Մենք պետք է շատ ավելի արժանապատիվ պահենք մեզ:

Եթե Ա. Միհրանյանը ներկայացնում է ռուսական կողմը, իսկ ԱՄՆ-ի պետդեպարտամենտը շահագրգռված է և ֆինանսական օգնություն է ցույց տալիս, շատ անհանգստացած եմ՝ արդյո՞ք ԱՄՆ-ՌԴ ընդհանուր պայմանավորվածության արդյունքում են փորձեր արվում կազմակերպել նման գիտաժողովներ:

**- Մյուս կողմից էլ չի բացառվում, որ ամերիկյան այս գործունեությունը նպատակ ունի Ռուսաստանին դուրս մղել մեր տարածաշրջանից...**

- Նման մտավախություն, իրոք, կա: Բայց ինձ զարմացնում է ՌԴ-ի ճանաչված գործիչների մասնակցությունն այս գործընթացին: Արդյո՞ք այս հարցում ռուսական կողմն ինչ-որ զիջում չի կատարել, ա՛յն Ռուսաստանը, որ 1995թ. ապրիլի 18-ին Հայոց ցեղասպանության դատապարտման իր բանաձևում գործածում է Արևմտյան Հայաստան աշխարհագրական հասկացությունը (այդ առումով նա միակ երկիրն է):

Սա շատ կարևոր հանգամանք է՝ հատուցման խնդիրն արծարծելու իմաստով, իսկ մենք դրա վրա, չգիտես ինչու, ուշադրություն չենք դարձնում: Գիտաժողովում ես դա հատուկ ընդգծեցի: Մնացած բանաձևերը՝ նույնիսկ Ֆրանսիայի Սենատի օրենքը, անդեմ են: Եթե ՌԴ քաղաքականությունը նույնպես փոխվել է և իր հայազգի քաղաքացիներով ԱՄՆ պետդեպարտամենտի հետ մեկտեղ նույն երգն է երգում, դա շատ վտանգավոր է:

**- Դժվար թե ՌԴ քաղաքականությունը փոխված լինի: ԹՀՀՀ ստեղծման կապակցությամբ «Նեզավիսիմայա գազետան» ժամանակին գրեց. «Հայ-թուրքական տանգո՝ ամերիկյան երաժշտությամբ»:**

- Տա Աստված՝ այդպես լինի: Հայոց ցեղասպանության հարցում ՌԴ-ի հայանպաստ կեցվածքը մեզ շատ է անհրաժեշտ, և ուրախ կլինեմ, եթե սխալված լինեմ:

*Համլիկ Գուլակյան*

**Հ. Գ.- Քաղաքականության մեջ չգրված օրենքներ կան: Դրանցից մեկը վերաբերում է քաղաքական նախաձեռնությունների դերին, որը դժվար է գերագնահատել: Միջազգային ուժերին այն հնարավորություն է ընձեռում ոչ միայն կանխորոշել տվյալ տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումների ընթացքն ու ճակատագիրը, այլև վերահսկել այնտեղ տեղի ունեցող հակամարտությունները և ուղղորդել դրանք իրենց համար ցանկալի հուն՝ դրանով իսկ վերահսկողության տակ առնելով հակամարտության մեջ գտնվող երկրների հարաբերությունները, ինչն այնքան ակնառու է հայ-թուրքական հարաբերությունների *կարգավորման* ամերիկյան նախաձեռնության պարագայում...**

# «1915-ի ՄԱՍԻՆ ՄՏԱԾԵԼ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱՆԿԻՆԷ»

**Փրոֆ. Հալիլ Պէրքթայ Կ'ուզէ, Որ Հայկական Ցեղասպանութեան Մասին Թուրքիոյ Պետական Տեսակէտը Վերատեսութեան Ենթարկուի**

*Սապանճը Համալսարանի դասախօս, պատմաբան Փրոֆ. Հալիլ Պէրքթայ մէկն է այն հազուագիւտ թուրք պատմաբաններէն, որ իւրայատուկ անկախ տեսակէտ ունի Հայկական Ցեղասպանութեան մասին եւ միշտ կը պնդէ, թէ իրականութիւնները Թուրքիոյ պաշտօնական տեսակէտով ցոյց տրուածէն շատ տարբեր են: Ան միշտ կողմնակից եղած է, որ Թուրքիա փրկուի Օսմանեան շրջանի այս ցաւալի հարցին ժառանգորդը հանդիսանալէ ու աւելի առարկայական կերպով պէտք է նայի այս հարցին, քանի որ ո՛չ մէկը պիտի կարենայ զինքը հաւատացնել, որ տեղահանութեան ընթացքին մահացած կէս միլիոն հայերը մեռած են ինքնաբերաբար:*

*Այսօրուան «Ռատիքալ»-ին մէջ Թարքը Ըշքը նոր հարցազրոյց մը ունի Փրոֆ. Հալիլ Պէրքթայի հետ, որ երկար լռութենէ մը ետք դարձեալ կ'անդրադառնայ Հայկական Ցեղասպանութեան հարցին եւ կը յայտնէ այն կարծիքը, թէ հայոց տեղահանութիւնը ցեղասպանութիւն մը չէ, այլ էթնիք մաքրագործում մըն է եւ սակայն արդէն այդ իմաստով կրնայ նկատուիլ ցեղասպանութեան մը մանրանկարը: Հալիլ Պէրքթայ բնաւ կասկած չունի նաեւ, որ տեղահանութեան ընթացքին կատարուած սպանութիւնները կատարուած են իշխանութիւններու կողմէ կազմակերպուած ծրագրի մը համաձայն:*

**- Թուրքիոյ մէջ կ'ըսուի, որ Հայկական Հարցը պէտք է յանձնուի պատմաբաններուն: Բայց հաշտ աչքով ալ չեն դիտուիր այն պատմաբանները, որոնք պաշտօնական տեսակէտէն տարբեր կերպ կը խօսին: Ասիկա հակազդեցութիւն մը չէ՞:**

- Ես ալ կը հաւատամ, որ ճիշդ որոշում է հարցը յանձնել պատմաբաններուն: Քաղաքական շրջանակներ պէտք չէ արգելք ըլլան գիտական որոնումներու: Բոլորովին դէմ եմ, որ Թուրքիոյ մէջ պետական կազմակերպութիւններ յառաջ քշեն օրէնքներ, որոնց համաձայն ըսուի՝ «սապէս կրնաք խօսիլ, սապէս չէք կրնար խօսիլ»: Կողմնակից չեմ նաեւ, որ երրորդ երկիրներու գործավարներ ուրիշ երկրի մը պատմութեան մասին վճիռներ արձակեն՝ «ասիկա ճիշդ է, ասիկա սխալ է» ըսելով: Թուրք պաշտօնական տեսակէտի պաշտպանները, երբ նեղ կացութեան մատնուեցան միջազգային բեմահարթակներու վրայ, փրկութիւնը գտան «այս նիւթը պատմաբաններուն յանձնենք» ըսելով: Բայց այսպէս ըսողները ընդհանրապէս չեն արտօներ, որ պատմաբանները ազատօրէն արտայայտեն իրենց մտածումները: Անոնց ուզածը, հարցը փոխանցել է պետութեան փաստաբանութիւնը ընող պիւրոքրաթ պատմաբաններու:

**- Ո՞վ է 1915-ի ողբերգութեան պատասխանատուն:**

- Թուրքիա, պաշտօնական գետնի վրայ, ինքզինք Օսմանցիներու եւ Իթթիհատականներու շարունակութիւնը նըկատելով, տէր կը կանգնի «ամբողջական» պատմութեան: Ես այս երեւոյթը կը նկատեմ թուրք ազգայնապաշտութեան մէկ սխալը: Այս հաւաքականութիւնը իր մէջ ունի նաեւ իր Սուսուրլուքի կամ Հիզպուլլահի գործադիրները, ունի իր ոճրագործները: Ես թուրք եմ: Այդ մարդիկն ալ թուրք են: Բայց ես չեմ կրնար զիս անոնց հետ նոյնացնել պարզապէս անոր համար, որ անոնք թուրք են: Դժբախտաբար ազգայնապաշտութիւնը այնպիսի գաղափարախօսութիւն մըն է, որ մէկը ինքզինք կրնայ ոճրագործներու հետ նոյնացնել պարզապէս անոր համար, որ այդ ոճրագործները թուրք են: Եթէ նմանութիւն մը հաստատենք 1915-ի աղէտին հետ, պիտի ըսենք, որ այդ աղէտին պատասխանատուները այդ շրջանի «Սուսուրլուքճը» կամ «Հիզպուլլահճը»ներն էին:

Հալիլ Բերքթայ

**- Հայկական տեղահանութիւնը «ցեղասպանութի՞ւն» մըն է:**

- Ես պիտի չըսեմ, թէ ցեղասպանութիւն է կամ չէ: Եթէ ցեղասպանութիւն է ըսեմ, հայերը պիտի ծափահարեն, թուրքերը պիտի բարկանան, եթէ չէ ըսեմ, թուրքերը պիտի ծափահարեն, հայերը պիտի բարկանան: Կողմերէն մէկը իր ուրախութեան հետեւանքով, միւսը իր զայրոյթին հետեւանքով պիտի չուզէ մտիկ ընել մնացեալը:

«Ցեղասպանութիւն» բառը այսօր այլեւս պատմաբանի մը վերլուծումի գործիքը ըլլալէ դադրեցաւ եւ դարձաւ իրաւական չափանիշ մը: Եթէ «ցեղասպանութիւն» է ըսուի՝ այն ատեն միջազգային յանցագործութեան հաշուեցուցակ մը պիտի ելլէ դիմացդ: Իսկ եթէ «ցեղասպանութիւն» չէ ըսուի, Թուրքիա իր օձիքը պիտի ազատէ այդ պատժամիջոցէն: Ուստի այստեղ կը տիրապետէ ո՛չ թէ պատմաբանի տրամաբանութիւնը, այլ փաստաբանի տրամաբանութիւնը:

1915-ի հայկական ողբերգութիւնը կարեւոր օղակ մըն է 19-րդ դարու վայրագ ազգայնապաշտութեան եւ 1940-ի հրէական ցեղասպանութեան միջեւ: Այս իմաստով տեսակ մը «փրօթօ ցեղասպանութիւն» կրնայ նկատուիլ: Բայց ես այս բառը կը գործածեմ ո՛չ թէ որպէս իրաւական չափանիշ: Ինծի համար ասիկա պատմագիտական վերլուծումի չափանիշ մըն է:

**- Որքա՞ն է հայերու կորուստը: Պետութիւնը 50.000 մեռեալներու մասին կը խօսի:**

- Վերջին 2-3 տարիներու ընթացքին պետական պաշտօնական տեսակէտը ամէն տեսակ չափէ դուրս ելաւ, քանի որ անցած էր ծայրահեղ ազգայնապաշտներու ձեռքը: Վաստակաւոր (կենսաթոշակի անցած - խմբ.) աւագ դեսպան Քեամուրան Կիւրիւն իր գիրքին մէջ խօսած է 400-450 հազար հոգիի մահուան մասին: Ես տեսակցած եմ Արտաքին Գործոց Նախարարութեան բազմաթիւ լիազօրներու հետ: Անձնական խօսակցութիւններու ընթացքին բոլորն ալ կը հաւատան, որ 400-450 հազար հայեր մեռած են: Ո՛չ մէկը աւելի ցած թիւ մը կու տայ: Բայց որոշ շրջանակներ, շարունակ պզտիկցնելով հայերու կորուստին թիւը, այդ թիւը կը ջանան հասցնել 20-25 հազարի նման ծիծաղելի թիւի մը: «Պրիթանիքա» համայնագիտարանը կը խօսի 600 հազար մեռեալներու մասին: Թուրք պաշտօնական տեսակէտն ալ մինչեւ մօտիկ անցեալը ընդունած էր 400-450 հազար թիւը:

**- Ինչպէ՞ս պատահեցան այս մահերը:**

- 400-600 հազար մարդ արկածով չի մեռնիր, հիւանդութեամբ ալ չի մեռնիր: Այսքան մեծ թիւով մարդիկ կը մեռնին, եթէ սպանութեան հետեւողական քաղաքականութիւն մը առկայ է: Պաշտօնական տեսակէտի պաշտպանները կ'ուզեն, որ հաւատանք հետեւեալ սենարիոյին: Զինուորական ջոկատ մը հայկական շարասիւն մը կ'առաջնորդէ: Այդ միջոցին հայերու թշնամի զինեալ ցեղախումբեր կը յարձակին շարասիւնին վրայ: Հրամանատարը, որ կարող եւ պատուաւոր զինուորական մըն է, կ'ըսէ. «Այս մարդոց կեանքը ինծի յանձնուած է, մարդու ձեռք դպցնել չեմ տար, ես այս շարասիւնը հոգիիս պէս կը պաշտպանեմ: Պետութիւնը այսպէս հրահանգած է ինծի: Նախ զիս եւ զինուորներս կը սպաննեն, յետոյ ինչ կ'ուզեն կ'ընեն»: Բոլոր հրամանատարներն ալ իրենց կարգին նոյն ձեւով կը մտածեն: Բայց ի՞նչ մեղք, որ չարամիտ նախայարձակ-

ները պարտութեան կը մատնեն զանոնք, եւ, ոտնակոխ ընելով զինուորին հեղինակութիւնը, հայերը կը ջարդեն: Այս պատճառաւ ալ կը մահանան ո՛չ թէ 3-5 հոգի, այլ 100 հազար հայեր: Ես այսպիսի պատմութեան մը կրնա՞մ հաւատալ:

- **Այս դէպքերը առաջուց ծրագրուա՞ծ էին այսպէս:**

- Այո՛, ծրագրուած էին: Այդ շրջանին պետութիւնը կը կառավարուէր Էնվեր, Թալաաթ եւ Ճէմալ Փաշայէ բաղկացեալ եռեակի կողմէ, որ որեւէ հաշիւ չէր ներկայացներ խորհրդարանին: Անոնք հրահանգեցին, որ հայերը տեղահանուին, առանց բացառութեան, պարզապէս անոր համար որ հայ էին: Ասիկա ցեղասպանութիւն չէ, բայց էքնիք մաքրագործում է: Որովհետեւ ամբողջ էքնիք եւ կրօնական խմբակի մը անդամները իրենց երկրէն եւ ինչքերէն բռնի ուժով կը հեռացնէք պարզապէս անոր համար, որ հայ են: Տեղահանութեան հրահանգները պաշտօնական խողովակներով հաղորդուեցան ամէն կողմ, բայց միաժամանակ շարժման կոչուեցան ապօրէն կազմակերպութիւններ, ինչպիսին էին «Թէշքիլաթը Մահսուսա» կոչուած խմբակները: Ասոնց տրուեցան այնպիսի հրահանգներ, որոնց գրաւոր պատճէնները հաւանաբար երբեք պիտի չյայտնաբերուին: Այդ խմբակներուն գաղտնօրէն հրահանգուեցաւ կազմակերպել մահաւան ջոկատներ եւ յարձակիլ հայկական կարաւաններու վրայ, զանոնք սպաննել հետեւողական կերպով:

- **Ի՞նչ եղան տեղահանուածներուն ապրանքները:**

- Հայերուն ապրանքները բռնագրաւուեցան, իսկ իրենք աքսորուեցան դէպի անապատ եւ մահ: Որոշ տեղեր յարաբերաբար պատուաւոր Օսմանցի պիւրօքրաթներ հայերու ապրանքը ծախելով՝ փոխարժէքները կրնան հասցուցած ըլլալ իրենց տէրերուն: Անշուշտ այդ ապրանքներն ալ իրենց արժէքո՞վ վաճառուեցան, թէ ոչ, յափշտակողին ձեռքը մնացին. այդ ալ տարբեր հարց է:

- **Մենք, այս հարցը չտեսնել ձեւացնելով, յանցագործութեան մեղսակից չե՞նք դառնար:**

- Անշուշտ կը դառնանք: Հարցն այն չէ, թէ Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադիրները պատասխանատո՞ւ էին այս խնդրին մէջ: Հարցն այն է, որ հետզհետէ զգացական յանցագործութեան մը մէջ կը մխրճուինք, քանի կ'ուրանանք անցեալը: Ահաւասիկ ճիշդ այս կէտին վրայ է, որ բարոյական պատասխանատուութիւն մը ծնունդ կ'առնէ: Մուսթաֆա Քէմալը որեւէ կապ չունէր 1915-ի աղէտին հետ: Ան 1920-ական թուականներուն յայտարարութեան մը ընթացքին յայտնած է, թէ ինչպէս կ'ատէ այս դէպքերուն յանցագործները եւ թէ ինք որքան ծանր յանցանք մը կը նկատէ պատահածը: Իսկ այսօր պնդել, թէ 1915-ի պատահարները ընդունելով մենք շատ ծանր հետեւանքներու հետ դէմ յանդիման կրնանք մնալ, կը նշանակէ խոստովանիլ, թէ արդէն գիտենք, թէ անցեալին մէջ ի՞նչ պատահած է հայերու դէմ:

- **Թուրքիոյ պետական արխիւներուն մէջ կարելի՞ է գտնել այդ շրջանի վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները:**

- Թրքական արխիւներուն մէջ առնուազն երկու անգամ կատարուեցան հետեւողական մաքրագործումներ: Առաջին մաքրագործումը կատարուեցաւ 1918-ին՝ Իթթիհատականներու կողմէ, երբ անոնք պատերազմը կորսնցուցին: 1980-ին ողբացեալ Թուրկութ Էօզալ յառաջդիմական որոշումով մը հրահանգեց, որ արգելքները վերնան պետական արխիւներուն վրայէն: Բայց արգելքներուն վերացումէն առաջ, վաստակաշատ (կենսաթոշակի անցած - խմբ.) զօրավարներէ եւ բարձրաստիճան դիւանագէտներէ բաղկացեալ յանձնաժողով մը մտաւ արխիւներէն ներս եւ իրագործեց մաքրագործում մը, որ առնուազն երկրորդն է:

- **Որպէս հաւաքականութիւն ներողութիւն խնդրելու պարտք մը ունի՞նք հայերու նկատմամբ:**

- Պէտք ունինք ո՛չ թէ ներողութիւն խնդրելու, այլ այս նիւթին շուրջ խօսելու արգելք հանդիսացող բոլոր խոչընդոտները վերացնելու: Ես պաշտօնական շրջանակներէն ուրիշ ոչի՛նչ կը խնդրեմ, եթէ ոչ յարգանք՝ ազատ եւ անկախ բանավէճի նկատմամբ: Վոլթէր նշանաւոր խօսք մը ունի. «Բոլորովին դէմ եմ ձեր մտածումներուն: Բայց մինչեւ վերջ կը պաշտպանեմ ձեր մտածումի ազատութեան իրաւունքը»: Ի՞նչ մեղք, որ թուրք հաւաքականութիւնը տակաւին չէ կրցած իւրացնել ժողովրդավարութեան այս ամենապարզ սկզբունքը:

***«Մարմարա» օրաթերթ,***
**Ստամբուլ, 27 ապրիլի, 2004թ.**

# ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



*Արտեմ Օհանջանյան, պրոֆեսոր,*
*ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր*
**Վիեննա (Ավստրիա)**

1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, առանց վաղեմության ժամկետի, ցեղասպանություն է համարում մարդկության դեմ կատարված այն հանցագործությունները, որոնք համապատասխանում են հիշյալ փաստաթղթի դրույթներին: Կոնվենցիան «էքնիկ զտումը» որակում է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ: Այսպես՝ 1944-45թթ. տեղի ունեցած հրեական ողբերգությունը Կոնվենցիայով ճանաչվեց ցեղասպանություն: Սակայն հայերի և հրեաների ցեղասպանությունների միջև կա մի էական տարբերություն: Գերմանացիները գրավոր որոշում չունեն՝ հրեաների կոտորածներ իրականացնելու համար (եթե նման փաստաթուղթ եղած լիներ, հրեաներն անպայման կհայտնաբերեին), իսկ ավստրոհունգարական արխիվների վավերագրերը հավաստում են, որ ժամանակին Բարձր Դռան բարձրաստիճան շատ թուրքեր խոստովանել են Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինիին, ինչպես նաև մի շարք հյուպատոսների ու դիվանագետների, որ իրենց կառավարության վարած կոտորածների քաղաքականությունը հայերի նկատմամբ սխալ էր: Այս մասին է վկայում հենց այն փաստը, որ Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո թուրքական դատարանը երիտթուրքերի պարագլուխներին դատապարտեց մահվան, սակայն նրանք փախան երկրից և փրկվեցին սեփական դատարանի վճռի կատար ածումից: Ժամանակին Էնվերն ինքը Յոհաննես Լեփսիուսին խոստովանել է, որ կատարվածի պատասխանատվությունը վերցնում է իր վրա:

Եթե հայերի զանգվածային սպանությունները կատարվել են թուրքական կառավարության կանխորոշած ծրագրով, ըստ 1948թ. Կոնվենցիայի՝ կատարվածը ցեղասպանություն է: Բերքթայը դա որակում է իբրև «էքնիկ զտում», «ցեղասպանության մանրակերտ»: Ցեղասպանությունը մանրակերտ չունի: Եթե նա չի ուզում հրապարակավ ասել, որ տեղի ունեցածը ցեղասպանություն է, պարզապես դրա հնարավորությունը չունի, այսինքն՝ չի կարող դրսևորել Թուրքիայի պաշտոնական տեսակետից տարբեր դիրքորոշում: «Էքնիկ զտում» արտահայտությամբ Բերքթայն արդեն իսկ խոստովանում է, որ կատարվածը ցեղասպանություն է: Նա այն եզակի թուրք պատմաբաններից է, ովքեր ընդունում են Հայոց ցեղասպանությունը՝ առանց անունը տալու: Թուրքիայի իշխանությունները չեն արտոնում իրենց պատմաբաններին անաչառ կարծիք հայտնել անցյալ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում կատարված մեծ ոճրի վերաբերյալ: Ավելին՝ ի լուր աշխարհի հայտարարում են, թե իրենց արխիվները բաց են: Բայց երբ գերմանացի պատմաբան, Հայոց ցեղասպանության մասնագետ, դոկտոր Հիլմար Կայզերը փորձել է ուսումնասիրել թուրքական արխիվները, նրան խստագույնս արգելել են այնտեղ շարունակել աշխատանքը:

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՒՄ Է ԱՆՓՈՓՈԽ

## ՓՈՓՈԽՎՈՒՄ Է ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

Հակոբ Չաքրյան
Պատ. գիտ. թեկնածու

Վերջերս թուրքական «Ռադիքալ» թերթին հարցազրույց է տվել Ստամբուլի «Սաբանջը» համալսարանի դասախոս, պրոֆ. Հալիլ Բերքթայը: Հայոց ցեղասպանության հարցերին նվիրված այս հարցազրույցը ուշագրավ է այն առումով, որ Բերքթայը, «1915-ի մասին նոր մոտեցում ցուցաբերելու» հավակնությամբ «անաչառության» փորձեր կատարելիս, խիստ քննադատում է Թուրքիայի պաշտոնական դիրքորոշումը «Հայկական հարցում» և թուրքական քաղաքական շրջանակներին մեղադրում «գիտական որոնումներն արգելելու» մեջ:

Հայոց ցեղասպանության վերաբերյալ Բերքթայի տեսակետները՝ անկախ դրանց ժխտողական բնույթից, այնուամենայնիվ, անսովոր են թուրքական իրականության համար: Թեև նա ցեղասպանության հետևանքով սպանված 1.5 միլիոն հայերի թիվը կրճատում և հասցնում է 400-450 հազարի, բայց և այնպես «1915թ. հայկական ողբերգությունը» կարևոր օղակ է համարում «19-րդ դարի վայրագ ազգայնապաշտության և 1940-ի հրեական Հոլոքոստի» միջև, հայերի կոտորածները պայմանավորում է «սպանության հետևողական քաղաքականությամբ», նշում է, որ հայերի տեղահանությունը ծրագրված էր. նրանց տեղահանել են առանց բացառության՝ ընդգծելով՝ «նրա համար, որ հայ էին», և չի ժխտում հետևողական սպանություններ կատարելու համար հայկական քարավանների վրա հարձակվելու «Թեշքիլաթը Մահսուսային» տրված գաղտնի հրահանգների փաստը: Ավելին՝ նա ընդունում է, որ թուրքերը, անտեսելով հանցագործությունը, դառնում են հանցագործության մեղսակից, և տեղահանությունը բնութագրում է որպես «էթնիկ մաքրագործում»:

Հայերի հետևողականորեն սպանությունը, նրանց, առանց բացառության, համատարած տեղահանությունը, տեղահանության պետականորեն ծրագրվածությունը և դրա՝ էթնիկ մաքրագործման նպատակին ծառայեցումը մարդկության դեմ ուղղված հանցագործություններ են և ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով որակվում են որպես ցեղասպանություն: Այլ կերպ ասած՝ Բերքթայի ձևակերպումներն անուղղակի հաստատում են Հայոց ցեղասպանության փաստը, իսկ ինքը փաստին ուղղակի հակադրվում է: Ուրեմն այդ ձևակերպումների հիմքում Բերքթայի նկրտումներն են:

Որո՞նք են դրանք: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականության հիմնավորման միջոց էր կեղծարարությունը: Սակայն ցեղասպանության միջազգային ճանաչման նախաձեռնությունները սպառեցին կեղծարարության հնարավորությունները: Այս պայմաններում Թուրքիան չգտավ այլ ելք, քան՝ վերանայել դրա ձևերը: Վերանայման հարցում նրան օգնության հասան օտարերկրյա թուրքագետները:

Նրանցից մեկը՝ ֆրանսիացի Ռոբեր Մանթրանը, թուրքական «Թեմփո» շաբաթաթերթի 1998թ. հունիսի 25-ի համարում թուրքերին առաջարկեց հայկական կոտորածներին հակադրել, այսպես կոչված, թուրքական կոտորածները՝ ասելով. «Չպետք է հերքել կոտորածների իրողությունը, այլ շեշտել, որ կոտորածներ եղան, բայց թուրքերն էլ կոտորվեցին»:

Մանթրանին միացավ իսրայելցի պատմաբան Իցիահ Ֆրեյդմանը: Նա իր հերթին «Աքսիյոն» հանդեսի 1998թ. հունիսի 20-ի համարում, ընդգծելով հայերի նկատմամբ անձնական հակակրանքը, թուրքերի ուշադրությունը հրավիրեց վերջիններիս «կատարած» կոտորածների վրա, ապա և բառացի ավելացրեց. «Հայերը դիմեցին բռնությունների և կատարեցին չարագործություններ իրենց թուրք հարևանների նկատմամբ, որոնց հետ դարեր շարունակ խաղաղ գոյակցել էին: Էնվեր փաշան, վերագրավելով երկրի հայաբնակ շրջանները, ինչ խոսք, վրեժ լուծեց: Բայց և այնպես՝ հայերին չեն մորթել»:

1998թ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը դարձավ Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի առաջնահերթ խնդիրներից մեկը: Ֆրանսիայի գլխավորությամբ դրան արձագանքեցին եվրոպական մի շարք երկրներ, որոնց վերջերս միացավ նաև Կանադան: Արձագանքը հանգեցրեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ծավալմանը: Այսպիսով՝ կասկածի տակ դրվեց «թուրքերի նկատմամբ հայերի իրագործած եղեռնին» առնչվող փաստերի վրա հենվելու արդյունավետությունը: Միաժամանակ պարզորոշ երևաց, որ նպատակին չեն ծառայում ֆրանսիացի թուրքագետի առաջարկությունն ու իսրայելցի պատմաբանի խորհուրդը...

Ճանաչման գործընթացի ծավալման կասեցումը, Թուրքիայի տեսանկյունից, ենթադրում էր Հայոց ցեղասպանության հարցը դուրս բերել երրորդ երկրների խորհրդարանների օրակարգից, հանձնել հայ և թուրք պատմաբանների քննարկմանը: Թերևս այդ առումով պատահական չէր «պատմությունը պատմաբանների հայեցողությանը թողնելու» թուրքական թեզի մշակումը: Ուրեմն՝ առավել ևս չեն կարող պատահական լինել «1915-ի մասին» Հալիլ Բերքթայի «անաչառության» մտավարժանքներից բխող նոր մոտեցումները, որքան էլ դրանք անսովոր լինեն թուրքական իրականության համար:

Ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանությունը ժխտելիս, նաև հայկական կոտորածները ժխտելու դեպքում, անհիմաստ կդառնան ցեղասպանության հարցի շուրջ հայ և թուրք պատմաբանների քննարկումները: Դա խիստ կսահմանափակի հարցը վիճարկման ոլորտ ներքաշելու Թուրքիայի հնարավորությունները՝ «պատմությունը պատմաբանների հայեցողությանը թողնելու» թուրքական պետական թեզի ձախողման անխուսափելի հետևանքներով: Ահա թե ինչու Բերքթայն ընդունում է հայերի տեղահանությունը, այդ ընթացքում կատարված հետևողական սպանությունները՝ դրանց նպատակամղվածությամբ հանդերձ, նույնիսկ «պրոտո ցեղասպանության» հետևություն է անում, սակայն «հայերի տեղահանությունը ցեղասպանությո՞ւն է» հարցին պատասխանում է. «Ես չեմ ասում, թե ցեղասպանություն է, ոչ էլ կասեմ, որ ցեղասպանություն չէ»:

Այլ կերպ ասած՝ Հալիլ Բերքթայը Մեծ Եղեռնի հարցում քննադատում է Թուրքիայի պաշտոնական տեսակետը, որպեսզի ի վիճակի լինի պաշտպանել «պատմությունը պատմաբանների հայեցողությանը թողնելու» թուրքական պետական թեզը՝ նպաստելու համար Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի կասեցմանը:

Չմոռանանք, որ Թուրքիայում նախկին քաղբանտարկյալները, մինչ դասախոսական աշխատանքի հրավիրվելը, պատվեր կատարելով, պետք է արդարացնեն պետական կառույցների հույսերը: Բերքթայը, որպես նախկին քաղբանտարկյալ, նախկինում միաժամանակ մառիստ է եղել, իսկ «Սաբանջը» համալսարանը, որտեղ նա այժմ դասավանդում է, Թուրքիայի ամենաէլիտար համալսարաններից է: Այս ամենը ցույց է տալիս, որ Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողականությունը մնում է անփոփոխ, փոփոխության են ենթարկվում թուրքական կեղծարարության ձևերը:

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ**

# «ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ»

Ադրբեջանն ապշեցրեց բոլորին: Եվրախորհրդի խորհրդարանականների վեհաժողովում (ԵԽԽՎ) քվեարկության ժամանակ վեց ադրբեջանցիների՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության (ՀԿԹՀ) օգտին տված ձայները չէին փոխելու քվեարկության արդյունքը, սակայն փոխօգնության շատ լավ օրինակ կլիներ, ինչպես դրսևորեցին իրենց կիպրացի հույները, հույները, սերբերը, հայերն ու ռուսները՝ ղարաբաղյան հարցում: Սակայն Թուրքիան Ղարաբաղյան հակամարտության հարցում՝ Ադրբեջանին օգնում է առանց նախապայմանների, իսկ ադրբեջանցիները մեզ համար ԵԽԽՎ-ում իրենց վեց ձայնն ափսոսացին: Ռուսներն էլ Անվտանգության խորհրդում կտրեցին ՀԿԹՀ ճանապարհը:

Նախագահ Իլհամ Ալիևը նույնպես իր խոսքը դրժեց: Երբ Թուրքիա էր եկել, ասաց, որ հանրաքվեում թուրքերի դրական պատասխանի դեպքում, կճանաչեն Հյուսիսային Կիպրոսը: Եթե Իլհամ Ալիևի փոխարեն նրա լուսահոգի հայրը լիներ, կասեր. «Հյուսիսային Կիպրոսի համար կանենք հնարավոր ամեն ինչ», համոզված, որ ռուս-հունական ուղղափառ փոխօգնությունը թույլ չի տա, որ Անվտանգության խորհրդից Հյուսիսային Կիպրոսի ճանաչմանը նպաստող որոշում դուրս սպրդի:

Եթե լուսահոգի էբուլֆեզ Էլչիբեյը լիներ, ապա կաներ եթե ոչ իրատեսական, գոնե իդեալիստական քայլ՝ Հյուսիսային Կիպրոսը ճանաչելու ուղղությամբ, նվազագույնը՝ առաջին ինքնաթիռը կիջեցներ այնտեղ: Իսկ եթե լիներ Մուսաֆաթ Կուսակցության առաջնորդ Իսա Գամբարովը, նա հաստատակամորեն ձայնը կտար Հյուսիսային Կիպրոսի օգտին: Իլհամ Ալիևը զուրկ է վերոնշյալ հատկանիշներից:

Կարծում եմ, որ Ղարաբաղյան հարցը լուծելու համար, Եվրոպային դուր գալու և Ռուսաստանին էլ մեղմելու նպատակով, նա ցանկացավ «չերևալ Թուրքիայի հետ սիամական երկվորյակի նման», չնայած Թուրքիայում ասել էր. «Կճանաչեմ Կիպրոսը»:

Երկու քայլերից և ոչ մեկը միտված չէ «հավասարակշռություն» ստեղծելուն: «Թյուրքական աշխարհից» Հյուսիսային Կիպրոսի օգտին այդպես էլ ձայն դուրս չեկավ... Սա բնական է: Որովհետև դեռ 20-րդ դարի առաջին քառորդում պարզ դարձավ, որ թյուրքիստների «Թյուրքական աշխարհը» և իսլամիստների «Մահմեդական աշխարհը» իրականության մեջ գոյություն չունեն: Պատերազմներով ու դիվանագիտական սկանդալներով էլ երևաց, որ չկա նաև «քաղաքակիրթ աշխարհ»:

Այսօր նույնիսկ կառույցներով լի Եվրոպայում ամեն մեկն իր կարծիքն է առաջ քաշում: Իսկ թյուրքական ու մահմեդական կոչված տարածքներում էլ չկա նույնիսկ ընդհանուր կառույց՝ ինտեգրացումը դյուրացնելու համար: Արաբների համար առաջնայինը Պաղեստինն է, թուրքերի համար՝ Հյուսիսային Կիպրոսը, ադրբեջանցիների համար՝ Ղարաբաղը: Իսկ միջինասիացիները բավական հեռու են, որպեսզի սուր կերպով ցավակցեն: Ամեն մեկի համար առաջնայինն իր երկրի խնդիրն է: Թուրքիան, իհարկե, պետք է նախազգուշացնի Ալիևի վարչակարգին, հիշեցնի, որ իր միակ անկեղծ բարեկամը Թուրքիան է... Սակայն Իլհամ Ալիևի վարչակարգի վրա բարկանալով՝ Հայաստանի սահմանը բացելը Թուրքիայի համար «սազական» չի լինի:

Ադրբեջանը մեզ համար միայն «եղբայր» չէ, միևնույն ժամանակ նաև ռազմավարական Կովկաս է, նավթ... Գուցե ավելի օգտակար կլինի, երկարաժամկետ կտրվածքով, Սովետների փլուզմամբ ժայթքած հույզերի համաձայնեցումը դեպքերին և ավելի իրատեսական քաղաքականություն իրականացնելը:

***Թահա Աքյոլ***
**«Միլլիյեթ» օրաթերթ,**
**Թուրքիա, Մայիսի 1, 2004թ.**

**Ֆիքրեթ էրթան**
**«Զաման», 3 հունիսի, 2004թ.**

# «ԹՈՒՐՔԻԱ-ԻՍՐԱՅԵԼ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՄԻՋԱՆՑՔԸ»

Թուրք-իսրայելական հարաբերություններում ամենակարևորը տնտեսական ու ռազմական հարաբերություններն են: Թե որքան են կարևոր ռազմական հարաբերությունները, բավական է միայն աչքի անցկացնել այն զենքերի ցուցակը, որոնք Թուրքիան մտածում է գնել Իսրայելից: ANAMS «խելացի» հրթիռներ, LIGHTNING գիշերային թռիչքային համակարգեր, էլեկտրոնային պատերազմական տեսախցիկներ, ինքնաղեկավարվող փոքր ինքնաթիռներ և գերժամանակակից այլ տեխնոլոգիաներով հագեցած արտադրանքից կազմված և 800 միլիոն դոլար արժողությամբ փաթեթն այժմ սպասում է էրդողանի հավանությանը:

Տնտեսական կողմը, բնականաբար, կախված է զարգացող երկկողմանի առևտրական ու արդյունաբերական հարաբերություններից: Այժմ սրանց ավելացել է էներգետիկ ոլորտը:

Իսրայելի էներգետիկայի ու ենթակառույցների նախարար Յոզեֆ Պարիցկու՝ անցյալ շաբաթ Անկարա կատարած այցի արդյունքում «Զոռլու» էներգետիկ խումբը Իսրայելի ԴՈՐԱԴ էներգետիկ ընկերության հետ պայմանագիր է ստորագրել՝ Իսրայելում բնական գազի սպասարկման երեք կայան կառուցելու վերաբերյալ:

25 միլիոն դոլար արժողությամբ այս նախագիծը Թուրքիայի մասնավոր սեկտորի համար շատ մեծ կարևորություն ունի: Բացի այդ՝ համոզված ենք, որ այս նախագիծն առաջիկայում ճանապարհ է բացելու մեկ այլ մեծ էներգետիկ նախագծի համար: Խոսքը Թուրքիա-Իսրայել էներգետիկ միջանցքի մասին է, որին օժանդակում են իսրայելցի նախարար Յոզեֆ Պատրիցկին և (Թուրքիայի - խմբ.) էներգետիկայի ու բնական պաշարների նախարար Հիլմի Գյուլերը:

Թե՛ Թուրքիան և թե՛ Իսրայելը դրական են նայում ստորգետնյա էներգետիկ միջանցքին, որը Միջերկրական ծովի հատակով անմշակ նավթ, բնական գազ ու էլեկտրաէներգիա է հասցնելու Իսրայել:

Մինչ Թուրքիան և Իսրայելը կսկսեն այս միջանցքի աշխատանքները՝ ռուսական «Գազպրոմի» (աշխարհի ամենամեծ ընկերությունը) նախագահ Ալեքսեյ Միլլերն այս շաբաթ Իսրայելի պաշտոնյաների հետ բանակցություններ է սկսել թե՛ այս միջանցքի, թե՛ Իսրայելում կառուցվելիք վերերկրյա բնական գազի խողովակաշարի վերաբերյալ:

Հայտնի է, որ «Գազպրոմը» Թուրքիայի գործընկերն է «Երկնագույն հոսք» նախագծում և ապահովում է Թուրքիայի՝ բնական գազի պահանջի մեծ մասը: Կարելի է ենթադրել, որ «Գազպրոմը» ծրագրում է այստեղից մինչև Միջերկրական ծով վերգետնյա, այնտեղից էլ ստորգետնյա խողովակաշարով կապ հաստատել Իսրայելի հետ: Հավանաբար այս նախագծում կընդգրկվի նաև Եգիպտոսը:



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# Ð ² Ü ¸ Æäàôø

Կոստանդնուպոլիսը շնչահեղձ էր լինում օգոստոսյան շոգից:

Կոստանդնուպոլիսը լցվել էր Բոսֆորի ջրերը, որ մի քիչ շունչ քաշի: Վերջալույսի շողերով ողողված ալիքների վրա կարապի նազանքով ճոճվում էր «Արմենիա» ջերմանավը:

- Դեռ երկու ժամ կա մինչև ջերմանավի մեկնելը, ես ուզում եմ մի քիչ էլ քայլել,- նավամատույցում խմբված զբոսաշրջիկներին դիմեց պատկառելի արտաքինով մի տղամարդ և քայլերն ուղղեց դեպի փոքրիկ հրապարակը:

- Զգույշ, թրքուհիները գլխահան չանեն,- կատակեց աղջիկներից մեկն ու ավելացրեց,- շատ չուշանաս, առանց քեզ կտխրենք:

Պրոֆեսորը դեռ չէր հասել հրապարակի ջրավազանին, երբ թերթի կրպակի անկյունից լսվեց նվաղած մի ձայն.

- Ալլահի՛ սիրուն, պարո՛ն, գոնե դուք մաքրել տվեք ձեր կոշիկները: Առավոտից ոչ մի ղուրուշ չեմ վաստակել:

Պրոֆեսորը շրջվեց: 75-ին մոտ, հարցական նշան հիշեցնող մի ծերուկ էր կանչողը, որն ասես կոշիկ մաքրելու ինքնաշեն սարքի մի մասնիկը լիներ:

Պրոֆեսորը նայեց ծերուկին, ապա՝ մաքրությունից փայլող կոշիկներին, վեր քաշեց ուսերը և ուզում էր շարունակել ճանապարհը, երբ ծերուկը նորից աղերսեց.

- Ալլահի՛ սիրուն, պարո՛ն, խղճացե՛ք ծերուկիս: Նստեցե՛ք, գոնե ձեր անդրավարտիքի փոշին սրբեմ:

Այնքան աղերսանք կար նրա ձայնի մեջ, որ պրոֆեսորն ակամա նստեց աթոռին ու ոտքը մեքենայաբար մեկնեց ծերունուն.

- Իտալացի եք երևում, պարո՛ն: Երևի առաջին անգամ եք Պոլսում,- կարմիր ներկը քսելով կոշիկներին՝ հարցրեց ծերունին ու նայեց հաճախորդին:

Ծերուկի աջ քունքից մինչև բերանի անկյունը հասնող սպին ցնցեց պրոֆեսորին: Նրա մարմնով մի սարսուռ անցավ: Շատ ծանոթ դեմք է: Որտե՞ղ եմ տեսել... Աստված իմ, մի՞թե նա է... Ո՛չ, չի կարող պատահել:

Ուժերի գերագույն լարումով պրոֆեսորը տիրապետեց իրեն և, փորփրելով հիշողությունը, սկսեց ավելի ուշադիր զննել ծերուկին:

Խարխլված, հարցական նշան հիշեցնող ծերունին շշից դուրս թռած կախարդական ջինի պես դարձավ մի հաղթանդամ թուրք ասկյար, ջրակալած աչքերը լցվեցին արյամբ, իսկ աջ ձեռքի սրվակը փոխվեց կեռ յաթաղանի ու ծայրից սկսեց արյուն ծորալ: Հետո տարիների հեռուներից լսեց արյան լճի մեջ գալարվող մոր ճիչն ու վերջին հորդորը.

- Փախի՛ր, զավա՛կս... Փախի՛ր, Արա՜մ...

Ու մինչ դահիճը կողոպտում էր մեռած մոր զարդեղենը, ինքը փախավ:

Պրոֆեսորն ասես երազի մեջ լիներ. շփեց սառը քրտինքով պատած ճակատը ու նորից նայեց ծերուկին:

Դարձյալ սպին... Ո՛չ, Արամն այդ սպին մոռանալ չէր կարող... Սպին ցրեց նրա կասկածանքը: Ո՛չ, երազ չէ, իր առջև հարցական նշանի պես ցցված ծերուկը երբեմնի Հեյդար բեկն է՝ իրենց գյուղի դահիճը:

Իսկ ծերուկը դժգոհ տոնով շարունակեց.

- Ձեր երկրի մասին տղաս լավ բաներ է գրում: Հինգ տարի եղավ, որ այնտեղ է: Ղարիբ է: Չորս երեխաներին գցել է վզիս ու գնացել: Մեզ մոտ գործազրկություն է: Ալլահն այլևս քաղցր աչքով չի նայում ինձ: Խռովել է, չգիտեմ ո՞ր մեղքիս համար: Ղարիբությունը ծանր բան է: Պարոնը հո ղարիբ զավակ չունի՞:

- Ունե՛մ, այն էլ մեկ ու կես միլիոն. աշխարհի բոլոր ծայրերում կհանդիպես իմ զավակներին, ծերո՛ւկ...

Խոզանակը ասես մեխվեց կոշիկի վրա, ծերուկը կարմրած թաթով նախ սրբեց քրտնած ճակատը, ապա, ճպճպացնելով ջրակալած աչքերը, մի քանի վայրկյան շեշտակի նայեց պրոֆեսորին ու ծիծաղի պես մի բան սահեցնելով շրթունքներից, ասաց.

- Կատակասեր մարդ եք երևում, պարո՛ն,- ասաց ծերունկն ու ավելացրեց,- խնդրեմ, ձեր կոշիկներն այնպես են փայլում, ասես խանութից հենց նոր գնած լինեք:

Պրոֆեսորը հազիվ զսպելով իրեն, զզվանքով նայեց նրան, վճարելով վարձը՝ վեր կացավ, մի քանի քայլ չհեռացած՝ նորից ետ եկավ: Նստեց աթոռին և, աջ ոտքը մեկնելով ծերունուն, հրամայեց.

- Նորի՛ց մաքրիր կոշիկներս:

Ծերուկը խխունջի նման քաշվեց իր պատյանի մեջ ու ջրակալած աչքերը հառեց պրոֆեսորին: Վերջինս նրանց մեջ սարսափ տեսավ:

- Նորի՛ց մաքրիր կոշիկներս, ծերո՛ւկ: Կվճարեմ կրկնակի:

Ծերուկը դողդողալով ձեռքն առավ խոզանակն ու սկսեց հենց այնպես քսել կոշիկներին ու քթի տակ փնթփնթալ:

- Ի՞նչ տարօրինակ մարդ եք, պարո՛ն, ես ձեզ չեմ հասկանում:

Ծերուկն արդեն երրորդ անգամ էր մաքրում պրոֆեսորի կոշիկները, իսկ նա գերագույն հաճույքով նայում էր քրտինքի մեջ կորած իր դահճին, որի մոմի պես թափանցիկ մատները հոգնությունից հազիվ էին կարողանում բռնել խոզանակը: Նա շնչահեղձ էր լինում: Սեխ հիշեցնող լերկ գանգից քրտինքի նոր առվակներ էին հոսում դեպի մութ ակնախորշերը: Իսկ պրոֆեսորն այդ պահին ասես մարմարակերտ հուշարձան լիներ, մարմարի պես սառն ու անզգա: Դեմքի ոչ մի մկանը չէր շարժվում: Անթարթ նայում էր դահճին ու կրկնում.

- Սրբի՛ր կոշիկներս, ծերո՛ւկ... Մե՛կ էլ... Այդպե՛ս է քո ալլահի կամքը: Ցավում եմ միայն, որ մեկ զույգ կոշիկ ունեմ և ոչ թե մեկ ու կես միլիոն: Ամեն ինչ կտայի քո ալլահին, ծերո՛ւկ, եթե կարողանար գտնել ու բերել իմ ցանկացած մեկ ու կես միլիոն զույգ կոշիկները, և ես նայեի, թե ինչպես ես դու մաքրում գաղթի ճամփաներում քրքրված, արյունոտված ու ցեխոտված կոշիկները...

- Ալլահի՛ սիրուն, պարո՛ն, դուք ինձ սպանեցիք, եթե դեն նետելու դրամ ունեք, ողորմացե՛ք ծերուկիս. տանը հիվանդ կին և քաղցած չորս թոռներ ունեմ:

- Քաղցած երեխանե՞ր, ասում ես... Լսի՛ր, ծերո՛ւկ, դու երբևէ տեսե՞լ ես քաղցած երեխա: Ասա՛, տեսե՞լ ես...

Պրոֆեսորի առջև մեխված հարցական նշանը երերաց ու փլվեց փայլող կոշիկների առաջ, բայց մի վայրկյան անց կոբրայի նման ուղիղ կանգնեց պոչի վրա և, տափակ գլուխը հորիզոնական պահած, սկսեց ճոճվել պրոֆեսորի աչքի առջև:

- Հա՞յ ես...

- Ճանաչեցի՞ր... հիշո՞ւմ ես: Ես ապրեցի, ապրում եմ ու պիտի ապրեմ: **Հային չե՛ս սպանի, Հեյդար բեկ:**

Օձի տափակ գլուխը շարունակում էր ճոճվել պրոֆեսորի աչքերի առջև: Նորից անատամ բերանից մի թույլ ֆշշոց լսվեց:

- Ես կատարում էի ալլահի կամքը, բայց չգիտեմ ինչո՞ւ նա իր քաջ զինվորին օր ծերության թշվառության մեջ նետեց: Եթե չլինեին քաղցած թոռներս, ես վաղուց...

Միտքը չավարտած՝ ծեր կոբրան հնձած խոտի պես ծալվեց: Պրոֆեսորը նողկանքով նայեց իր ոտքերի առջև գալարվող կծիկին, վեր կացավ տեղից, գրպանից հանեց մնացած թուրքական ողջ դրամը և նետեց ծերուկին:

- Վերցրո՛ւ, թշվառակա՛ն, ես չեմ ուզում, որ աշխարհում քաղցած երեխաներ լինեն, թեկուզ իմ դահճինը...

Պրոֆեսորը մեկ անգամ էլ նողկանքով նայեց իր ոտքերի տակ սողացող մարդուկին և քայլերն ուղղեց նավամատույց, ուր վերջալույսի ցողերով ողողված ջրերի վրա կարապի նազանքով օրորվում էր «Արմենիա» շոգենավը:

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

2004թ. ապրիլի 18-20-ը Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ) Վաշինգտոնում կազմակերպել էր «Ազգային խորհրդաժողով և ճաշկերույթ» (National Conference and Banquet 2004) միջոցառումը՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) և Հայաստանյայց Առաքելական սուրբ եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևմտյան և արևելյան թեմերի հովանավորությամբ:

ԱՄՆ-ի տարբեր նահանգներից խորհրդաժողովին մասնակցում էր շուրջ 300 մարդ: Առաջին օրը՝ ապրիլի 18-ին, Վաշինգտոնի Ազգային տաճարում տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներ և մի հրեա ռաբբի, կատարեցին հոգեհանգստի արարողություն՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի (այս միջոցառման մասին տեղեկացվել էր նաև եկեղեցիների համաշխարհային խորհրդի ինտերնետային կայքում):

Նույն օրը Քենեդու անվան արվեստի կենտրոնում տեղի ունեցավ խորհրդաժողովի հանդիսավոր բացումը:

Խորհրդաժողովն սկսվեց ապրիլի 19-ի առավոտյան: ԱՀՀ խոսնակ Ռոս Վարդյանի ելույթը հաջորդ օրը Կոնգրես այցելության մասին էր: Տարբեր նահանգներից եկած պատվիրակները Կոնգրեսում հանդիպելու էին ԱՄՆ-ի պետական աշխատողների, այդ թվում՝ նահանգային ներկայացուցիչների և սենատորների հետ: Ներկայացվելու էր չորս հիմնախնդիր՝ ա) ԱՄՆ-ի՝ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններին տրամադրվելիք ռազմական օգնության հավասարակշռության պահպանման անհրաժեշտությունը, բ) օգնություն ՀՀ-ին, գ) ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև մշտական, բնականոն առևտրի հաստատում, դ) Հայոց ցեղասպանության ճանաչում:

Համաձայն առաջինի՝ նախատեսվում էր աջակցել հանրապետականներ Միչ Մքքոնելին և Ջո Նոլենբերգին: Երկրորդի պարագայում՝ ստորագրել նամակ, որը պահանջում է ՀՀ-ին տրամադրել առնվազն 75 միլիոն ամերիկյան դոլարի օգնություն: Երրորդ հիմնախնդրի շրջանակում խորհրդաժողովում հյուրընկալված պետքարտուղարության բարձրաստիճան աշխատակից էլիզաբեթ Ջոնսը հայտնեց, որ ինչպես Ներկայացուցիչների պալատի H.R. 528 և Սենատի S. 1557 օրինագծերի ընդունման դեպքում էր, Բուշի վարչակարգը ևս ի

ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Արման Կիրակոսյանի հետ

վերջո կստորագրի դրանք: Վերջին՝ չորրորդ հիմնախնդիրն առաջադրում էր նամակ՝ ուղղված ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշին, որով պահանջվում է ապրիլ 24-ի ամենամյա ելույթում օգտագործել «ցեղասպանություն» արտահայտությունը (ի դեպ, նամակն ստորագրելու վերջնաժամկետը համընկնում էր Կոնգրես այցելելու օրվան):

Մի պահ՝ խորհրդաժողովից

Խորհրդաժողովի բարձրաստիճան հյուրերի թվում կարելի էր առանձնացնել ԱՄՆ պետքարտուղարի խորհրդական էլիզաբեթ Ջոնսին, որը, ի պատասխան Թուրքիայում և Ադրբեջանում հայկական մշակութային կոթողների ոչնչացման մասին մեր ահազանգի, ասաց. «Թուրքիայի պաշտոնական այրերը հավաստիացնում են, որ հայկական մշակութային կոթողները գտնվում են Թուրքիայի կառավարության հոգատարության ներքո»: Տիկին Ջոնսի քաղաքական «հնարքին» հաջորդեց խորհրդաժողովի մասնակիցների քմծիծաղը, որին պետքարտուղարության ներկայացուցիչը արձագանքեց «Դե՛, դուք կարող եք ծիծաղել» խոսքերով: Խորհրդաժողովի հաջորդ օրը ԱՀՀ ղեկավարներից Ռոս Վարդյանին տրամադրեցինք Հայկական ժողովրդային շարժման Հայաստանի ներկայացուցչության տրամադրած փաստաթղթերի մի ծրար՝ Թուրքիայում և Ադրբեջանում հայկական մշակութային կոթողների ավերման լուսապատկերներով և «Վասն հայության» հայաստանյան շաբաթաթերթի անգլերեն հավելվածում տպագրված նյութերով: Պարոն Վարդյանը հավաստիացրեց, որ այդ ծրարը կուղարկվի տիկին Ջոնսին:

Նույն օրը՝ երեկոյան, ճաշկերույթին ներկա էին ԱՀՀ ղեկավարները, ՀԲԸՄ ղեկավարը, հոգևոր թեմերի առաջնորդները, ԱՄՆ հրեա համայնքի ղեկավարը, կոնգրեսականներ, ԱՄՆ-ում ՀՀ դեսպանը և այլ հյուրեր: Թեև շատ էր խրախուսվում այս իրադարձությանն ուսանողների մասնակցությունը, սակայն օրակարգում նախատեսված չէր ոչ մի ուսանողական ելույթ: Այնուամենայնիվ ուսանողներից մեկն արտասանեց Պարույր Սևակի «Քիչ ենք, բայց հայ ենք» բանաստեղծությունը, որը շատ ջերմ ընդունվեց:

Ճաշկերույթի ժամանակ տեղեկացվեց, որ Ամերիկայի հրեական լոբբին վերջերս հայտնել էր Հայոց ցեղասպանության նկատմամբ իր դիրքորոշման փոփոխության մասին (ինչպես հայտնի է՝ ԱՄՆ հրեա լոբբիստները մինչ այդ պաշտպանում էին Թուրքիայի՝ Հայոց ցեղասպանությունը ժխտելու քաղաքականությունը). «Հայոց ցեղասպանությանը պետք է տրվի ի՛ր գնահատականը. կատարվածը ցեղասպանություն է: Ամերիկայի հրեական կոմիտեում մենք կաշխատենք, որպեսզի Հայոց ցեղասպանության փաստը ճանաչվի»,- 2004թ. ապրիլի 17-ին ասել էր Ամերիկայի հրեական կոմիտեի խորհրդի ղեկավար Դոթի Բենեթը (նույն ժամանակ Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչեց նաև ԱՄՆ-ի ամենահայտնի օրաթերթը՝ «Նյու Յորք թայմսը»):

Հաջորդ օրը՝ ապրիլի 20-ին, սկսվեցին Վաշինգտոն ժամանած պատվիրակների կամ, ինչպես համագումարում էին

ասում, ակտիվիստների հանդիպումները կոնգրեսականների և նրանց աշխատակազմի անդամների հետ: Յուրաքանչյուր նահանգից եկած ուսանող պատվիրակը, ի թիվս այլոց, հանդիպում էր տվյալ նահանգի կոնգրեսականի հետ և զրուցում վերոհիշյալ չորս խնդիրների մասին:

Մեր հանդիպումների ընթացքում զրուցեցինք Կոնգրեսի աշխատակիցների հետ: Նրանցից ոմանց կարծիքով ՀՀ-ն գտնվում է Բալկաններում... Գրեթե կես ժամ տևեց մեր հանդիպումը Մինեսոտա նահանգից կոնգրեսական Մարտին Օլավ Սաբոյի հետ: Միակ բանը, որ նրան հետաքրքրում էր, հետևյալ հարցն էր. «Հայաստանը նավթ ունի՞...»:

«Իսկ Թուրքիան ի՞նչ է կարծում այս նամակի մասին»,- հաճախ էինք լսում՝ ի պատասխան մեր խնդրանքի՝ ստորագրել նախագահ Բուշին ուղղված նամակը:

«Թուրքիան մեր ռազմական գործընկերն է, այն մեծ հենարան է ահաբեկչության դեմ պայքարում»,- հերթագայում էր անկեղծ բացատրությունը...

Երեքշաբթի երեկոյան պատվիրակների մեծ մասը մեկնեց:

Ավելի քան մեկ ամիս անց, հայացք գցելով Կոնգրես այցելությանը, կարելի է եզրակացնել, որ այն ավելի շատ ուսուցողական արշավ էր, քան լոբբիստական: Թե ինչ արդյունք կտան հանդիպումները Կոնգրեսում, ցույց կտա ժամանակը: Ամենակարևորը գիտակցելն է, որ ԱՀՀ-ի և մյուս հայկական լոբբիստական կազմակերպությունների աշխատակիցները կամա թե ակամա Կոնգրես են գնում առաջին հերթին որպես ամերիկացիներ, ովքեր պարզապես հայկական ծագում ունեն: Ուստի անտրամաբանական է սպասել, որ նրանք կդիմեն այնպիսի քայլերի, որոնք կվնասեն Ամերիկայի պետական շահերը: Փաստը մնում է փաստ, որ սփյուռքում կազմակերպված ամենահաջող լոբբիստական աշխատանքն անգամ չի կարող շատ բան տալ Հայաստանի Հանրապետությանը, եթե վերջինիս ղեկավարությունը չունի ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգ և հայության գերագույն շահերին ծառայելու գիտակցություն:

Արևմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանի հետ

**«Քաֆեսջյան» հիմնադրամի հովանավորությամբ խորհրդաժողովին մասնակցած ուսանողներ՝**
***Աննա Հովհաննիսյան*** **(Մինեսոտա)**
***Եվա Ներսիսյան*** **(Միսուրի)**
***Սիմոն Մաղաքյան*** **(Կոլորադո)**

## ՀՀ-ԴԱՐՁՅԱԼ 21-Ի ՄԱՍԻՆ

ՀՀ հարկատուների ֆինանսական աջակցությամբ հեռասփռվող Հ1 «հան ռային» (իրականում՝ պետական) հեռուստաընկերության «արտադրանքի» շուրջ չեն դադարում մեր հայրենակիցների վիրավորանքով ու ցասումով լի գանգատ-բողոքները և՛ սփյուռքից, և՛ Արցախից, և՛ ՀՀ-ում: Նրանք խստագույնս դատափետում են հաղորդավարների այլանդակ «ինգլիզահայերենը», տգետ ու կիսավայրենի առոգանությունը, անճաշակությունը, կասկածելի շարժուձևերը, հատկապես՝ հաղորդումների բուն բովանդակությունը...

Ստորև արտատպում ենք մի հատված՝ սիրիահայ գրող և հրապարակախոս Հակոբ Ադամյանի՝ «Զարթօնք» օրաթերթի (Բեյրութ)՝ ս. թ. մայիսի 11-ի հրապարակումից: Հույս ունենք, որ Հ1-ի ղեկավարությունն ու համապատասխան մարմինները պատշաճ հետևություններ կանեն և կբարելավեն Հ1-ի լեզուն, բովանդակությունը, եթերի կուլտուրան:

***«Շրջադարձ»***

**Տոմսակ թիւ 1**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՅԼԵՐԳԸ

«ՀԱՅԼՈՒՐ»ի լուրերը զզուելի են, մանաւանդ այս օրերուն: Պիտի հաւանաբար ըսէք, թէ հաշւոյդ չի գար՝ անոր համար զզուելի կը գտնես զանոնք: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Հայերէն ամէն մէկ խօսք, ամէն մէկ նկար, ինչ առիթով ալ խօսուին եւ տեսնուին, անհուն հրճուանք պարգեւած են ինծի անցեալին, մինչեւ այսօր եւ յաւիտեանս յաւիտենից: Սակայն երբ կը բանաս «ՀԱՅԼՈՒՐ»ին օրուան լուրերն ու կը տեղեկանաս, որ ամէն մէկ հայ ղեկավար կամ հասարակ քաղաքացի «ԴԱՒԱՃԱՆ» մըն է, վայրկեան մը առաջ ուրիշ քանալ մը կ'անցնիս, մտիկ չընելու համար «ԴԱՒԱՃԱՆՆԵՐՈՒ» մասին: Այս օրերուն դաւաճանն է հրապարակին վրայ ծախու հանուած ապրանքը...:

Կարծեմ ինծի նման շատերն ալ նոյն ձեւով կ'ընկալեն այս ողբերգական երեւոյթը: Տարիներ սպասեցինք այս օրերուն, որպէսզի հայերէնը հնչէր, եւ նկարները դիտուէին մեր տուներէն ներս, եւ այսօր, մեզի գրեթէ կը պարտադրեն գոցել աչք ու ականջ մեր ոսկեղնիկին դէմ:

**Յակոբ Ադամեան**
***Լաթաքիա***

## ՄԵՆՔ՝ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼՈՒՄ

■ Մարկ Մազոուեր, «Պիտեր Բալաքյանի «Այրվող Տիգրիսը». ցեղասպանության խճճված արմատները» (անգլ.), «Դը Ինդիփենդենթ արթս էնդ բուքս ռիվյու մագազին», շաբաթաթերթ, Լոնդոն, 26. 03. 2004, էջ 22 (Պ. Բալաքյանի վեպի ներկայացումն ու վերլուծումը):

■ Միրնա Շիդիակ, «Գեղանկարիչ Հրաչ Այնթափլյանը խոսում է վրձնով. «Հեռացող երազի» ու «Ձգողական ուժի» առաջ «Ո՞վ կլցնի պարապը»» (արաբ.), «Ալ-Դիար» օրաթերթ, Բեյրութ, 28. 03. 2004:

■ Անստորագիր, «Ալ-Արիդին բացեց Հրաչ Այնթապլյանի ցուցահանդեսը. հայերը լիբանանյան բազմազանության մի մասն են» (արաբ.), «Ալ-Նահար» օրաթերթ, Բեյրութ, 29. 03. 2004:

■ Այշե Յյուր, «Միայն պատմաբաններին չթողնենք» (թուրք.), «Ռադիքալ» օրաթերթ, Ստամբուլ, 25. 04. 2004 (Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի շուրջ):

# ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՏԻԳՐԱՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ԴՐԱՄԱՆ ...

**Ալ. Սպենդիարյանի անվան պետական ակադեմիական, ազգային թատրոնում Տիգրան Լևոնյանի բեմադրած «Արշակ 2-րդը», «Պայացները», «Օթելլոն», «Անուշը», «Պոդիկտոսը», «Լեբլեբիջին» լևոնյանական արվեստի չափանիշներ են՝ դուրս կարծրատիպերից, չափանիշներ, որոնք չեն հանդուրժում խավարն ու տգիտությունը, հոգևոր սնանկությունն ու գորշությունը և, ի վերջո, չափանիշներ, որոնք չպետք է հանդուրժեին ազգային մշակույթը սեփական գավառականության ողորմելիությանը հավասարեցնող ապազգային քաղաքականություն որդեգրածները: Շուրջ հինգ տարի է, ինչ օպերային թատրոնից արտաքսվել է նրա հմուտ գիտակն ու մեծատաղանդ ռեժիսորը: Երբ աշխարհը գնահատեց լևոնյանական արվեստի գլուխգործոցները, այստեղ՝ Հայրենիքում, կատարվում էր ճիշտ հակառակը՝ սկսվեցին հանիրավի հալածանքներ ու հերյուրանքներ, որոնք «դեղին մամուլն» առատաձեռն շռայլում էր մաեստրոյի հասցեին՝ անդրկուլիսյան պատվիրատուների շռայլ վարձատրությամբ, բարոյազուրկ գրչակների նվաստ ծառայությամբ և, իհարկե, ՀՀ մշակույթի նախարարության ցինիկ ու պատեհապաշտ դրածոների գործուն մասնակցությամբ: Այդ արշավը մեկ նպատակ ուներ՝ ոչնչացնել օպերային արվեստը՝ ոչնչացնելու համար օպերային ռեժիսուրայի դպրոցը, և, ինչպես ասաց մաեստրոն մեզ հետ զրույցում, «ստեղծագործող մտավորականին դարձնել ազատ աքսորական՝ սեփական երկրում...»:**

**Երբ ժողովրդի սիրելի մտավորականն է ընկնում նախկին 70-ամյա վարչահրամայական համակարգից գրեթե չտարբերվող կլանային քաղաքականություն վարողների մըտրակների տակ, երբ մտավորական զանգվածների մասնագիտական կարծիքը ոչինչ չարժե, երբ երկրի նախագահի քմահաճույքն ու մշակույթի աշխարհաճանաչ գործիչների մասին անտեղյակությունը նրան մղում է մերժել Գոհար Գասպարյանի ընդունելության խնդրանքը և, ի պատիժ երգչուհու՝ «Հայաստանի սոխակի»՝ զրկել ժողովրդական արտիստուհուն պետության հատկացրած թոշակից, այստեղ կաղում են երկրի ոչ միայն ժողովրդավարությունն ու քաղաքակրթությունը, այլ առաջին հերթին՝ բարոյականությունը...**

**Նյութը պատրաստ էր հրատարակության, երբ գուժեցին Տիգրան Լևոնյանի մահվան բոթը: «Շրջադարձի» խմբագրությունը ցավակցում է կյանքից անժամանակ հեռացած արվեստագետի հարազատներին, մտերիմներին, նրա արվեստի բոլոր երկրպագուներին...**

- Քաղաքակրթությունը մեծապես կառուցված է մասնագիտական կրթվածության, գիտական, տեսական զարգացվածության վրա և արդեն 20 տարի է, որ ջանք չեմ խնայում ապացուցելու, որ առանց պրոֆեսիոնալիզմի անհնար է որևէ առաջխաղացում: Գալով մշակույթին՝ ասեմ, որ ունենալով հանճարեղ դերասաններ, այսօր չունենք հայ ժողովրդի դերասանական դպրոցը... Եթե կա մի բան, որն ինձ խորապես ցնցում, վշտացնում և բարկացնում է, այն է, որ ես իմ ներկայացումներով օպերային թատրոնում հաստատել, կայացրել էի երաժշտական ազգային ռեժիսուրայի դպրոցը, որտեղ նույնիսկ արտավազդյան ժամանակների թատերական մշակույթը փորձել էի համաձուլել աշխարհի այսօրվա առաջընթաց թատրոնների սկզբունքների հետ: Կարծում եմ՝ հաջողվել էր: Այն փակվեց ամենավայրենի ձևով՝ փոխարինվելով ինքնագործունեության մակարդակի գործունեությամբ:

...Իհարկե, գիտական, տեսական միտքը, գիտության լույսը պիտի հաղթեն, բայց դասական փիլիսոփայությունից մեզ հասել է, որ մերձավորի հետ պայքարում միշտ հաղթում է չարը, պատմականորեն հաղթում է բարին... Այսինքն՝

**Ատելությունը չի կառուցում, այլ քանդում է: Սե՛րն է կառուցում:**

ճշմարտությունը հիվանդանում է, բայց չի մահանում, բայց մարդը և՛ հիվանդանում է, և՛ մահանում: Մենք ազգովի պիտի պայքարենք այդ «գնա մեռի, արի սիրեմ»-ի դեմ, և մտավորականությունն այստեղ մեծ դեր ունի խաղալու, իհարկե, պետության աջակցությամբ:

- **Հինգ տարի շարունակ մամուլի հրապարակումներով և հեռուստաելույթներով հայ և օտարազգի շատ մտավորականներ պաշտպանում էին Ձեզ: Ինչո՞ւ նրանց ձայնն էլ արհամարհվեց, մաեստրո...**

- Էստաֆետի նման մշակույթի մի նախարարից մյուսն է անցնում հանցավոր անտարբերությունը, որը մեր քաղաքականության մեջ դարձել է կենսակերպ և համազոր տարածվել բոլոր բնագավառների վրա: Մինչդեռ կա մի պարզ օրինակ: Մարդը մահանում է, երբ մարմնից հեռանում է նրա հոգին... Ուստի մշակույթի հանդեպ նրա նախարարի հավկուրությունը առավել աններելի է...

- **Եթե մենք իսկապես տիրապետենք ժողովրդավարությանը, և ժողովուրդն սկսի սովորել, որ ինքը կարող է իշխանավոր փոխել, առաջընթաց կունենանք: Միշտ էլ գտնվում են թափթփուկներ, ովքեր կարող են վաճառքի հանել ամեն մի սրբություն...**

- Իմ ժողովուրդն ինձ շատ է սիրում, հատկապես շրջաններում, որտեղ ավելի մաքուր է մնացել սերը դեպի արվեստագետն ու վարժապետը: Ցավոք, գյուղն այսօր խեղճ է ու թշվառ վիճակում. **ազգի գենոֆոնդը վտանգի առաջ է կանգնած** (ընդգծումը մերն է - խմբ.): Ի՞նչ կարող են անել նրանք, երբ այսօր իրե՛նց է պետք օգնել, որպեսզի մի օր էլ նրանք մեզ նեցուկ լինեն: Իսկ մշակույթի մարդը, դժբախտաբար, հաճախ մտածում է. «Ինչ լավ է, որ քե՛զ հետ եղավ, Աստված չանի, որ ինձ հետ լինի...»: Եթե մտածի, որ այն, ինչ քեզ հետ եղավ այսօր, վաղն ի՛ր հետ է լինելու, իսկապես կարող է որոշ բաներ շտկել:

20-րդ դարասկզբին Ֆրանսիայում տեղի ունեցավ մի հետաքրքիր միջադեպ: Անհայտ չարագործները հրկիզել էին Փարիզի Օդեոն թատրոնի վարագույրները: Ֆրանսիայի մշակույթի նախարար Ֆ. Գալուան հրաժարական տվեց: Փարիզի մշակութային կենտրոնները երեք օր չաշխատեցին, որպեսզի նախարարը, հարգելով վերջիններիս խնդրանքը, վերադառնա իր պաշտոնին:

Ֆրանսիայի մշակույթի գործիչներն ակնածանք էին տածում Գալուայի նկատմամբ, չնայած վիրավորված նախարարը թատրոնի դեմ կատարվածն անարգանք էր համարում իր նկատմամբ...

**- Դժբախտաբար, մեզանում մշակույթի նվիրյալի իրավունքների դեմ ոտնձգություն են կատարում մե՛ր իսկ իշխանությունները: Այսօր էլ տեղին ու արդիական է հնչում տարիներ առաջ Ձեր գրած «Խուլ առյուծների ժամանակը» հոդվածը («Գրական թերթ», 3. 04. 1992), որն արտացոլում է վերջին տասնամյակի հայ իրականությունը:**

- Ես ինձ համար մի ասույթ ունեմ. «Փոքրիկ նախանձը հաճախ կարող է մեծ երևույթներ կործանել»: Սոլժենիցինի հայտնի գրքի մեջ հերոսը վերջում հարցնում է. «Ստալինն ինչո՞ւ այդքան մարդ կոտորեց»: Պատասխանում են. «Հենց այնպես...»: «Հենց այնպես»-ը մի ահավոր բան է, երբ անգամ ոչ մի պատճառ չկա... Իմ պարագայում՝ եթե մի անձնավորություն (մշակույթի երբեմնի նախարարը - խմբ.), որը կապ չուներ այդ ասպարեզի հետ, կարողացավ այդ ասպարեզի հայտնի անհատին գոնե հինգ տարով բնաջնջել և մեծ երևույթներ կործանել՝ առանց սկզբունքային նշանակություն ունեցող պատճառների, ուրեմն նրան աջակիցներ եղան և պետական հովանավորություն: Իմ դեմ արված բանսարկությունները քաղաքական զրպարտություններ էին, բայց երբ պարզվեց, որ դրանք հերյուրանքներ են, ոչ ոք չուզեց միջամտել... Մեր ազգի մեջ այն մտայնությունն էլ կա, որ եթե մեկի հետ վատ վարվեցին, անցավ-գնաց. հրաշք կլինի, եթե շտկվի... Բայց ես հավատում եմ այդ հրաշքին, որովհետև ինչ-որ սխալներ պիտի ուղղվեն:

**Կեղծ պրոֆեսիոնալիզմից նախընտրելի է անկեղծ սիրողականությունը:**

**- Նախկին նախարար Թամար Պողոսյանը չօգտագործեց իր հնարավորությունը՝ Տիգրան Լևոնյանին վերադարձնել օպերային թատրոն, որպեսզի գոնե դրանով մնար պատմության մեջ: Ներկայիս նախարար Հովիկ Հովեյանը շրջահայաց և խոհե՞մ կլինի՝ չկրկնելու համար նախկինների սխալները...**

- Եթե Թամար Պողոսյանը կատարեր այդ վեհանձն քայլը, կշարունակեր պաշտոնավարել որպես նախարար՝ ունենալով բազմաթիվ համակիրներ... Նրան հանեցին անգործության համար: Նա թխսկան հավի նման նստեց ու թևերը փռեց մշակույթի բնագավառի վրա, պաշտեց իր աթոռը, թեև հիմա ասում է, որ պաշտոնը չորրորդական հարց է իր համար: ***Նա ժամանակ չունեցավ վեց ամսվա մեջ գոնե մեկ անգամ ինձ լսելու: Սա հանցագործություն է մասնագիտության և մասնագետի նկատմամբ:*** Հուսով եմ, որ նոր նախարարը շատ ավելի հասու է, ճանաչում է մարդկանց: Թամար Պողոսյանի նման չէ, որը չգիտեր, թե ով է Հովհաննես Չեքիջյանը... Ահավոր բան է՝ ամենաբարի մարդուն անգամ երբ տալիս են տնօրինելու իր չհասկացած ոլորտը, դառնում է չարագործ: Այսօր ամեն քայլի առնչվում ենք նման երևույթի հետ: Գեղամ Գրիգորյանի՝ իր այսօրվա տեղում լինելն արդեն վիրավորական է ի՛ր համար, որովհետև ռեժիսուրան ամենաբարդ մասնագիտություններից է, և եթե չեն տիրապետում, թատրոնում չկան համախոհություն, բարձրագույն գաղափարախոսություն, հայրենասիրական, վեհ գաղափարներն ու բարձրագույն իդեալները, որոնք ձևավորվել են որպես չափանիշներ, եթե չկա տեսական իմաստավորվածություն, գործնականորեն անհնար է որևէ հաջողված քայլ կատարել:

Տիգրան Լևոնյանը և Գոհար Գասպարյանը

**- Նոր նախարարը կհասկանա՞, որ ափսոս են Ձեր մասնագիտական կարողությունները, որ բավական շատ ասելիք ունեք, կօգտագործի՞ իր դիրքը, կծառայեցնի՞ այն ի շահ օպերային թատրոնի, ի շահ ճշմարտության...**

- Ես խենթի պես պաշտում էի արվեստի բոլոր ճյուղերը և սիրահարված թիթեռնիկի պես՝ մեկ լույսից մյուսն էի թռչում: Ամեն մի արվեստով զբաղվելիս (լինի դա բանաստեղծություններ գրել թե գրականություն, թատրոն, նկարչություն, պարարվեստ), ջանում էի խորամուխ լինել դրանց մասնագիտական գաղտնիքների մեջ: Ճակատագրի բերումով ստացա այդ ամենի պրոֆեսիոնալ դաստիարակությունը: Դպրոցն ինձ ահավոր տաղտուկ էր պատճառում (ես սովորում էի 26 Կոմիսարների անվան դպրոցում՝ բավական վայրենի մթնոլորտում): Ես մի երկու տարի դասի չէի գնում, առավոտից երեկո հանրային գրադարանում ուսումնասիրում էի գրաբար, Հոմերոս, Էսքիլես, Եվրիպիդես, Արիտոֆան, Արիստոտել, Պլատոն և 14 տարեկանից բավական խորամուխ եղա նաև փիլիսոփայության մեջ, որն անհրաժեշտ է ռեժիսորական արվեստին: Ես չէի պատրաստվում ռեժիսոր դառնալ, իմ գերագույն իդեալը դերասանն էր: Եղել եմ օպերային թատրոնում նախ՝ միմիստ, հետո՝ երգչախմբի արտիստ, այնուհետև՝ ռեժիսորի օգնական և չնայած երգում էի աշխարհի տարբեր բեմերում, բայց միաժամանակ զբաղվում էի ռեժիսուրայով: Տասնհինգ տարի օգնական էի աշխատում Վարդան Աճեմյանի, Պողոս Ա-ֆեյանի, Վահագն Բագրատունու, Հրաչյա Ղափլանյանի մոտ, այդ գործի մեջ բավական հմտացա էմպիրիկ (գործնական - խմբ.), ներզգացողական ձևով: Հետո ուսումնասիրեցի ռեժիսուրայի տեսությունը՝ Արտոնեն Արտո, Բրուկ, Ժան Վիլատ, Սքոֆիլդ, Օլիվիյե, Ստանիսլավսկի: Ինձ համար մեծ բարեբախտություն էր, որ իմ կողքին կար Գոհար Գասպարյանի պես հզոր մի անձնավորություն, որն ինձ ապահովում էր ամեն ինչով. նախ՝ ոգևորությամբ ու ապրուստով, հետո այն ամենով, որը կոչվում է կանացի սեր, կնոջ վերաբերմունք և պաշտամունք դեպի տղամարդը...

Ես ինձ Աստված էի զգում: Մոսկվայում՝ ԳԻԴԻՍ-ում ավարտեցի օպերային ռեժիսուրայի արվեստի բաժինը: Դեռ առաջին կուրսում ինձ արտոնեցին 5-րդ կուրսեցիներին դասավանդել վիճարկելի ռեժիսուրա:

Մոսկովյան ուսումնառության տարիներին մեծ բարեբախտություն ունեցա մտերմանալու 83-ամյա, աշխարհահռչակ փիլիսոփա Լոսևի հետ, ծանոթացա նրա շատ աշխատություններին, որոնցից ամենահետաքրքիրը Պլեխանովի և Լենինի բանավեճն էր՝ ագնոստիցիզմի մասին: Այն հասկանալու համար խորամուխ եղա իմաժինիզմի, էկզիստենցիալիզմի մեջ՝ այդ ուսմունքներից ինձ համար ակնհայտելով՝ ինչ է խորհրդանիշը: Այդ ուսմունքներով զինված՝ որպես ռե-

**Երբ բնաջնջում են չափանիշները, հասարակությունը գաղափարազրկվում է:**

ժիսոր վերադարձա Հայրենիք՝ ձեռնամուխ լինելով ազգային ուրույն դիմապատկեր ունեցող երաժշտական թատրոնի ստեղծմանը: Առաջին իսկ ներկայացումներս բացահայտեցին բանաստեղծական մտածողություն (ի վերջո երաժշտական թատրոնը չի կարող զերծ լինել այն նախահիմքից, որը հենց պոեզիան է): Ես ընկա այն դրախտը, որին ձգտում էի: Ամեն ինչ դյուրությամբ էր ստացվում, որովհետև լավ էի նախապատրաստված: Անկախության առաջին տարիներին, երբ մշակույթի նախարար Պերճ Զեյթունցյանն ինձ նշանակեց օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավար և թատրոնի տնօրեն, ստեղծեցի թատրոնի ազգային դիմապատկերը, վերաբեմադրեցի շատ ներկայացումներ՝ նոր հայեցակարգով...

Ես ասում եմ, մի՛ կործանեք մարդու մեջ պատրանքը, առանց դրա նա կդառնա աներազ ու գորշ մի արարած և, ի վերջո, հանցագործ... Այդ ներկայացումներն ընդունեցին և՛ աշխարհը, և՛ մեր ժողովուրդը... Կգա մի օր, երբ այդ մասին հանգամանորեն կգրեն, թեև տասներկու տարվա մեջ շուրջ հազար վերլուծական հոդված է տպագրվել... Բայց մեզանում ոչ մի լավ բան անպատիժ չի մնում: Ինձ համար էլ եղավ անսպասելին... ***Որ ինձ կործանեցին՝ ոչինչ, բայց, որ օպերա՛ն կործանեցին, դա է անհանդուրժելի...*** Գիտակցաբար, թե ենթագիտակցորեն ճզմեցին այդ ասպարեզը: Ես նախարարներին հաճախ եմ ասել, որ օպերան կարելի է մի օրում կործանել և չվերականգնել 20 տարում, բայց ես ձեզ ասում եմ, որ ես երկու ամսում կվերականգնեմ այն և կանեմ հրճվանքով... Տաթևիկ Սազանդարյանն ասում էր, որ Տիգրան Լևոնյանը ամենավճռական և ինքնազոհ քայլերին գնում է ժպիտը երեսին, որովհետև դա իր կենսագրությունն է... Մի ասույթ կար օպերայում. «Եթե 20 օր բացարձակ լռություն է դահլիճում, ուրեմն շուտով Լևոնյանի հերթական ներկայացումն է ծնվելու...»:

**Արմինե Մելիք-Իսրայելյան**

***Հ. Գ.*** – *1999 թվականից Տիգրան Լևոնյանին հարկադրված «լռության սիմֆոնիան» գերհագեցած է տառապանքի ու հոգեմաշ օրերով, որոնք այսօր էլ լի են սիրելի թատրոն վերադարձի սպասումներով: Տա՛ Աստված, որ մեր պետական այրերին առաջնորդեն ողջամտությունն ու հայրենիքի հանդեպ սիրո ու պարտականության գիտակցությունը: Նրանք կարող են մեկ գրչահարվածով վերականգնել արդարությունն ու մեր բարձրագույն արժեքները՝ ապահովագրելով սեփական անունը արդարադատ պատմության նզովքից:*

ԱՄՍԱՅԻՆ «ՄԵԽԻԾ»

# «Ո՛Չ ՄԻ ԹԻՋ...»

Այսիսին քաղաքական անցուդարձերն աղքատիկ էին: Ներքաղաքական լարված ու անորոշ իրավիճակը դեռևս կշարունակվի մի որոշ ժամանակ: Ինչո՞ւ:

Բանն այն է, որ և՛ իշխանությունները, և՛ ընդդիմությունն աշխատում են դուր գալ միջազգային հանրությանը՝ «ոչ մի թիզ» չզիջելով իրենց մտադրություններից:

Որոշ փոփոխություններ, այնուամենայնիվ, երկու կողմն էլ կատարեց: Իշխանությունները վերջապես որոշեցին իրավիճակը մեղմել... որոշ կադրային փոփոխություններով: Սակայն մշակույթի նախարարի պորտֆելը «Օրինաց երկրի» մեկ այլ ներկայացուցչի փոխանցելը ոչ միայն չլուծեց խնդիրների գոնե մի չնչին մասը, այլ կոալիցիայի ներսում ավելի սրեց իրավիճակը:

Այս «փոփոխությամբ» իշխանություններն իրենց ճամբարում ստեղծեցին մի նոր անկայուն, ճամպրուկային տրամադրություն: Ավելին՝ այս «պաշտոնից ազատումն» ուղեկցվեց արտառոց մի իրողությամբ: Նախկին նախարարն իր հետ տարավ նաև... գրասենյակի կահույքը: Այս հանգամանքի վրա գուցե թե կարելի էր ուշադրություն չդարձնել, եթե մշակույթի նորանշանակ նախարարը հանդես չգար որպես այդ «կահույքի» նոր սեփականատեր...

Այս ոչ վայելուչ «երկխոսությունը» «նախկինի» և «նորի» միջև «կահույքի» թեմայով ցույց է տալիս, որ իշխանությունը մեր երկրում թևակոխել է զարգացման մի նոր փուլ, որտեղ քաղաքական կոալիցիայի կուսակցությունների գերագույն նպատակն իշխանությունը սեփականաշնորհելն է...

Ամսվա ընթացքում ՀՀ իշխանությունները հասկացրին ընդդիմությանը, որ Ազգային ժողովի աշխատանքների բոյկոտը շարունակելու դեպքում քաղաքական կոալիցիայի ներսում նրան կփոխարինի նշանակված «ընդդիմությունը»՝ «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավարի՝ Աժ նախագահի գլխավորությամբ: Այնպես որ քաղաքական կոալիցիան կարող է «յոլա գնալ» նաև առանց այսօրվա ընդդիմության...

Ե՛վ իշխանությունները, և՛ ընդդիմությունը կատարեցին «կոսմետիկ» փոփոխություններ, որոնք ամենևին էլ միտված չէին ներքաղաքական ճգնաժամային իրավիճակի մեղմացմանը: Այսպես, օրինակ, ընդդիմության պահանջները՝ ազատ արձակել կալանավորված հանրահավաքականներին, իշխանությունները մասամբ կբավարարեն, որպեսզի ինչ-որ ձևով մեղմեն իրենց կիրառած կոպիտ ուժին դիմելու քայլը, իսկ ընդդիմությունը կշարունակի իր գործողությունները՝ մինչև իր համախոհ վերջին ձերբակալվածի ազատ արձակումը:

Այսպիսով՝ քաղաքական իրավիճակը երկրում ոչ թե կարգավորվում, այլ շարունակում է մնալ լարված:

Անցած ամսվա ընթացքում իշխանությունները ոչ մի քայլ չկատարեցին՝ ժողովրդի կենսակերպը բարելավելու ուղղությամբ: Այս «բացը» լրացնելուն էին միտված իշխանությունների այն բուռն գործողությունները, որոնց ձեռնամուխ եղան քաղաքական կոալիցիայի կուսակցություններն ու ՀՀ նախագահը: Ավելի լայն լուսաբանելով իշխանությունների գործողությունները արտաքին քաղաքականության ոլորտում՝ փորձ է արվում համոզել միջազգային հանրությանը, որ քաղաքական իրավիճակը ՀՀ-ում կայուն է: Եթե ՀՀ իշխանություններն այս պարագայում ավելի մեծ ուշադրություն են դարձնում արտաքին քաղաքականությանը, դա առաջին հերթին վկայում է այն մասին, որ սպառվել են երկրի ներքին հարցերը լուծելու նրանց հնարավորությունները:

Անցած ամսվա ընթացքում վերջապես պարզ դարձավ, թե ով է ի վերջո քաղաքական պատասխանատվություն կրում ապրիլի 12-13-ի միջադեպերի համար, որի հետևանքով դաժանաբար ծեծվեցին և ձերբակալվեցին բազմաթիվ ցուցարարներ: Ամսվա վերջին կոալիցիայի ներկայացուցիչները գնահատեցին նախագահի ձեռնարկած միջոցառումները: Հրապարակելով այդ գնահատականները՝ նրանք փորձեցին ազատվել պատասխանատվությունից: Չնայած այս ամենին՝ ո՛չ իշխանությունները, ո՛չ ընդդիմությունը քաղաքական դաշտում չեն պատրաստվում զիջել իրենց «դիրքերը»:

Ընդդիմությունը հավանաբար ևս կկատարի «կադրային» փոփոխություններ, որովհետև ժողովուրդը տեղաշարժերի է սպասում ոչ միայն իր առօրյա կյանքում, այլև ՀՀ քաղաքական դաշտում:

Այս ամենը վկայում է այն մասին, որ ժողովրդավարական արժեքներն այդպես էլ խոր արմատներ չեն ձգում մեր երկրում: Իսկ մեր ունեցած «դեմոկրատական արժեքները» կարելի է համեմատել նախարարական այն «կահույքի» հետ, որը կարելի է «տանել», «բերել»՝ թեկուզև Հովիկ Հովեյանի՝ իր և իր ընտանիքի համար պահանջած «ծառայողական ավտոմեքենաներով»:

**Արշակունի**

# ԱՄՆ-Ի ՄԻՋԻՆԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ «ՄԵԾ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ» ԾՐԱԳԻՐԸ

Մերձավոր և Միջին Արևելքը, որի բաղադրամասն է Հայաստանը, աշխարհի թերևս ամենաբարդ հակասություններով տարածաշրջանն է: Դա պայմանավորված է այստեղ առկա բազում հիմնախնդիրներով, գործոններով, տարաձայնություններով և լուրջ հակասություններով ինչպես տարածաշրջանային երկրների, այնպես էլ մեծ տերությունների միջև, որոնք հետամուտ են քաղաքական շահերի հետապնդմանը:

Այս ամենը, ինչ խոսք, սրում է տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակի լարվածությունը՝ ապակայունացման անխուսափելի հետևանքներով: Այնուամենայնիվ լարվածության սրումն ու ապակայունացումը տարածաշրջանի երկրների համար այնքան վտանգավոր չեն, որքան ԱՄՆ-ի միջինարևելյան քաղաքականության նոր դրսևորումները:

Դրանց հետևանքով տարածաշրջանային անկայունությունն անընդհատ մեծանում է, վերջինիս հետ տարածաշրջանում մշտական գործոն է դառնում բռնության սաստկացումը: Դրա հիմքում անկայունության և բռնության միջոցով Մերձավոր և Միջին Արևելքում ամերիկյան գերակայությունն ամրապնդելու պաշտոնական Վաշինգտոնի նկրտումներն են:

Սեպտեմբերի 11-ից հետո Վաշտինգտոնը գլոբալ պատերազմ հայտարարեց միջազգային ահաբեկչությանը. ահաբեկչական գործողությունները հիմնականում վերագրեց Մերձավոր և Միջին Արևելքի իսլամական արմատական կազմակերպություններին, դրանց օժանդակելու մեջ մեղադրեց տարածաշրջանի երկրներին, ապա սկսեց վերջիններիս դիտարկել որպես անվտանգության սպառնալիք՝ պատճառաբանելով, թե նրանք կարող են զանգվածային ոչնչացման զենքը հանձնել վերոհիշյալ կազմակերպություններին՝ ԱՄՆ-ի, նրա դաշնակիցների և հատկապես Իսրայելի դեմ գործածելու համար:

Հակաաֆղանական, ապա և հակաիրաքյան պատերազմները ցույց տվեցին, որ Վաշինգտոնի նպատակը միջազգային ահաբեկչության վնասազերծումը չէ, այլ դրա գլոբալացումը. ահաբեկչության գլոբալացման պայմաններում Վաշինգտոնը հնարավորություն է ստանում հակաամերիկյան յուրաքանչյուր դիմադրություն որակել որպես «ահաբեկչություն»: Ավելին՝ դրա դեմ պայքար ծավալելու պատրվակով նա տարածաշրջանում և՛ ռազմական գործողություններ է ծավալում, և՛ նախադրյալներ է ստեղծում, որպեսզի ապահովի այդ գործողությունների հարատևությունը:



Այլ կերպ ասած՝ ահաբեկչության գլոբալացումը, որը համազոր է ծավալման, նպաստում է Վաշինգտոնի ագրեսիվ նկրտումներին՝ նրա առջև բացելով քաղաքական ծրագրերի իրականացման լայն հեռանկարներ: Այդ ծրագրերի մեջ ուրույն տեղ ունի «Մեծ Մերձավոր Արևելքի» (Greater Middle East) ծրագիրը:

1990-ական թթ. սկզբներին ՌԱՆԴ կորպորացիայի առաջ քաշած այս ծրագիրը, որը համապատասխանում է «աշխարհին ուղղություն տալու» ամերիկյան ռազմական դոկտրինային (վարդապետությանը - խմբ.), պաշտպանել են Երուսաղեմի հրեական համալսարանի Հարրի Տրումենի անվան խաղաղության ինստիտուտը և Հորդանանի թագավորական գիտահետազոտական կենտրոնը: Դրա մշակման հիմքում ԽՍՀՄ փլուզումից հետո աշխարհաքաղաքական մակրոտարածաշրջանի ձևավորման, այսպես կոչված, անհրաժեշտությունն է:

Նախնական տարբերակով ծրագիրը ներառում էր արաբական երկրներով, Իսրայելով և Պաղեստինի ինքնավարությամբ հանդերձ, Մերձավոր Արևելքը, Անդրկովկասը, Միջին Ասիան, ինչպես նաև Արևմտյան Ասիայի այնպիսի երկրներ, ինչպիսիք են Իրանն ու Թուրքիան: Հակաաֆղանական պատերազմի ավարտին Աֆղանստանում ամրապնդվեցին ԱՄՆ-ի դիրքերը, Ուզբեկստանում, Ղրղզստանում, Տաջիկստանում և Վրաստանում ապահովվեց ամերիկյան ռազմական ներկայությունը: Իսկ հակաիրաքյան պատերազմը հանգեցրեց Իրաքի բռնագրավմանը:

Աֆղանստանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդումը, ամերիկյան ռազմական ներկայության ապահովումը Ուզբեկստանում, Տաջիկստանում և Ղրղզստանում՝ Անդրկովկասն ու Միջին Ասիան «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրում ընդգրկելու անհրաժեշտ նախապայմաններն էին: Իրաքի բռնազավթումը հնարավոր դարձրեց տարածաշրջանի երկրների վերակազմավորումն Իրաքի օրինակով:

Ակնհայտ է, որ այդ երկրների վերակազմավորման դեպքում ինքնաբերաբար վերակազմավորվում է ողջ Մերձավոր և Միջին Արևելքը, իսկ դա ենթադրում է նույն քաղաքականությունը տարածաշրջանին հարակից երկրներում ևս կիրառելու հնարավորություն: Ահա թե ինչու Իրաքի բռնագրավման պայմաններում Վաշինգտոնը վերանայեց ծրագիրը՝ մշակելով նոր տարբերակ, որը, ի տարբերություն նախնականի, ոչ միայն Անդրկովկասն ու Միջին Ասիան է ընդգրկում, այլև նախատեսում է Պակիստանից մինչև Մարոկկո ձգվող աշխարհաքաղաքական նոր տարածաշրջանի ստեղծումը: Այսինքն՝ նոր տարբերակով, Պակիստանի և Աֆղանստանի հետ, ծրագրի մաս են կազմում նաև Հյուսիսային Աֆրիկայի երկրներն ու Կիպրոսը: Կիպրոսի ընդգրկումը ծրագրի մեջ կարևոր հանգամանք է կիպրական հիմնահարցի կարգավորման, այդ խնդրում ամերիկյան շահագրգռությունների, ինչպես նաև հիմնահարցի շուրջ Եվրամիության և ԱՄՆ-ի միջև ծավալվող մրցապայքարի առումներով: Մրցապայքարի հիմքում Կիպրոսի միջոցով Արևելյան Միջերկրականը վերահսկելու, Մերձավոր և Միջին Արևելքին հնարավորինս մոտենալու եվրոպական երկրների ձգտումներն են, որոնք ուղղված են տարածաշրջանում ամերիկյան միանձնյա ռազմական ներկայության դեմ:

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի շահագրգռություններին, ապա դրանք չեն սահմանափակվում Արևելյան Միջերկրականում նախաձեռնությունը ԵՄ-ին չզիջելու մտադրությամբ, այլև պայմանավորվում են կղզում ռազմական ներկայություն հաստատելու և դրա շնորհիվ «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրից բխող աշխարհաքաղաքական նոր տարածաշրջանը վերահսկելու հաշվարկներով: Դա վկայում է կամրջի այն դերի մասին, որը ծրագրով Պակիստանից մինչև Մարոկկո

ձգվող նոր տարածաշրջանում վերապահվում է Կիպրոսին:

Հարցը, սակայն, սոսկ Կիպրոսի դերը չէ, այլ «Մեծ Մերձավոր Արևելքը» որպես ամերիկյան գլխավոր հենակետ ԵՄ-ի դեմ օգտագործելու Վաշինգտոնի նկրտումներն են: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ ԱՄՆ-ի համար անընդունելի է ԵՄ-ի՝ որպես ինքնուրույն բևեռ ձևավորումը: Թերևս այդ առումով պատահական չէ, որ ԱՄՆ-ը, բացի Անգլիայից և Իսրայելից, ռազմավարական առումով որևէ այլ երկրի մասնակից չի դարձնում Իրաքի վերակազմավորման և «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրի մշակման գործին: Ուրեմն ծրագրի իրագործումը, ինչպես Վաշինգտոնում են ներկայացնում, չի պայմանավորվում միայն Ռուսաստանի հնարավոր առաջխաղացմամբ և Չինաստանի հետագա հզորացմամբ:

Ինչ խոսք, աշխարհաքաղաքական նոր տարածաշրջանի՝ ԵՄ-ի դեմ որպես հենակետ օգտագործումը կսրի ԱՄՆ-ի հակասությունները եվրոպական երկրների՝ մասնավորապես Ֆրանսիայի և Գերմանիայի հետ: Հարկ է նշել, որ, հակասությունների առկայությամբ հանդերձ, վերջիններս հակառակորդներ չեն, այլ մրցակիցներ: Հետևաբար իրագործման դեպքում ծրագրի բացասական բոլոր հետևանքներն իրենց վրա են կրելու տարածաշրջանի երկրները:

Այդ երկրների մեջ տարածաշրջանի համար առանցքային նշանակությամբ առանձնանում է Իրաքը: Խոսքը տվյալ դեպքում ոչ միայն Իրաքի օրինակով տարածաշրջանի վերակազմավորման մասին է, այլ վերաբերում է նաև տարածաշրջանի մյուս երկրներում իրաքյան սցենարի փորձարկմանը: Իրաքի վերակազմավորումը ենթադրում է երկրում լիարժեք վերահսկողության հաստատումը կամ քաոսի խորացումը, պայմանով, որ դա կառավարելի լինի:

Քանի որ իրաքցիների համառ դիմադրությունն ԱՄՆ-ին թույլ չի տալիս վերահսկել Իրաքը, որքան էլ այն բռնազավթված լինի, ուստի ամերիկացիները երկրում դիմադրության ծավալումը հակակշռելու համար քաոսը խորացնում են: Սակայն քաոսի խորացումը չի հանգեցնում դրա կառավարելիությանը: Ստեղծված իրավիճակում և՛ քաոսի կառավարելիությունն ապահովելու, և՛ երկրի վրա վերահսկողություն հաստատելու, և՛ տարածաշրջանի այլ երկրներում փորձարկելու համար Իրաքում հրահրվում են քուրդ-արաբական միջէթնիկ և շիա-սուննի միջդավանանքային բախումներ: Հրահրման արդյունավետ միջոց է դառնում ահաբեկչությունը:

Հատկանշական է, որ մարտի 2-ին, երբ Քերբելայում և Բաղդադում շիա արաբների դեմ կազմակերպված ահաբեկչական պայթյունների հետևանքով զոհվեց 282 մարդ, նույն օրը Պակիստանում հարձակման ենթարկվեցին երկրի շիա մահմեդականները՝ տալով ավելի քան 40 զոհ: Ինչ վերաբերում է միջէթնիկ բախումներին, ապա դրանք էլ մարտի 12-ին հրահրվեցին Սիրիայում: Երկրի առավելապես քրդաբնակ՝ Ղամիշլի քաղաքում ծայր առած քուրդ-արաբական բախումներին Իրանի Մահաբադի շրջանի քրդերն արձագանքեցին անկարգություններով՝ տեղիք տալով քուրդ-իրանական բախումների:

Քուրդ-արաբական և քուրդ-իրանական բախումների հրահրումը վկայում է տարածաշրջանի երկրների մեջ, Իրաքի օրինակով, առաջին հերթին՝ Սիրիան, ապա և Իրանը վերակազմավորելու ամերիկյան նկրտումների մասին: Հետևաբար՝ հակահիրաքյան պատերազմի ավարտին Սիրիային և Իրանին հասցեագրված ռազմական ներխուժման սպառնալիքներն այդ նկրտումների արձագանքն էին:

Ըստ երևույթին այն ձախողումներն ու բարդությունները, որոնց առջև կանգնել է ԱՄՆ-ը Իրաքում, զգալի սահմանափակում են տարածաշրջանում նոր պատերազմ սանձազերծելու նրա հնարավորությունները: Այդ իսկ պատճառով նա հրաժարվում է պատերազմը որպես տարածաշրջանային երկրների վերակազմավորման միջոց օգտագործելու քաղաքականությունից՝ փոխարենը ձգտելով միջէթնիկ և միջդավանանքային բախումների միջոցով հասնել այդ երկրներում գործող վարչակարգերի տապալմանը:

Այլ կերպ ասած՝ Սիրիայի և Իրանի վարչականորեն վերակառուցումը դառնում է ամերիկյան սցենարով այդ երկրների վերակազմավորման նախապայմանը, վերակազմավորումն էլ իր հերթին՝ «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրի իրագործման նախապայման:

Ի՞նչ է ենթադրում վերակազմավորումը: Այդ հարցին պատասխանում է մարտի 8-ի ժամանակավոր սահմանադրությունը, որն Իրաքը դարձնում է դաշնային հանրապետություն: Քանի որ վերակազմավորվող Իրաքն ունենում է դաշնության երեք սուբյեկտ, դաշնային հիմունքներով բաժանվում է երեք մասի: Ընդ որում՝ սահմանադրությամբ ճանաչվում են այդ սուբյեկտների, մասնավորապես՝ Քրդստանի խորհրդարանի և կառավարության իրավասությունները, փեշմերգաները պահպանում են իրենց կարգավիճակը: Ուրեմն ամերիկացիներն Իրաքի օրինակով ջանք չեն խնայում ստեղծել այնպիսի դաշնություն, որ դրա սուբյեկտները միմյանց կապված լինեն հնարավորինս թույլ կապերով: Սա նշանակում է, որ Իրաքի վերակազմավորման ամերիկյան սցենարով երկիրը կանգնում է մասնատման սպառնալիքի առջև:

Կհաջողվի՞ տարածաշրջանի երկրներին կազմավորել Իրաքի օրինակով, դժվար է ասել: Բայց որ ԱՄՆ-ն առաջնորդվում է վերակազմավորման միջոցով Մերձավոր ու Միջին Արևելքի քաղաքական քարտեզը ձևափոխելու առաջադրանքով և այդ երկրների ցուցակում, ըստ «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրի, Սիրիայից ու Իրանից բացի ընդգրկել է նաև Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Լիբանանը և նույնիսկ Թուրքիան, ակնհայտ է:

Ի դեպ, մարտի սկզբներին ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Մարկ Գրոսմանը շրջայց կատարեց Եվրոպա, Հյուսիսային Աֆրիկա և տարածաշրջան: Նրա շրջայցի ընթացքում Եգիպտոսն ու Սաուդյան Արաբիան կտրականապես մերժեցին «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագիրը: ԵՄ-ն, ի դեմս Գերմանիայի և Ֆրանսիայի, լուրջ վերապահումներով վերաբերվեց դրան: Ավելին՝ որպես այլընտրանքային տարբերակ՝ ԵՄ-ն պատրաստվում է ծրագրին հակադրել Մերձավոր և Միջին Արևելքի զարգացման ֆրանս-գերմանական նախագիծը, որը կոչվում է «Ընդարձակ Մերձավոր Արևելք» (Wider Middle East):

«Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագիրը դեռևս չի հրապարակվել, հետևաբար մանրամասները հայտնի չեն: Այն հրապարակվելու է ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթնաժողովում, որը նախատեսվում է ս. թ. հունիսի 28-29-ին, Ստամբուլում: Հրապարակումը, ինչ խոսք, կհստակեցնի ծրագրի նկատմամբ առկա դիրքորոշումները: Այնուամենայնիվ ծրագրին ԵՄ-ի հակադրած այլընտրանքային տարբերակով արդեն ստեղծվել են ԵՄ-ԱՄՆ մրցապայքարի անհրաժեշտ նախադրյալներ: Թվում է, թե մրցապայքարը տարածաշրջանի երկրներին կտա ԵՄ-ի և ԱՄՆ-ի միջև խուսանավելու հնարավորություն: Եթե դրանով նույնիսկ չհաջողվի օրակարգից հանել ծրագիրը, այդ երկրները մրցապայքարի պայմաններում գոնե նվազագույնի կիջեցնեն և՛ ծրագրի, և՛ ծրագրից բխող վերակազմավորման բացասական հետևանքները:



**Հակոբ Չաքրյան**

# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

■ Մարիամ Թումանյան, «Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները»: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, Երևան, 2003, 416 էջ (A-5):

Հայ մշակութային և հասարակական գործիչ իշխանուհի Մարիամ Թումանյանի հուշերի ամբողջական բնագիրը տպագրվել է առաջին անգամ:

Տեքստը կազմել, առաջաբանը և ծանոթագրությունները գրել է Արծվի Բախչինյանը:




■ Տիգրան Դավրիկյան, «Երկու պատերազմների լեգենդը»: «Ամարաս», Երևան, 2003, 192 էջ (A-5):

Փաստավավերագրական նյութի հիման վրա հեղինակը ներկայացնում է գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյանի անցած մարտական ուղին Հայրենական մեծ պատերազմում և զինակիցների հուշերը՝ 72 տարեկանում Արցախի ազատամարտին կամավոր զինվորագրված լեգենդար հրետանավորի մասին:

Գիրքը հրատարակության է պատրաստել ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչությունը:




■ Գալուստ Գալոյան, «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.)» (հրատարակվել է հետմահու): ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2004, 822 էջ (A-5):

Մի շարք երկրների արխիվներից քաղված նորահայտ վավերագրերի, տարբեր լեզուներով հրատարակված փաստաթղթերի ժողովածուների նյութերի, մենագրությունների օգտագործմամբ հեղինակը լուսաբանել է ուշ միջնադարից անկախությունը կորցրած և Թուրքիայի ու Պարսկաստանի տիրապետության տակ ընկած հայ ժողովրդի ծանր վիճակը և նրա ազատագրական պայքարի նկատմամբ մեծ տերությունների քաղաքականությունը, որը վերջին հաշվով հանգեցրեց Թուրքիայում Հայոց ցեղասպանությանը:

Աշխատությունը երաշխավորել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտխորհուրդը: Հրատարակությունը հովանավորել է «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը:

Գիրքը կարելի է ձեռք բերել «Գիտություն» հրատարակչությունում. հասցեն՝ Երևան, Բաղրամյան 24, Գ մասնաշենք: Հեռ.՝ 58-18-23:




■ «Հայ գաղթաշխարհի պատմություն», եռահատորյակ, հատոր 1, հատոր 2, Երևան, 2003:

Առաջին հատորը [531 էջ (A-5)] ընդգրկում է Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութների պատմությունը՝ միջնադարից մինչև 1920թ.:

Առաջին հատորը հրատարակության է պատրաստել եռագրության խմբագիր, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանը: Հրատարակվել է ՀԲԸՄ Կահիրեի մասնաճյուղի «Սաթենիկ Ճանիկ Չագըր» հիմնադրամի միջոցներով՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ:

Երկրորդ հատորը [520 էջ (A-5)] ընդգրկում է Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութների դարավոր պատմությունը՝ սկզբնավորումից մինչև տվյալ գաղութի գոյատևման վերջը: Ներկայացված է յուրաքանչյուր գաղթավայրի ամբողջական պատմությունը:




■ Աշոտ Մելքոնյան, «Ձավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին»: «Ձանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003, 544 էջ (A-5):

Մենագրության մեջ քննության են առնված Ձավախքի քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-մշակութային պատմության անցքերը՝ վաղ շրջանից մինչև խորհրդային իշխանության առաջին տարիները:

Հավելվածում զետեղված 50 փաստաթղթերի մեծ մասը հրատարակվում է առաջին անգամ:

Աշխատությունը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտխորհուրդը:




■ Գրիգոր Կարախանյան, «Հայոց ժողովրդական մշակույթը» (հանրագիտարան), երկու հատորով, հատոր Ա: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003, 322 էջ (A-4):

Հեղինակը կարելիության սահմաններում ներկայացնում է հայոց ավանդական մշակույթը, կյանքի ու կենցաղի վավերական դրսևորումները, ինչպես նաև հանրագիտարանի բնույթին անուղղակի առնչություն ունեցող այլ իրողություններ:

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, «Թոփալյան հիմնադրամի» և Էդմոնդ Փիլոսյանի հովանավորությամբ:

■ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատոր 12: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003, 208 էջ (A-4):

Հատորն ընդգրկում է հայ ժողովրդական երգեր: Կազմել և ծանոթագրել է Ռոբերտ Աբայանը:

Հրատարակությունը երաշխավորել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, ծախսերը հոգացել է Գլենդեյլի (ԱՄՆ) Լարք երաժշտական ընկերակցությունը:

■ Կարեն Սմբատյան, «Պատառիկներ օրագրից»: «Մաշտոց» հրատարակչություն, Երևան, 2003, 221 էջ (A-4):

Հուշեր և դրվագներ են նկարչի ավելի քան 50-ամյա օրագրությունից: Հեղինակի կենսագրությունը միահյուսվել է մեր ժողովրդի մի կարևոր ժամանակաշրջանի պատմությանը (1952-2003թթ.):

Հրատարակությունը հովանավորել է «Հայբուսակ» համալսարանը:

■ Հովիկ Վարդումյան, «Աստվածների կանչը»: «Նահա-

պետ» հրատարակչություն, Երևան, 2004, 206 էջ (A-5):

Ներկայացվում են Արցախյան ազատամարտին մասնակից 62 հայուհիների (որոնցից 16-ը զոհվել են) սխրանքները ռազմադաշտում: Հեղինակը շրջել է Արցախում և ՀՀ-ում, հանդիպել զոհվածների հարազատների և պատերազմի վետերանների հետ, հնարավորինս ավելացրել իր տեղեկությունները՝ հերոսուհիների կենսագրական տվյալներն ամբողջացնելու և նրանց այսօրվա գործունեության մասին ճշգրիտ պատկերացում տալու նպատակով:




■ Արշակ Ալպոյաճեան, «Իրաքի հայերը»: Անհատական հրատարակություն, Երևան, 2003, 203 էջ (A-5):

Հատորում ներկայացվել է Իրաքի հայկական գաղթօջախի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև 1940-ական թվականները, երբ գրվել է հատորը: Պատմությունը շարադրվել է ըստ բնակության վայրերի: Վերջին բաժնում տրվել են տեղեկություններ իրաքահայության կրթական հաստատությունների, մշակութային միությունների, լեզվի, բարքերի և, առհասարակ, հոգևոր կյանքի մասին, ինչպես նաև խմբագրի՝ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի փոխտնօրեն, պատմագիտության դոկտոր Վարդան Գրիգորյանի կազմած Արշակ Ալբոյաջյանի կենսագրությունը:

Լույս է տեսել Իրաքի հայոց թեմի Առաջնորդարանի նախաձեռնությամբ և Մատենադարանի օժանդակությամբ:




■ Ավագ Հարությունյան, «Մայր աթոռ Ս. Էջմիածնի հասարակական և դիվանագիտական գործունեությունը 1918-1920 թվականներին»: Հեղինակային հրատարակություն, Երևան, 2004, 57 էջ (A-5):

Հիմնվելով արխիվային հարուստ նյութերի վրա՝ հեղինակն ուսումնասիրել է առ այսօր անուշադրության մատնված մի թեմա, ըստ արժանվույն գնահատել Մայր աթոռի տարատեսակ գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության ժամանակաշրջանում: «Հավելվածում» ներկայացված են Մայր աթոռի «Էջմիածին» շաբաթաթերթի (1920թ.) համառոտ պատմությունն ու մատենագիտությունը՝ ըստ թեմաների:

■ Էմմանուէլ Աթաջանեան, Գէորգ Մադոյեան, «Հայ Երուսաղէմ»: Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի հրատարակչություն, Երե-վան, 2003, 72 էջ (A-5):

Գրքույկը նկարազարդ ուղեցույց է և հակիրճ ծանոթություններ է տալիս Երուսաղեմի ու շրջակա հայկական սրբավայրերի մասին:

Եռալեզու՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն հրատարակություն է:

■ Վարազդատ Հարությունյան, «Դարը մեր մեջ, մենք՝ դարի»: «Դար» հրատարակչություն, Երևան, 2003, 280 էջ (A-5):

Ժողովածուում հավաքված են ակադեմիկոս Վարազդատ Հարությունյանի հուշերը՝ գիտության, մշակույթի և քաղաքական գործիչների մասին, որոնց հետ ծանոթ կամ բարեկամ է եղել իր երկարատև կյանքի ընթացքում, հրապարակախոսական հոդվածներ, վերջին տարիներին հայրենական մամուլում տպագրված հարցազրույցներ, գնահատականներ ու մտորումներ:




■ Վահէ Պալատունի, «Հայկական ուխտագնացութիւն պատմութեան միջով»: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, Երևան, 2003, 80 էջ (A-5):

Գիրքը պատմում է ամերիկահայ մտավորականի՝ կորցրած Հայրենիքի և անկախացած ՀՀ սրբավայրերով կատարած ուխտագնացության մասին: Կան լուսանկարներ:

Անգլերենից թարգմանել են Անահիտ Դիմաքսյանը և Լաուրա Վիրաբյանը:

■ Արտակ Մովսիսյան, «Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը»: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 400 էջ (A-5):

Մենագրությունը նվիրված է նախամաշտոցյան գրային համակարգերով կատարված արձանագրություններին, ներկայացված են ինչպես բնիկ հայաստանյան, այնպես էլ օտար երկրներում ստեղծված և մեր նախնիների ներմուծած ու կիրառած գրահամակարգերը՝ իրենց գրային հուշարձաններով:

Խմբագրել է դոկտ. Զավեն Եկավյանը: Գիրքը հրատարակության է երաշխավորել ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտխորհուրդը: Տպագրվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ:

■ Արտակ Մովսիսյան, «Հայկական մեհենագրություն»: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, 272 էջ (A-5):

Մենագրության մեջ քննվել են նախաքրիստոնեական Հայաստանում գրավոր մշակույթի ծագումն ու զարգացումը, տեղածին գրահամակարգերն ու գրական հուշարձանները: Ներկայացվել են հայկական մեհենագրության գործածության դրսևորումները՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո: Փորձ է արվել ցույց տալ նախամաշտոցյան Հայաստանում ձևավորված գրային մտածողության դերը՝ Ոսկեդարի դպրության ստեղծման գործում: Որպես հավելված՝ բերվել են հայկական մեհենագրության տարբեր փուլերի արձանագրություններ:

Խմբագրել է պատմագիտության դոկտոր Արամ Քոսյանը: Գիրքը հրատարակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորությամբ, պետական պատվերով:

■ Պիոն Հակոբյան, «Գրական ուսումնասիրություններ»:




Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 492 էջ (A-5):

Ժողովածուն ամփոփում է հեղինակի՝ կյանքի վերջին տասնամյակներին գրած հետազոտությունները՝ ինքնատիպ վերլուծություններով ու գնահատականներով:

Գիրքը հրատարակության է երաշխավորել ԵՊՀ հայագիտական կենտրոնը: Հրատարակվել է «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ:




■ Արմեն Այվազյան, «Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի», գիրք 1: Հեղինակային հրատարակություն, Երևան, 2003, 226 էջ (A-5):

Հեղինակը քննում է ՀՀ ազգային անվտանգության հայեցակարգային խնդիրները, վերլուծում հայության համակարգային ճգնաժամի պատմաքաղաքակրթական ու քաղաքական պատճառները, Հայոց ցեղասպանության ռազմավարական հետևանքները, Արցախի հակամարտության կարգավորման ռազմավարական սկզբունքները, Թուրքիայի ռազմական նոր հայեցակարգը և այլն:

Տպագրությունը հովանավորել է «Հայաստան» հասարակական մշակութային կենտրոնը (Աթենք):




■ Կիմ Ղահրամանյան, «Քաղաքագիտություն: Բացատրական բառարան»: «Զանգակ-97» հրատարակչություն, 2003, 136 էջ (A-5):

Բացատրված են քաղաքագիտության դասընթացի և արդի քաղաքական կյանքի հրատապ խնդիրներին վերաբերող հիմնական հասկացությունները, առավելապես ուշադրություն է դարձվել արդի հայ քաղաքական կյանքի իրողություններին և պահանջներին:




■ Արաքս Փաշայան, «Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նը-պատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ»: «Զանգակ-97» հրատարակչություն, Երևան, 2003, 248 էջ (A-5):

Ուսումնասիրությունը հեղինակի թեկնածուական ատենախոսությունն է: Քննարկվում են ԻԿԿ ստեղծման պատմությունը, նպատակները, կառուցվածքը, հայեցակարգերը իսլամական աշխարհի կենսագործունեության տարբեր բնագավառներում և այլն: Առաջին անգամ լուսաբանվում են ԻԿԿ դիրքորոշումները ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ: Գիրքն ունի անգլերեն ամփոփում:

Հրատարակվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ, «Արմէն եւ Բերսաբէ ճերեճեան» հիմնադրամի (ԱՄՆ) մեկենասությամբ:

■ Վարագ Առաքելյան, «Ճակատագրի խաչմերուկներում»: Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, 198 էջ (A-5):

Անվանի բանասերի, դասախոսի և հասարակական գործչի




(1910-2001) հուշերն են՝ հայրենի և սփյուռքահայ գրողների, աքսորի ու բանտի իր բախտակիցների, 1965թ. ապրիլի 24-ի երևանյան ցույցի նախապատրաստման ու անցկացման մասին: Գրքում առաջին անգամ են լույս տեսնում կարևոր մանրամասնություններ Խ. Հայաստանի այլախոհական և Հայ դատի ընդհատակյա կազմակերպությունների վերաբերյալ:

Տպագրվել է պետական պատվերով:




■ Լևոն Վարդան, «Հարկերը Օսմանեան եւ Պարսկական Կայսրութիւններուն Մէջ, ԺԵ.-Ի. Դար, Ա-Ի»: Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, Երևան, 2004, 560 էջ (A-5):

Գիրքն ամփոփում է սփյուռքահայ անվանի գրող, խմբագիր, մանկավարժ ու պատմաբան Լևոն Վարդանի եռահատոր կոթողային բառարանի առաջին հատորը՝ 15-20-րդ դարերում զույգ կայսրություններում երբևէ կիրառված հարկերի և տուրքերի մասին:

Հրատարակության են պատրաստել Կարո Աբրահամյանը (Բեյրութ) և ԳԱԹ փոխտնօրեն Գուրգեն Գասպարյանը (Երևան):




■ Հակոբ Չոլաքյան, «Քեսապ», Գ. հատոր: «Արևելք» տպարան, Հալեպ, 2004, 672 էջ (A-4):

Հալեպաբնակ պատմաբանասերի ու մանկավարժի մատենաշարի հերթական հատորում տեղ են գտել հայրենի Քեսապի պատմությանը, բարբառին, ազգագրությանը, բանահյուսությանը, ժողովրդագրությանը, Մեծ եղեռնի ու տարագրության պատմությանը, հայ առաքելական ու ավետարանական համայնքների ներքին կյանքի և, առհասարակ, Քեսապի մասին այլ հեղինակների անտիպ գործեր, որոնք նոր լույս են սփռում այս ոլորտների հարցերի վրա:

Հատորը հրատարակել է «Ամերիկաբնակ Քեսապցիներու Ուսումնասիրաց Միութիւնը»:




■ Թեսսա Հոֆման, «Հայերն այսօր Թուրքիայում. Թուրքիայի Հանրապետության հայ փոքրամասնությունը: Իրավիճակի քննադատական արժևորումը» (ֆրանս.): Ուփսալա (Շվեդիա), 2004, 50 էջ (A-4):

Գերմանացի ականավոր գիտնականի ուսումնասիրությունն է՝ երկրի հայության նկատմամբ Թուրքիայի իշխանությունների խտրական, հետևողական քաղաքականության մասին:

Գիրքը հրատարակել են Շվեդիայի հայկական կազմակերպությունների միությունն ու Եվրոպայի հայերի համագումարը:

***Խմբագրությունը պատրաստ է այս խորագրի ներքո տեղադրել հայությանն առնչվող կարևոր, նոր հրատարակությունների հրատարակչական, մատենագիտական տվյալները:***

# ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆ.
# «ԱՆՀԱՏԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԸԼԼԱԼԵ ԴԱԴՐԻՆՔ»



## ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊԻ «ԲԵՌՆԱԿԻՐԸ»

**Զրույց սիրիահայ հանրաճանաչ գրող, հրապարակախոս, գրահրատարակիչ, հասարակական գործիչ, բժիշկ Թորոս Թորանյանի հետ**

**Պարոն Թորանյան, Հայաստանի հետ Դուք անբաժանելիորեն եք կապված: Ե՞րբ էր Ձեր առաջին այցը Երևան:**

- 1963 թվականի մայիսին էր, երբ շախմատի արքա հայտարարվեցավ Տիգրան Պետրոսյանը: Որպես այցելու եկա Երևան, բայց այստեղ ընկերներս թելադրեցին, որ դիմեմ՝ ուսանող ըլլալու համար: Ես ամուսնացած էի, երկու զավակներու հայր և երբեք չէի մտածեր ուսումս շարունակել: Բայց նամակ մը գրեցի և ընդունվեցանք ամուսիններով:

Առաջին տարին ընդունվեցանք ԵՊՀ. մեր միտքը մեր լեզուն, մեր գիտելիքները զորացնելն էր: Տարի մը հետո մտածեցինք, որ մենք անկուսակցական մարդիկ ենք, վերադարձին ո՞վ մեզի գործ պիտի տա իբրև ուսուցիչ արտասահմանի մեջ: Ըսինք՝ դառնանք բժիշկներ: Ես բժշկութենեն հեռու էի՝ որքան երկիրը երկինքեն, կապված էի գրականության՝ դպրոցի չորրորդ դասարանեն սկսյալ, բայց մտածեցի, որ իմ գրելիք գիրքերուս դրամը որոնցմե՞ պիտի ուզեմ: Պիտի մուրա՞մ: Այս էր բժշկական համալսարան մտնելուս հիմնական նպատակը. ես կշահիմ, ես կիրատարակեմ, ուրիշներու գործերն ալ կիրատարակեմ: Այդպես ալ եղավ:

**- Այս անգա՞մ ինչ առիթով եք եկել ՀՀ:**

- Օգոստոս-սեպտեմբերին Հայաստան էի, բայց կրկին եկա նոյեմբերին, որովհետև լրագրողներու համագումարի այս հայտարարությունը ինձի ալ հասավ, և Հալեպի մեր շատ հարգելի հյուպատոսը՝ պարոն Արմեն Մելքոնյանը, խորհուրդ տվավ, որ գամ: Ընդառաջեցի: Եկա և մասնակցեցա լրագրողներու համագումարին, որ տեղի ունեցավ Ծաղկաձորի մեջ:

**- Ի՞նչ տպավորություններ ունեք այդ համաժողովից:**

- Հայրենիքի և սփյուռքի լրագրողներու մեկտեղման իմաստով լավ և քաջալերական ձեռնարկ մըն էր: Շուրջ 175 հոգի էինք՝ սփյուռքեն եկած երկու տասնյակ լրագրողներով: Սփյուռքի լրագրողները, ես ալ անոնց մեջ, պաշտոնապես լրագրող դառնալու ուսում չենք ստացած: Մեր մամուլին աշխատակցելով, առանց բացառության, տասնամյակներու ընթացքին դարձած ենք լրագրող:

Այս համագումարը իրար ճանչնալու, նոր բարեկամություններ հաստատելու իմաստով լավ ձեռնարկ մըն էր: Անշուշտ, եղան զեկույցներ, քննարկվեցան մեր երկրին այս դժվարին պայմանները, թեր ու դեմ կարծիքներ հայտնվեցան: Հաճախ ես մտածած եմ՝ ի՞նչ կըլլար, եթե աշխարհի վրա միայն վարդ գոյություն ունենար, մեխակ, հասմիկ գոյություն չունենային: Բնությունն ինքը բազմատեսակությունը կսիրե, բազմակարծությունն ալ ընդունելի է, մեկ պայմանով բայց, որ մեր մոտ չիրագործվիր. բազմակարծությունը մեր մոտ կառաջացնե թշնամանք: Ես հակառակ եմ թշնամանքին: Բարեկամս, ընկերս, ծանոթս կրնա ըլլալ, որ ինձի պես չմտածե, բայց զայն թշնամի չպիտի նկատեմ: Միասին պիտի աշխատինք այս երկրի կառուցման համար: Մեր բոլորին նպատակը մեկն է՝ այս Հայրենիքն ավելի լավ տեսնել:

**- Վերջին տարիներին հաճախացել են համահայկական միջոցառումները: Ձեր կարծիքով ինչպե՞ս են դրանք նպաստում Հայրենիք-սփյուռք հարաբերություններին:**

- Իհարկե, որպես ձեռնարկ՝ հաջորդական այս հանդիպումները, համահայկական անունին տակ, մարդոց մտքին մեջ համահայկականությունը կզետեղեն: Բայց ինչպես իմ ելույթիս մեջ ըսի համագումարին, ընենք այնպես, որ սոսկական հավաք մը չըլլա, գործի՛ վերածվի, արդյո՛ւնք մը տա: Իհարկե, հասարակական աշխատանքները մեկ օրեն մյուսը արդյունք չեն տար: Հնչող խոսքը, ժողովները, հանդիպումները, համագումարները մեկ օրեն մյուսը արդյունք չեն տար, և մենք այդ ակնկալիքով չէ, որ եկանք այս համաժողովին: Համահայկական մյուս ժողովներուն ալ մասնակցելու առիթ ունեցած եմ: Արդյունքը քիչ մը ուշ երևի կհայտնվի: Պետք է մեր մեջ հայրենասիրությունը առավել զորանա և հիմնավորվի: Եթե հայրենասիրությունը զորավոր է, անմիջապես կրնա արդյունք տալ: Եթե խոսքի վարպետները գեղեցիկ ճառեր արտասանեն և գործ մը չձեռնարկեն, այդ հանդիպումները լավ կարելի է հորջորջել, բայց ատիկա բավարար չէ: ***Դաշնավորել գործերը, անմիջապես խոսքը գործի վերածել՝ ա՛յդ է ամենեն հիմնականը:*** Առայժմ այդ սպասումին մեջ ենք, որ համաժողովներն արդյունք տան: ***Որևէ համագումարե տակավին հստակ արդյունք մը չեմ տեսած:*** Գուցե այս խոսքը ծանր է որոշ ղեկավար մարդերու համար, որոնք կրնան ըսել՝ կույր ես, որ չես տեսներ: Այնքան ալ կույր չենք, արդյունքներո՛ւն կսպասենք...

**- Դուք շրջում եք աշխարհով մեկ, հատկապես՝ հայկական գաղթօջախներում: Բնական է, վերադարձից հետո Ձեր տպավորությունների մասին գրում եք, իսկ դա բավական աշխատատար գործ է: Լրագրողի աշխատանքը չի՞ խանգարում Ձեր ստեղծագործելուն:**

- Առհասարակ ես գեղագիտական գրականության մշակողի հանգամանքին մեջ չեմ դրած ինքզինքս: Գրած եմ քանի մը հատոր պատմվածքներ, ճամփորդական նոթեր և այլն: Սիմոն Սիմոնյանը, Անդրանիկ Ծառուկյանը, Վահրամ Մավյանը և ուրիշներ ինձի թելադրած են. «Դուն շնորհք ունիս, մի՛ տարածվիր, ամեն տեղ մի՛ վազեր»: Ես ալ ըսած եմ՝ եթե տեսնեմ, որ տեղ մը եկեղեցիի մը պատը կփլի, ուսս պիտի դնեմ, մինչև որ մասնագետները գան և պատը ուղղեն: Ես Թորանյան չեմ ըլլար, եթե ամեն օր հոդված մը չգրեմ, աղքատի մը տունը չերթամ՝ օգտակար ըլլալու համար, հիվանդի մը չայցելեմ, խառնակ կյանք մը ունեցող ընտանիքի մը խորհուրդ չտամ... Կյանքը ինչ է, եթե ոչ հազար ու մեկ մանրուքներու հանրագումար: Եթե այդ բոլորին չվազեմ և նստիմ, ըսեմ թե փղոսկրե աշտարակի մեջ ես գեղագիտական գործ մը պիտի արտադրեմ... Ինձի խորհուրդ տվողներուն ժամանակին ըսած եմ՝ թող ձե՛ր անունները գր-

վին հայ գրականության Բեհեստունի քարաժայռին վրա՝ որպես մեծ գրողներ, ինձի համար ալ թող ըսեմ՝ Սուրբ Մեսրոպի «բեռնակիրն» էր...

**- Խնդրեմ՝ Ձեր գրահրատարակչական գործունեության մասին: Ի՞նչ գրականություն եք նախընտրում լույս ընծայել:**

- Մասնավոր ճիգ մը չեմ ըրած, որ դառնամ գրահրատարակիչ: Բայց, դառնալով բժիշկ և մասնագետ անզգայացնող, որոշ գումար աշխատած եմ: Ինչ որ շահած եմ, ամբողջությամբ հրատարակություններու տված եմ՝ անմնացորդ: Քսան տարի որպես բժիշկ աշխատելե ետք դադրած եմ արհեստս կամ արվեստս գործադրելե և միայն գրականությամբ կզբաղիմ, հատկապես վերջին տասներեք տարիները: Իմ գործերս հրատարակած եմ, ուրիշներու գործերուն համար ուրիշներե դրամ կրցած եմ առնել: Որևէ ժամանակ ուղղակի դրամ չեմ խնդրած ո՛չ ոքե: Այնպիսի մթնոլորտ մը ստեղծած եմ, որ մարդիկ որոշ գիրքերու դրամը իրենք տված են հոժարակամ կերպով:

**- Վերջերս Հալեպում Դուք լույս եք ընծայել Գևորգ Յազըճյանի գրքույկը՝ «Հրաւէր Դէպի Արցախ»: Դրվատելի գործ եք կատարել: Գուցե Գևորգի երազանքը վարակի սփյուռքահայ երիտասարդներին. այն է՝ 50 հազար սփյուռքահայեր գան, հաստատվեն Արցախի ազատագրված տարածքներում: Ի՞նչ արձագանք գտավ այս գրքույկը Ձեր միջավայրում:**




- Գևորգը նախապես հրատարակեց այդ նյութը մամուլին մեջ: Այն կարդացի հևհև և անմիջապես որոշեցի գրքույկի վերածել՝ առանց իրմե արտոնություն խնդրելու: Ուզեցի, որ անակնկալ մը ըլլա: Այդ օրերուն ալ միաժամանակ մեր սիրելի ակադեմիկոս Գրիգոր Գուրզադյանը եկած էր Հալեպ, շարք մը դասախոսություններ տված էր: Ձայնագրիչի վրա արձանագրած էի զանոնք և երկու գրքույկը միասին հրատարակեցի: Այդ գրքույկներուն համար հազար դոլար հատկացուցի: Հրատարակելեն վերջ որոշեցի տուները պտտիլ, որպեսզի հազար դոլարը վերստին գոյացնեմ և Արցախին նվիրեմ:

**- Ե՞վ...**

- Այդ գումարը հավաքեցի մեծ դժվարությամբ, քիչ մըն ալ Գևորգին օժանդակությամբ, բերի հոս, հանձնեցի «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ ըսելով՝ օգտագործել Արցախի համար: Վերջը իմացա, որ Հակոբյան անունով երիտասարդ մը, որ այնտեղ պատասխանատու պաշտոն մը ունի, հատկացուցած է օգտագործված ինքնաշարժի մը գնման համար, որպեսզի այն վերաբնակեցված գյուղերու աշակերտները, ուր դպրոցներ չկան, ամեն օր հավաքե և տանի այնտեղ, ուր դըպրոց կա: Այս իմաստով իր նպատակին ծառայեց այդ գրքույկներուն հրատարակումը:

Արձագանքը շատ լավ էր: Մենք շատ խոսակցություններ ունեցանք: Գևորգը իրավացիորեն «վայրագ» հոդված մը գրած էր սփյուռքեն Հայրենիքի մեջ ուսանածներուն մասին, որոնք անտարբեր են մեր երկրի այսօրվան կացության նկատմամբ:

**- Ներեցեք, Ձեզ ընդհատեմ, այդ մասին հարց ունեմ: Հայաստանում սիրիահայ մեծաթիվ երիտասարդներ են ուսանել: Նախ՝ հետաքրքիր է նրանց վերաբերմունքը Գևորգի կոչին և երկրորդ՝ ինչպե՞ս են նրանք մասնակցում համայնքի ազգային կյանքին:**

- Ճիշտ է, որ միայն բժշկական համալսարանը շուրջ 1500 շրջանավարտներ ունի սփյուռքի տարբեր գաղութներու մեջ: Նույնիսկ կրնամ ըսել, թե Հայաստանի բոլոր բարձրագույն հաստատություններեն այսօր մոտավորապես 2500 շրջանավարտներ կան սփյուռքի մեջ: Ասիկա մեծ բանակ մըն է, որ սփյուռքը կրնա առաջնորդել: Բայց, դժբախտաբար, շրջանավարտներուն մեծ տոկոսն անտարբեր է հայրենի կյանքի նկատմամբ...

**- Ինչո՞ւ:**

- Չեմ գիտեր: Անշուշտ կան քանի մը տասնյակ լավ աշխատող տղաք, որոնք միություններու մեջ մտած են, զանազան կուսակցություններու մեջ են և, պետք է ըսել, ակտիվորեն կաշխատին: Կան, որոնք պատասխանատուներ են զանազան միություններու մեջ, զանոնք կգլխավորեն նույնիսկ: Անոնց թիվը, դժբախտաբար, մեծ չէ:

**- Վերջերս ՀՀ-ում տեղի ունեցավ հայագիտական միջազգային գիտաժողովը: Երևան էր ժամանել նաև «Մարմարայի» (Թուրքիա) գլխավոր խմբագիրը՝ պարոն Ռոպեր Հատտեճյանը: Առիթ եղավ նրա հետ զրուցելու, և ցավով տեղեկացանք, որ հայախոսությունն այն աստիճան է նահանջել Ստամբուլում, որ մեծաթիվ հայ երիտասարդներ արդեն ամուսնանում են թուրքերի հետ: Այդ առումով ինչպիսի՞ն է վիճակը Սիրիայում և հատկապես Հալեպում:**

- Սուրիո մեջ, կրնամ ըսել, թե ամուսնությունները հայերու հետ են: Հալեպի մեջ (սուրիահայ մեծագույն զանգվածը այստեղ է) օտար ամուսնություններ գրեթե չկան: Կայպանվին: Եթե նման բացառություններ ըլլան, ազգականներ, բարեկամներ, հարևաններ չեն խոսիր, կկտրեն հարաբերությունները բոլոր անոնց հետ, որոնք կժպրիին օտար ամուսնություններ կնքել:

**- Իսկ հայախոսությա՞ն վիճակը:**

- Սուրիահայ գաղութը, չնչին բացառություններով, ամբողջովին հայախոս է: Ես չեմ հանդիպած հայու մը, որ արաբերեն բացատրե ինքզինքը հայու մը Սուրիո մեջ, Հալեպի մեջ հատկապես: Դամասկոս քիչ մը սկսած է այդ բանը երիտասարդներու մոտ. կատակով կըսկըսին արաբերենով, վերջը կշարունակեն հայերենով:

**- Ձեր բարեկամ և ընկեր Ժիրայր Դանիելյանը վերջերս գրքույկ հրատարակեց, որտեղ տխուր փաստեր կան Լիբանանի հայկական դպրոցների աղետալի ներկայի մասին: Իսկ ինչպե՞ս է վիճակը Սիրիայում:**

- Լիբանանը քիչ մը ավելի երջանիկ է, որովհետև որոշ նյութեր կդասավանդվին հայերենով, մինչդեռ Սուրիո մեջ միայն հայերեն լեզուն է, որ կդասավանդվի հայերենով: Բոլոր նյութերը պետական ծրագիրով են, և հայկական դպրոցներուն մեջ անոնք կդասավանդվին արաբերենով: Հալեպի մեջ ունինք երեք քոլեջ՝ տասներկուամյա դպրոց: Ունինք նաև տասը նախակրթարան, այսինքն՝ վեցամյա դպրոց և մեկ հատ իննամյա վարժարան: Աշակերտներու թիվը, կրնամ ըսել, կաճի: Օրինակ՝ Քարեն Եփփե ազգային ճեմարանն ունի 1500 աշակերտ, ՀԲԸՄ Լազար Նաջարյան-Գալուստ Գյուլբենկյան երկրորդական վարժարանը՝ 1620: Կան նախակրթարաններ, որոնք 700 աշակերտ ունին:

**- Դուք սովորել եք Մելգոնյան կրթական հաստատությունում: Անշուշտ, անտարբեր չեք կարող մնալ այդ հաստատության շուրջ պտտվող խոսակցությունների նկատմամբ: Դուք ծանո՞թ եք այժմ այնտեղ տիրող բարոյահոգեբանական մթնոլորտին:**

- Ամեն մելգոնյանցի ինքզինքը հրպարտ կզգա. ես ալ Մելգոնյան հաճախելու համար հպարտ կզգամ: Բայց տեսակ մը ամերիկանացումի մթնոլորտ մը կա մեր հաստատության մեջ: Բոլոր դուռերուն վրա ամեն տեղ անգլերեն կտես-

նենք զարմանքով: Անհրաժեշտություն չէ. հայկական դպրոց է, կկարծեմ՝ ամեն տեղ հայերեն պիտի գրվի միայն: Իսկ եթե պիտի գրվի օտար լեզու մը, հունարեն պիտի գրվի, որովհետև կղզին հունական է, հատկապես որ մենք հունական բաժնին մեջ ենք: Ես վերջին տարիներուն քանի մը անգամ եղած եմ Մելգոնյանի մեջ: Նույնիսկ նախանցյալ տարի գիս կանչած էին, որպեսզի շրջանավարտներու «Հուսկ բանքը» ես արտասանեի և խոսեի աշակերտության: Տարած էի, զարմանալի զուգադիպությամբ, շրջանավարտներուն թիվով գիրք՝ իմ հրատարակած գործերես: Բոլորին բաժնեցի: Իհարկե, հոն լրիվ հայախոսություն է, բայց մեր օրերու գուրգուրանքը չիկա: Գրադարանը «մեղվի փեթակ» էր մեր օրերուն, այսինքն՝ 50 տարի առաջ: Հիմա գիրք կարդացողներու թիվը գրադարանավարը ամչցավ ըսել: Այսինքն՝ դասերեն դուրս ընթերցանության նվիրումը դպրոցին մեջ պակսած է...

**- Հայապահպանության խնդիրներով մի ժամանակ մենք անհանգստանում էինք սփյուռքի համար, և դա բնական էր: Այսօր, ցավոք, ՀՀ-ում էլ ունենք նման խնդիր: Կրթության հարցեր, աղանդավորության դեմ պայքարի պարտականություն և այլն, և այլն: Ինչպե՞ս եք Դուք գնահատում հայրենի մտավորականության գործունեությունն այս ոլորտում:**

- Մտավորականությանը այս բոլոր գործերուն մեջ առաջին գիծին վրա չեմ տեսներ: Այս խոսքերուս համար մեր մտավորականներեն ոմանք պիտի նեղվին: Ժամանակին՝ ասկե 50-60 տարի առաջ, ***Վազգեն Շուշանյան***ն իր գրած ***«Ո՞վ է մտավորականը»*** գրքույկին մեջ ըսած է, թե ***մտավորականը ժողովուրդին պոչը չէ, գլո՛ւխն է: Այստեղ մեր մտավորականությունը տակավին գլուխը չէ:*** Արդյո՞ք սեղմումներ կան, արդյո՞ք արգելքներ կան: ***Մի՞թե մտավորականը պիտի խրտնի արգելքներե:*** Ես կկարծեմ, որ խոհեմությունը կպակսեցնե խիզախությունը: Ես չեմ ըսեր՝ անխոհեմ ըլլալ: Բայց կըսեմ՝ ***պետք է խիզա՛խ ըլլալ և քայլեր առնել, առաջնորդե՛լ այս ժողովուրդը:*** Առաջին խոսքը մտավորականությա՛ն խոսքը պետք է ըլլա:

Ոմանք կըսեն՝ բանաստեղծները քաղաքական հասունություն չունին: Ես ոչ միայն կժխտեմ, այլ փաստերով կրնամ ցույց տալ, թե բանաստեղծները մեծ քաղաքագետներ են միաժամանակ: Պարույր Սևակեն տող մը կրնամ մեջբերել. կըսե՝ անձնասպան պիտի ըլլամ՝ գլուխս զարնելով քարին, վերջը մտածեցի, որ քարը կմնա քար կամ պատը կմնա պատ, կփշրվի մի լավ ճակատ: Ասիկա քաղաքական ուղղություն է: Տվյալ պահին, երբ Սևակը կգրեր այդ բանաստեղծությունը, ինչպիսի իշխանություն մը կար՝ ժայռեղեն, որուն իր գլուխը պիտի չզարներ, որպեսզի չմեռներ և շարունակեր ստեղծագործել: Ուղղություն մը կուտա բանաստեղծը: Կամ ըսենք՝ ժամանակին Համո Սահյանը և Սերո Խանզադյանը, որոնք քաղաքագետներ չէին այսօրվա մեր առաջնորդներուն նման, պետության եկան և առաջարկեցին, որ Գորիսի մեջ որոշ համալսարաններու մասնաճյուղեր հաստատվին, որպեսզի Արցախեն և Հայաստանի հարավեն դեպի Երևան երիտասարդության հոսք չըլլա, բարձրագույն ուսումը հոն առնեն և տեղվույն վրա աշխատին: Ահա՛ ձեզի քաղաքական ուղղություն: Կրնամ բազմաթիվ ուրիշ անուններ ալ տալ, որոնք իրենց բանաստեղծություններով կամ առաջարկներով այս ժողովուրդը առաջնորդելու դերը կատարած են: Ուրեմն կսպասեմ, որ ***մեր մտավորականությունը թե՛ սփյուռքի մեջ, թե՛ այստեղ ըլլա ավելի՛ խիզախ, ավելի՛ համախումբ. ո՛չ թե առտվնե մինչև իրիկուն իրարու միս ծամեն: Ես կկարծեմ, որ հոս՝ մարդու միս ուտող մտավորականներու թիվը շատ մեծ է...*** Պետք է վե՛րջ տալ այդ գզվռտոցներուն այս երկրին մեջ՝ հանուն այս երկրին, որպեսզի մեզի ալ իբրև օրինակ ծառայեն:


Լրագրողների համահայկական համաժողով. «Վրաստան» հայ-լեզու թերթի լրագրողի հետ

**- Ձեր կարծիքով ի՞նչն է այդ երևույթի պատճառը:**

- Կրնա նախ՝ վախկոտությունը ըլլալ: Տնտեսապես տկար վիճակի մեջ է մեր մտավորականությունն այսօր. ասիկա իրողություն մըն է: Ձայն չհանելու քաղաքականություն մը կա, խիզախության պակաս կա: Թեև ժողովրդային օրինակը կըսե՝ «Անոթի արջը չի կրնար պարել», բայց արջը և մարդը տարբեր են իրարմե: Մարդը պետք է նաև գիտնա նավել և նավավար ըլլալ միաժամանակ: ***Մտավորականութենեն ավելի՛ խիզախություն կպահանջվի: Պետք չէ վախնալ սեղմումներե, նույնիսկ եթե ճնշումը հասնի իր գերագույն աստիճանին:*** Ես գործ մը պիտի ընեմ, եթե հարկ է, որ այդ ճամփուն վրա պիտի մեռնիմ՝ պիտի մեռնի՛մ:

**- Ամեն անգամ, երբ մեր կյանքում դժվարություններ են ծագում, խոստովանենք, մեր հայրենակիցներից շատերն սկսում են հավաքել ճամպրուկները: Անգամ նրանք, ովքեր իրենք էին ժամանակին անհանդուրժողականություն դրսևորում Հայաստան ներգաղթած սփյուռքահայերի արտագաղթի նկատմամբ, պիտակավորում նրանց, այսօր վերջիններիս զգալի մասն ինքն է դարձել... սփյուռքահայ: Որտեղի՞ց է մեր մեջ այսքան հակասականությունը (չեմ ուզում այլ բառ ասել): Ինչո՞ւ են այսքան հեշտությամբ լքում մեզ համար այնքա՜ն թանկ հողը... Որ հեռվից մեզ հայրենասիրությո՞ւն քարոզեն...**

- Այդ հարցը մեր ժողովուրդի խոշոր վերքն է, չբուժվող վերք մը, զոր պետք է պայթեցնել՝ թարախը դուրս հանելու համար: Շատ ցցուն օրինակ մը պիտի տամ: 1924-ին Բաղդադ բնակող Գուրզադյան ընտանիքը, որուն զավակն է այսօրվան ակադեմիկոսը, սեբաստացի ծնողներու զավակ, իրենց գրպանին մեջ մեկ կոպեկ չունենալով, ամուսիններով կորոշեն Հայաստան գալ: 1924-ի Հայաստանը այսօրվա Հայաստանեն երևի քանի մը հազար անգամ վատ էր, և 1924-ի Հայաստանին մեջ միայն «չկա» կար: Հա՛ց ալ չկար: Գուրզադյան ընտանիքը, բաղկացած երեք հոգիե, Գրիգորիկը՝ այսօրվան ակադեմիկոսը, մեկ ու կես տարեկան, հայրը կգրկե, մայրը երկրորդ երեխային հղի, Բաղդադեն ճամփա կելլեն՝ քալելով մինչև Թավրիզ: ***Հղի կինը, Հայաստան գալու համար, պատկերացուցե՛ք, մինչև Թավրիզ քալելով կերթա:*** Թավրիզի մեջ հայրենակիցներ կլսեն այս բանը, ավտոբուսի փող կուտան, որպեսզի մինչև Արաքսի ափը գոնե չքալեն: Երկրորդ երեխան կծնի և կմեռնի: Երրորդ երեխան կծնի, որն այսօր Երևանի մեջ ճանչցված ճարտարապետ Սարգիս Գուրզադյանն է:

Երբ ես Գրիգոր Գուրզադյանի հետ խոսեցա արտագաղթի մասին, քանի որ Ձեր հարցումը այդ մասին է, ըսավ. ***«Քար ծամել և Երկրին մեջ մնալ և չթողնե՛լ այս հողը»***: Ոմանք կրնան ըսել՝ Գուրզադյանն ալ Մոսկվա գնաց քանի մը շաբաթ: Գուրզադյանի ըրածը ցույց էր՝ ըսելու համար, թե հարգեցե՛ք գիտնականները, ***գիտությո՛ւնը հարգեցեք,*** որովհետև այս երկիրը ի վերջո քաղաքականությամբ եթե ջուրի երեսը պիտի ելլե, չընկղմելու համար գիտության պետք ունի: Երկիրը պահելու համար

գիտությունը շատ բան կրնա ընել: Ինձի ըսավ, թե Գետառ գետի ջուրով ամբողջ Երևանի էլեկտրականությունը կարելի է արտադրել՝ գիտության օժանդակությամբ, ինչ որ չի կատարվիր: Սևանի ջուրերն ալ հոսեցուցինք, զայն լճակի վերածեցինք: Գիտնականը ճշգրիտ խոսքեր կըսե: Պետք է այնպես ընենք, որ արտագաղթը դադրի: Հիմա մենք կըսենք՝ թուրքերը 1,5 միլիոն հայ ջարդեցին: Եթե 1,5 միլիոն հայ դուրս ելավ, որո՞ւն պիտի հայհոյենք, ***զո՞վ հանցավոր պիտի նկատենք այս 1,5 միլիոն հայրենալքողներուն համար:*** Մնացողներուն մինչև գետինը կխոնարհինք և շնորհակալություն կհայտնենք, որովհետև ***այս երկիրը Թորանյանի՝ արտասահմանի մեջ խոսած ճառերով չէ, որ պիտի շարունակե ապրիլ, պիտի ապրի հո՛ս մնացող, հողի՛ն կապվող հայերու շնորհիվ***:

**- Մեր կյանքում ստեղծված բազում դժվարություններ, բացասական երևույթներ երբեմն փորձում են բացատրել գլոբալացման աշխարհաքաղաքականությամբ: Հասկանալի է, որ գլոբալացում կոչվածի հուժկու հարվածների տակ խարխլվելու, փլուզվելու են առաջին հերթին ազգային երերուն դիմագիծ ունեցող ժողովուրդների հայրենիքները, պետականությունները: Ինչպե՞ս են Ձեր ճանաչած մյուս ժողովուրդները, հատկապես՝ փոքր, դիմակայում այդ աշխարհաքաղաքականությանը: Եվ ի՞նչ պետք է անենք մենք՝ հայերս՝ Հայաստանում և սփյուռքում, պահելու, պահպանելու համար մեր աստվածատուր բնօրրանը, Լեռնաշխարհը, մեր Հայրենիքը:**

- Գլոբալացումի վտանգին դիմաց ոչ միայն փոքր ժողովուրդները վախ մը կապրին այսօր, այլ մեծ պետություններն ալ: Դուք չե՞ք կարծեր, որ 60 միլիոննոց Ֆրանսան նույն վախը կապրի այսօր...

Եթե մեծ ժողովուրդներն այդ վախն ունին, փոքր ժողովուրդներն առավել ևս վտանգված են: Մեծ պետությունները ձեռնարկած են միջոցներու, որպեսզի զերծ մնան գլոբալացման այդ վտանգեն: ***Փոքր ժողովուրդներու համար ամենեն անհրաժեշտը, կկարծեմ, մայրենի լեզվին փարիլն է: Մեր լեզուն մեր տունն է:*** Արտասահմանի մեջ ապրող հայերուս համար Հայաստանը մեր հայերեն լեզուն է: Եթե ես գիտեմ իմ լեզուս, անպայման կկարդամ մեր ժողովուրդի բազմաթիվ մեծագործությունները՝ Մեսրոպեն առաջ և Մեսրոպեն ետք, և հպարտանալու բազմաթիվ առիթներ ունիմ: Ուրեմն՝ մենք պետք է կառչինք մեր լեզվին, մեր ինքնության: Անշուշտ, ***մեր ինքնության կառչելու պայքարին մեջ մեր ամենամեծ ուժը Հայաստանն է: Իսկ Հայաստանը եթե թուլանա, ինչ որ կտեսնեմ, կնայիմ ցուցանակները՝ անգլերեն... Ո՞վ պիտի կարդա ձեր ցուցանակները, խանութպանները, որո՞նց համար են ձեր այդ «դեկորացիաները», ինչո՞ւ համար անգլերեն, քանի՞ անգլիացի կայցելե Երևան կլոր տարին:*** Սա Սպանիա չէ, որ 40 միլիոն բնակչություն ունի և այդքան ալ տուրիստ կերթան ամեն տարի, տուրիստներով կրնան ապրիլ: Իսկ մենք անգլիախոսությունը տարածելով չէ, որ անպայման դրամի տեր պիտի դառնանք:

***Հիմա արշավ մը կա՝ անգլերեն լեզուն սորվելու: Սորվեցե՛ք, արգելք մը չկա ատոր համար, բայց ատիկա չի նշանակեր, որ մենք Երևանը վերածենք Անգլիայի կամ Ամերիկայի՝ մեր ցուցանակներով, մեր ինքնաշարժերուն մեջ դրված անգլերեն երգերով, դպրոցներուն մեջ ամենուրեք անգլերենը տարածելով և հայերենին ուշադրություն չդարձնելով հատկապես:*** Ես կկարծեմ, որ հայերեն լեզվի ուսուցիչներուն ռոճիկը պետք է ավելցնել: Հայերեն լեզու դասավանդողները նոր սերունդ մը պետք է պատրաստեն, որոնք կատաղորեն փարած ըլլան մեր լեզվին: ***Ոմանք կըսեն, թե մեր խոսածը ազգայնամոլություն է: Փոքր ժողովուրդներու ազգայնամոլությունը ինքնապաշտպանություն է միայն: Մենք վախնանք մեծապետական մտածումներե, որոնք կուզեն աշխարհն իրար խառնել:*** Շատ փորձեր եղած են ասկե առաջ՝ Հռոմեական կայսրութենեն առաջ ու վերջ, որպեսզի աշխարհը գրավեն և իրենցը ըլլա բոլորը: ***Դարերով չեն հաջողած, այսօր ալ չպիտի՛ հաջողին***:

**- Մենք խոսեցինք մի ամբողջ շարք միայն ցավոտ հարցերի մասին: Բայց մեր կյանքում կան նաև շատ լուսավոր կետեր, բարի գործեր են կատարվում մեզանում: Դուք, որ հաճախ եք լինում ՀՀ-ում, այցից այց ի՞նչ փոփոխություններ, ինչ առաջընթացներ եք արձանագրել:**

- Ես շատ մեծ ուրախություն ապրեցա անցյալ գալուս, երբ որ սեպտեմբերի 1-ին Ռուբեն Սևակի անվան դպրոցի դռան առջևը կանգնած՝ եկող աշակերտները հարցուփորձեցի, թե ի՞նչ գիտեն Ռուբեն Սևակի մասին: Երբ տեսա, որ բոլորն ալ լավ պատասխաններ տվին, շատ ուրախացա: Սեպտեմբերի 1-ին Երևանը ծաղկանոցի նման էր: Բազմահազար աշակերտներ ծաղիկներով դպրոց կերթային: Անցյալ և այս անգամ այցելեցի Ռուբեն Սևակի, Վահան Թեքեյանի, Սիամանթոյի և գեներալ Արամ Կարամանուկյանի անվան և «Բյուզանդ Մարգարյան» դպրոցներ: Վերջին երկուքը սփյուռքահայ բարերարներու նվերներով վերակառուցված են ամբողջությամբ: Անոնց ուսուցչական կազմին հետ նստեցա զրույցի, լսեցի աշակերտներու արտասանությունները և տեսա, թե աշխատանք մը կկատարվի, զոր պետք չէ անտեսել: Եվ հայտարարեցի. «***Հայաստանը նաև այս դպրոցներու հայրենիքն է»:*** Միայն սև չտեսնե՛նք ամեն ինչ: Եվ որևէ երկրի մեջ ինչ իշխանություն ալ ըլլա, իշխանության գլուխը ո՛վ ալ ըլլա, անպայման լավ գործեր ալ պիտի ըլլան: Երկիրը չի կրնար լավը չարտադրել: Այնքան ատեն, որ երկիրը կա, լավի արտադրանքն ալ կա:

**- Խնդրեմ, Ձեր խոսքը մեր երիտասարդությանը:**

- Ես պիտի ուզեի, որ երիտասարդությունը ուրախանա, բայց գիտնա, որ ստեղծագործելու անհրաժեշտությունն ալ կա ուրախանալու կողքին: Մեր կյանքին ժամանակը կհերիքե թե՛ մեկը, թե՛ մյուսը կատարելու համար: Երիտասարդությանը պետք չէ լքե հայրենասիրությունը: Պետք չէ խորհի, թե, օրինակի համար, օտար լեզուներ սորվելով կամ գեղեցիկ ինքնաշարժ մը առնելով, կամ ուրախություն վայելելով՝ կյանքը այդ է միայն: Երիտասարդությո՛ւնը պիտի պահե այս երկիրը: Եթե այս երկիրը՝ որպես Հայաստան, իր անցյալով, իր մշակույթով, իր մեծագործություններով չպիտի պահե ու չպիտի շարունակե, այդ երիտասարդությունը կրնա կործանել երկիրը: Բայց ես վստահ եմ, որ մեր երկրին մեջ բազմահազար երիտասարդներ կան, ովքեր գիտնականներ են հիմա՝ այս իսկ վայրկյանին, և անոնց մեջ շատերը մամուլի միջոցով, գիտական իրենց պաշարով երկիրը նոր բարձունքի մը առաջնորդելու ուժը ունին: Ատոր վստահ եմ: Կոչ կընեմ, որ ***այս երիտասարդները միայն անհատներ չըմընան, մեկտեղվին խաղողի ողկույզին պես, նուռին պես և այս երկիրն ավելի արագ լավացնեն: Անհատի ժողովուրդ ըլլալե դադրի՛նք: Ըլլանք հավաքակա՛ն ուժի ժողովուրդ մը: Եվ հավաքական ըլլալու տվյալները կա՛ն այս երկրին մեջ:***

***Ես զգվելի լավատես մըն եմ ինչ կվերաբերի Հայաստանի ապագային և մեր ժողովուրդի ապագային:***

*Հասմիկ Գուլակյան*
**Դեկտեմբեր, 2003թ.**

**Հ. Գ. – Անցյալ տարի լրացավ Թորոս Թորանյանի ծը-ընդյան 75-ամյակը: Այս առթիվ մեծարանքի հանդիսություններ կազմակերպվեցին Հալեպում, Բեյրութում և այլուր: Թեկուզ ուշացած՝ «Շրջադարձի» խմբագրությունը շնորհավորում է արդեն 76-ամյա, բայց միշտ երիտասարդ, հայ մշակույթի «շրջիկ դեսպան» և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կամավոր «բեռնակիր» Թորոս Թորանյանին:**

# «ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ» ԵՎ «ԱԼ-ՖՈՒՍՈՒԼ ՈՒԱԼ-ՂԱՅԱԹ» ԵՐԿԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրիգոր Նարեկացի

Տասներորդ դարի հեղինակներ Գրիգոր Նարեկացու և Աբուլ Ալաա ալ-Մաարու հիշյալ աշխատությունները շուրջ մեկ հազարամյակ է, ինչ հիացնում են ողջ աշխարհին: Ես նվիրվեցի դրանց ուսումնասիրությանը՝ ներշնչված Գրիգոր Նարեկացու և Աբուլ Ալաա ալ-Մաարու վեհությունից՝ նպատակ ունենալով այս սուրբ անձանց մասին որոշ ճշմարտություններ հասցնել իմ արաբ հայրենակիցներին: Հետևաբար սկսեցի սուզվել այս «ծով» գրքերի խորքերը՝ դրանց թանկագին «գոհարներն» ի հայտ բերելու նպատակով: Սակայն ուսումնասիրության սկզբում անհրաժեշտ եմ համարում հստակեցնել հեղինակների համառոտ կենսագրությունները՝ որոշակի լույս սփռելու նրանց գլուխգործոց աշխատությունների աղերսների վրա:

Նարեկը մի գյուղ էր Վանա լճի հարավում՝ Ռշտունյաց գավառում: Ժամանակի ամենազարգացած հոգևորականներից մեկը՝ Անանիա վարդապետը, որ Գրիգոր Նարեկացու մոր հորեղբայրն էր, 10-րդ դարի սկզբին այնտեղ հիմնում է մի վանք, որը կրթական օջախ դարձավ շնորհալի պատանիների համար:

Գրիգորը ծնվել է 951 թվականին՝ հիշյալ Նարեկ գյուղում, իր դաստիարակությունն ստացել գյուղի վանքում, ապա ձեռնադրվել կուսակրոն քահանա և ապրել ու գործել նույն վանքում, որի համար էլ ստացել է «Նարեկացի» մականունը: Գրիգորն իր ծնողների երեք որդիներից կրտսերն էր. երեցը Սահակն էր, երկրորդը՝ Հովհաննեսը: Նա ուսումնակից և ընկեր եղավ իր կրտսեր եղբորը՝ Նարեկա վանքում, որի վանահայրությունն ստանձնեց Անանիա վարդապետի վախճանից հետո: Այսպիսով՝ երեք եղբայրներն արժանավոր զավակներն էին մի պատվական ընտանիքի, որն սկզբից ևեթ զարդարված էր հավատքի և գիտության բարձր շնորհներով:

Նարեկացու «Մատյանի» 51-րդ գլխի առաջին հատվածից պարզվում է, որ մայրը կանուխ է մահացել: Կնոջ մահից հետո, հայրը՝ Խոսրովը, հառաջացավ եկեղեցական նվիրապետության մեջ՝ օծվելով եպիսկոպոս Վասպուրականի Անձևացյաց գավառի, որի հովիվն ու առաջնորդն եղավ մինչև խոր ծերություն: Նա իմացական ու բարոյական առավելություններով օժտված անձնավորություն էր, մտքի ու գրչի մարդ, որն իր կարողություններն ի սպաս դրեց իր հոտին:

Նույնքան, եթե ոչ ավելի արժանիքների տեր էր նրա տիկնոջ հորեղբայրը՝ Անանիա վարդապետը, որին աշակերտեց Գրիգորն իր Հովհաննես եղբոր հետ՝ Նարեկա վանքում: Իր ժամանակակիցներից «Տիեզերական վարդապետ» պատվանվանն արժանացած Անանիան Գրիգորի դաստիարակն էր և մտային կարողությունների հայտնագործողն ու խրախուսողը: Ձեռք բերելով այն բոլորը, ինչ կարող էին տալ ժամանակի հայ ամենաառաջավոր դպրոցները, Գրիգորը հետագայում ինքը դարձավ Նարեկա վանքի դպրոցի հիմնասյուներից մեկը:

Մեծ մտավորականի կյանքի շատ մանրամասներ հայտնի չեն: Հին ձեռագրերից մեզ հասած համառոտ կենսագրականներից երևում է, որ Գրիգոր Նարեկացին ալեկոծ և ցնցումներով լի կյանք է ունեցել: 10-րդ դարում պայքարը սրվել էր եկեղեցու դեմ, որը դարձել էր ֆեոդալական մի հզոր կազմակերպություն: Այդ պայքարը հիմնականում աղանդավորության կերպ ուներ: Եկեղեցին դրան պատասխանում էր ամենադաժան հալածանքներով: Նրանք, ովքեր դույզն իսկ քննադատում էին եկեղեցուն կամ նրա այս կամ այն անդամին, անմիջապես մեղադրվում էին աղանդավորության մեջ և ենթարկվում սոսկալի հալածանքների:



Աբուլ Ալաա ալ-Մաարի
Նկ.՝ Ռուդոլֆ Խաչատրյան

Անանիա և Գրիգոր Նարեկացիները, իրենց լայնախոհության պատճառով, զերծ չմնացին այդ հալածանքներից: Նրանք մեղադրվեցին որպես թոնդրակյան աղանդավորներ: Հին կենսագրականները հավաստում են, թե մեծ թվով եպիսկոպոսներ, իշխաններ, ազատներ ու տանուտերեր են հավաքվել՝ Գրիգորին դատելու, հրապարակավ հանդիմանելու և աքսորելու համար: Բացի ժողովրդական ծագում ունեցող հրաշապատում առասպելներից, հայտնի չէ, թե Նարեկացին ինչպես ազատվեց այդ դատաստանից:

«Մատյանի» շարադրանքն ավարտելուց հետո Նարեկացին «Հիշատակարանում» գրել է. **«Արարիչն արուսյակի, այսինքն՝ լիակատար, նշուլագեղ, արփիաճաճանչ լուսակիր, օրակշիռ, մութը փարատող, ակնապարար, տարիների բազմությունից դարեր կուտակող, ամբարող, անցավոր աշխարհի կյանքը սպառող և նորոգող, արեգակին առաջընթացք հոլովույթով գոյացած ժամանակի՝ Հայկական թվականի ինններորդ հոբելյանից հետո, տասներորդի սկզբին, հռոմայեցիների Վասիլ հաղթական և մեծ կայսեր դեպի հյուսիս-արևելք գալուց երեք տարի հետո, երբ նա իր տերության սահմաններն անչափելի ընդարձակում էր, և անդադար աջ ու ձախ արշավելով՝ իր տերության ծոցն էր լցնում մեծ ու փոքր երկրները և քարե հսկա կոթողներ կանգնեցնում, ահա նույն այդ խաղաղ շրջանում էր, երբ եկեղեցու թշնամիները ջնջվեցին, ծրագրեցի, հիմնեցի, կառուցեցի, շինեցի, հավաքեցի, կանգնեցի, ժողովեցի, բարդեցի, միատեսակ զանգվածի հրաշակերտությամբ կազմեցի այս օգտաշատ գրքի հորինվածքի բազմամասն դրվագները, ես՝ Գրիգոր կրոնավոր քահանա՝ ստեղծագործողներից վերջինն ու վարժապետներից կրտսերը, Նարեկի մեծափառ և բարձրապատիվ ուխտի վանական Հովհաննես ընտրյալ եղբորս հետ, որի հետ թեև երկու անձ, բայց իբրև բանական մեկ մի մարմին, մեկ դեմքով ու կերպարանքով ապրեցինք, նաև հոգով միաշունչ, միակրոն, համապատիվ և զուգահավան, չորս աչքով միակ և նույն մի նպատակի միշտ հառեցինք:**

**Արդ, պատրաստված այս ախորժահամ և բազմասպաս սեղանի ճաշակողներիցդ խնդրում ենք, որ զվարթ սիրով ու բարի մտքով հիշեք մեզ ձեր անկեղծ մաղթանքներում և աղոթքներում, որպեսզի դուք ևս գրվեք անմահության երկնային մատյանում»:**

Այս տողերով Գր. Նարեկացին ավարտել է իր «Մատյանը» 1001 թվականին և իր հոգին ավանդել երկու տարի հետո՝ 1003 թվին:

Ոմանք իրենց հեղինակած գրքերը որոշակի անձի են նվիրում: Նարեկացին ևս իր երկը ձոնեց: Բայց ձոնեց Աստծուն. **«Սրտիս դառնահեծ հառաչանքների // Վայն ու ողբաձայն աղաղակները // Վերընծայում եմ քեզ, ով գաղտնատես. // Եվ իմ սասանված մտքի ճենճերող // Իղձերի պտուղ նվերն այս դրած // Անձս տոչորող թախծի կրակին՝ // Կամքիս բուրվառով առաքում եմ քեզ...»** (գլուխ 1-ին, հատված 1-ին)*:

Այս ձոնից անմիջապես հետո, Նարեկացին իր «Մատյանն»

այսպես է ներկայացնում աշխարհի բանականներին. **«Նորակերտ մատյանն այս ողբերգության, // Ուր պատկերված են, նշավակվելով, // Ամենատարբեր կրքերն ամենքի, // Իբրև ամենայն վիշտ ու ցավերի // Մասնակից, հաղորդ, մեծապես գիտակ // Ու ճշմարտացի մի պատվեր, ավանդ, // Հանձնարարվում է այս երկրի վրա // Հաստատված բոլոր բանականներին, // Համայնատարած քրիստոնյաների // Տիեզերագումար ամբողջ բազմության, // Նրանց, որ նոր են միայն կյանք մտնում, // Որոնք հասել են արդեն արբունքի, // Որ սպասում են վախճանի օրվան՝ անկար ծերությամբ...»** (գլուխ 3-րդ, հատված 2-րդ):

Հետո միայն Նարեկացին սկսում է ներկայացնել իր մեղքերը. **«Թեպետ չափազանց շատ են ծովափնյա՝ // Շեղջերով դիզված ավազներն ու այլ մանրուքներն ամեն, // Բայց տարանջատ են և չունեն բնավ ծնունդ ու աճում, // Ինչպես անհամար, մտովին անգամ անընդգրկելի // Զարագործ ախտն ու արատները իմ. // Մեկն իր ծնունդով, մեկն իր սերունդով, // Մեկն իր ծիլերով, մեկն իր բերքերով...»** (գլուխ 6-րդ, հատված 3-րդ):

Այս կերպ («ոմն և ծնունդք յուր, ոմն և շառավիղք յուր, ոմն և բիծք յուր» և այլն) Նարեկացին զգուշացնում է մարդկանց զանազան մեղքերից: Նա ավելի քան վաթսուն անգամ կրկնում է «ոմն» բառը՝ ճիշտ և ճիշտ զանգակի ղողանջների նման: Այսպես Նարեկացին ցույց է տալիս իր գիտելիքները՝ բազմազանություններով: Ապա մեղադրում է իր անձը. **«Արդ, քեզ արժանի նախատինքների ի՜նչ խոսքեր գրեմ // Մաղթանքներիս այս կտակամատյանի մեջ, // Ո՛վ անձն իմ թշվառ, իսպառ անպատկառ, // Պատասխան տալու համար անբարբառ, // Անպիտան՝ Աստծո և սրբերի հետ հաղորդակցվելու: // Չի եթե մի լիճ, ծովե՞ր նույնիսկ թանաքի փոխեմ, // Թե բազմասպարեզ դաշտերն իրենց ողջ // Անսահմանությամբ դարձնեմ մագաղաթ // Եվ եղեգների շամբ ու պուրակներն, անտառներն ամբողջ // Կտրելով միայն գրիչներ շինեմ, դարձյալ չեմ կարող բարդված իմ անթիվ անօրենության // Մի չնչին մասնիկն իսկ գրի առնել: // Եթե անգամ ողջ մայրի անտառներն այն Լիբանանի // Զոռելով դարձնեմ կշեռքի լծակ // Եվ մի նժարին իբրև կշռաքար // Արարատ լեռը դնելու լինեմ, // Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ // Իջնելով հասնել, համազուգակցել ու հավասարվել // Մյուս նժարի հանցանքներիս հետ»** (գլուխ 9-րդ, հատված 1-ին):

Եվ այսպես Նարեկացին շարունակում է մինչև 25-րդ գլխի 2-րդ հատվածը, ուր բացահայտում է իր ոչ կրոնական գիտելիքները: Նա աղերսանքով պարզում է նավակառուցման գաղտնիքները. **«Քանի որ մինչդեռ չվում էի ես // Անհոգ, աներկբա մի վստահությամբ՝ // Փորձության հազիվ չնչին մի կասկած // Մտանցելով այն փոքր միջոցից, // Որ մնում էր դեռ մինչև հանգրվան, // Համարելով ինձ ժամանած արդեն, // Չմեռը հանկարծ ամառ ժամանակ // Բքաբեր հողմով վրա հասնելով՝ // Երեքալյան իր դիմահարությամբ // Խառնեց-խռովեց անդորրն հիմնովին, // Եվ ալիքների վայրագ բախումից նավը խորտակվեց: // Քայքայվեց սարքը թիավարության, // Հիմնախիլ եղավ կայմը բարձրաբերձ, // Առագաստն ամբողջ իր թռչարանով // Պատառոտվելով՝ դարձավ ծվեններ անկարկատելի, // Զարդերից զրկվեց շինվածքը շքեղ, // Առասանները ձգման՝ խզվեցին, // Տապալվեց գլխի դիտարանը պերճ, // Կտրվեց պարանն ապավանդակի, // Խարսխակալը քանդվեց հիմնիվեր, // Բաժանվեցին զույգ կցման լծակներն հաստ ու ամրակուռ, // Ծռվեցին սամիքն ուղղընթացության, // Սուզվեց հիմնալաստ նեցուկը նավի, // Ղեկն իր կազմվածքով ընկղմվեց անհետ, // Նավարկությունը զրկվեց իր բոլոր հարմարանքներից, // Ողնափայտն ամուր կոտրվեց իսկույն, // Ջստակապերը հոշված՝ թափվեցին, // Ավերակ դարձավ նավագոգն ամբողջ, // Նավախելը իր եզրաշրթերով խախտված դուրս թռավ...»**:

Ընթեցողին կարող է թվալ, որ, տարվելով Նարեկացիով, «մոռացել» եմ Աբուլ Ալաա ալ-Մաարուն: Այդպես չէ: Պարզապես ցանկացա հնարավորինս մանրամասնել, որպեսզի Նարեկացու և Մաարու կյանքի ու ստեղծագործությունների նմանություններն ավելի ակնհայտ լինեն:

Աբուլ Ալաա ալ-Մաարին թեև աշխարհահռչակ անուն է, սակայն նա հայերին առավել ծանոթ է Ավետիք Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմով:

Աբուլ Ալաա ալ-Մաարին ծնվել է Գր. Նարեկացուց 22 տարի անց՝ 973 թվականին՝ Հալեպից 80 կիլոմետր հարավ գտնվող ալ-Մաարա քաղաքում. այստեղից էլ նրա «ալ-Մաարի» (Մաարացի) մականունը: Նրա ընտանիքը մեծատուն և մեծահամբավ է եղել, նրա անդամներից շատերը բարձր պաշտոններ են զբաղեցրել Հալեպի Համդանիների իշխանության մեջ: Աբուլ Ալաայի հայրը՝ Աբդուլլահ ալ-Թաննուխին, Համդանիների հարազատներից էր: Չորս տարեկան հասակում Աբուլ Ալաան ծաղիկ հիվանդության պատճառով կորցնում է տեսողությունը և հանձնվում հոր խնամքին: Վերջինս նրան դասավանդում է անհրաժեշտ գիտելիքները: Տասը տարեկանում, Աբուլ Ալաան սկսում է բանաստեղծություններ հորինել: Իր փափագի համաձայն փոխադրվում է Հալեպ, ուր սկսում է հաճախել այն ժամանակվա դպրոցները և հարստացնում իր գիտելիքները: Հազիվ էր բոլորել տասնհինգ տարին, երբ անողոք մահը խլում է հորը: Պատանի Աբուլ Ալաան մնում է մենակ, սակայն շարունակում է ուսումը՝ ճամփորդելով մշակութային կենտրոններ համարվող քաղաքներով: Այցելում է Անտիոք, Լաթաքիա, Բաղդադ և այլն՝ ըմպելու վսեմ մշակույթի ակունքներից: Բաղդադում լսում է իր մոր մահվան բոթը, վերադառնում է տուն և ինքն իրեն ցմահ բանտարկում իր հայրական տանը: Այդ պատճառով էլ նա անվանվում է «երկու բանտերի դաշնակից» (նկատի են ունեցել կուրությունը և բնակարանը):

Իր բնակարան-բանտում Աբուլ Ալաան սկսում է բազմաբնույթ գրքեր գրել: Նրա ստեղծագործությունները թեև անհամար են, բայց դրանցից մեզ հասածները քիչ են: Դրանցից հիշարժան են «Ռիսալեթ ուլ-ղուֆրանը» («Ջղջումի գիրքը»), «Ռիսալեթ ուլ-մելե՛իքեն» («Հրեշտակների գիրքը») և, մանավանդ, «Ալ-Ֆուսուլ ուալ-ղայաթը» («Եղանակներն ու նպատակները»): Վերջինիս պատճառով Աբուլ Ալաան անաստված համարվեց, իսկ գիրքը որոշվեց այրել: Սակայն Հալեպի իշխանի հրամանով որոշումը չի գործադրվել, որի շնորհիվ էլ այդ գիրքը հասել է մեզ:

«Ալ-Ֆուսուլ ուալ-ղայաթի» մեջ, Նարեկացու նման, Աբուլ Ալաան աշխարհի բոլոր մեղքերը բարդում է իր վրա և ինքն իրեն պատասխանատու համարում մարդկանց բոլոր մեղքերի համար: Այսուհանդերձ նա հույսը դնում է Աստծո ներողամտության վրա. **«Չեմ հուսահատվի Աստծո գթությունից: Նույնիսկ եթե ցայգանման սև լեռների չափ մեղքեր գործեմ և դրանք իմ շուրջ փաթաթեմ գոհարների շարանի նման երկար, և բարեկրոնների արյունը թափեմ ու դրա մեջ սուզվեմ շնածկան նման ու զգեստս ներկվի կարմիրով, կրկին Աստծո թողությունը խնդրելու եմ, եթե ժամանակը դա թույլ տա ինձ ու մահն ինձ չտանի դրանից առաջ: Ու եթե մեղքեր գործեմ հսկա վրանի չափ, սյունը երկինք բարձրանա, ցցերը գետնին խոր մխրճվեն, և պարանները արեգակի շողերի նման լինեն, Աստծո թողությունը դրանք կջնջի»:**

«Մատյանը» բաղկացած է 95 գլխից, իսկ «Ալ-Ֆուսուլ ուալ-ղայաթը»՝ յոթ, ընդ որում՝ յուրաքանչյուր գլուխ հատկացված է արաբական այբուբենի մի տառի:

Մեջբերենք ևս մի հատված՝ Աբուլ Ալաաի հիշյալ գրքից. **«Հարո՛ւստ, դիզեցիր ու բազմացրիր, սակայն մեղքերդ չջնջեցիր: Ո՛չ թե չտեսար, այլ չտեսնել ձևացրիր: Չվախեցար Տիրոջից, ո՛չ էլ ամաչեցիր: Մի՞թե չես հասկանում, որ կյանքն անցավոր մի ամպ է»:**

Աբուլ Ալաան «Ալ-Ֆուսուլ ուալ-ղայաթը» հորինել է իր մոր մահից ու Բաղդադից վերադառնալուց հետո, ինչի ապացույց է նաև գրքի հետևյալ հատվածը. **«Բացակայեցի բավական երկար ժամանակ, իսկ երբ վերադարձա, ոչ մեկին չգտա. տունը շիրիմի էր վերածվել»**:

Ինչպես ինքն է հավաստում, գիրքը գրել է երեսուն տարեկանում. **«Շարունակ բարիք ակնկալեցի ու սպասեցի մինչև լրացավ իմ երեսունը: Կարծես թե ամեն տարի մի խայտաբղետ գառ մորթեցի, որի սպիտակը նրա ցերեկներն էին, իսկ սևը՝ գիշերները: Եվ ասես մի գույնզգույն օձ սպանեցի: Ժամանակը լի է բծերով: Ու երբ լրացավ երեսունս, հասկացա, որ բարիքն ինձնից այնքան հեռու է, ինչպես այն մարդու ակնկալիքը, ով ուզում է ճաշ պատրաստել՝ կաթսան դնելով ճպուռի արձակած կայծերի վրա»**:

Նարեկացին մահացել է 1003 թվականին՝ հիսուն տարեկանում, իսկ Մաարին՝ 1058-ին՝ 85-ում:

Երկու գրքերն էլ շարադրվել են միայն աղոթքներով ու աղերսներով: Դրանցում կան նաև հրաշալի պատկերներ և բազմազան մտքեր, որոնք զարմանալի զուգադիպությամբ գրեթե նույնն են: Օրինակ՝ վերցնենք Մաարու պատկերը լվի՝ այդ փոքր ու գարշելի միջատի մասին, և համեմատենք Նարեկացու համանման շարադրանքի հետ: Աբուլ Ալաան գրել է. **«Կարծում եմ, որ այս միջատը պաշտում է իր Տիրոջը գիշեր ու ցերեկ: Գուցե բծավորներն ունեն այնպիսի պաշտամունք, որը տարբերվում է անբիծների պաշտամունքից: Նրանք անցնում են աղջկա համբուրելիք տեղերից՝ իր նախանձոտ ամուսնու աչքի առաջ: Բայց վերջինս չի նախանձում լվին՝ Աստծո կամքով: Որքան լուն մնա աղջկա մարմնի վրա՝ պտտելով ամեն կողմ, կասկածելի չի թվա, իսկ եթե չշարժվի, խալ կկարծվի: Իսկ երբ քաղցի զգացում ունենա, կխանգարի. դուրս կելնի սննդի համար: Լուն չի՛ վախենում մարդկանցից, որովհետև ինքը ևս մարտնչող է: Նա անբիծ է, բծեր չի թողնում հագուստի վրա: Ճգնավորը կաղոթի նրա հետ, բայց ճգնավորի աղոթքը չի վնասվի: Նա սիրում է կյանքը, բայց փախչում է վտանգից: Իր սնունդը հայթայթելուց և հագենալուց հետո թմրում է և շուտ բռնվում: Բռնողը կկարծի, թե նրան սպանեց, բայց երբ նրան արձակի՝ լուն կաշխուժանա ու կփախչի»:**

Իսկ ահա թե ինչ է ասում Նարեկացին՝ լվի մասին. **«Կան որովայնի ինքնածին ճապուկ, // Խլրտուն, պես-պես բոտոտ ճիճուներ, // Աղիքների գարշ որդեր գաղտնակուր, // Հրափայլ, այրող պալար-այտուցներ, // Պզուկներ, պուտեր, բոցի պես կիզող, // Անիծներ անձև, քրտնածին զազիր // Կսկծեցուցիչ, եռքոր հարուցող ոհմակներ անարգ // Եվ հրոսակներ վայրենաբարո, // Որ ինչպես դևեր գիշերամարտիկ, // Ինչպես մենազեն ու խավարասեր գնդեր բարբարոս // Եվ արաբական խոլ ու քանասար, կատաղի գայլեր, // Կոր-կոր ընթացքով, գույնով արջնաթույր // Եվ կարիճների խայթոցների պես // Կրկնապարույր ու կռածայր կտցով, // Ասես թե դժնիկ փշերով, անվերջ // Խայթում, խոցոտում, ծծում, քամում են արյունը խոնավ // Եվ անկողնի մեջ, հանգստի մահճում // Չարչրկում, լլկում ու տանջում են մեզ: // Իսկ եթե մեկը ձեռք մեկնի հանկարծ // Արժանի պատիժ փոխհատուցելու, // Իսկույն զգում են իրենց պատճառած վնասը մարդուն // Եվ, լերկամարմին իրենց չքությամբ, // Ասես թև առած, թռչում են փութով // Ու ոստոստելով մարախների պես՝ // Փախուստ են տալիս ամեն ուղղությամբ // Եվ բազմապատիր ու նենգաբարո աղվեսի նման // Խորամանկելով՝ մտնում ծակուծուկ, // Որպեսզի փրկվեն մահվան երկյուղից»** (գլուխ 69-րդ, հատված 2-րդ):

Վերոբերյալ մեջբերումները ցույց են տալիս, որ երկու մեծ մտածողները գրեթե նույն պատկերով են ներկայացնում լվին:

Այժմ դիտարկենք, թե Նարեկացին ինչպես է նկարագրում զգայարաններն ու մարմնի անդամները. **«Ահա քեզ կրող երկու միաբան // Անանցանելի ոտներիդ վրա // Հրեշտակաձև դու կառուցվեցիր, // Որ միշտ կրկնաբարձ, վերասլացիկ քո բազուկներով, // Ասես թևավոր, թռիչքով միայն // Երկիրն հայրենի դիտես բարձունքից. // Ո՛վ հիմար, հապա ինչո՞ւ կամովին գետնին կորացար // Ու միշտ երկրային հոգսերով տարված՝ // Անապատական վայրի ցիռերի կարգը դասվեցիր: // Ինչպես բազմաճյուղ մի կանթեղ, մարմնիդ պերճ աշտանակին // Բոլորությունը գլխիդ հաստատվեց, // Որպեսզի նրա շնորհիվ երբեք // Չօտարանալով շնորհի վսեմ օրինատիպին՝ // Տեսնես Աստծուն, անանցականը իմաստասիրես: // Դրա համար նաև ճոխացար պատվով բանականության, // Որ քեզ շնորհված բարեմասնության հաղթանակները // Անկաշկանդ լեզվով պատմես բոլորին: // Կրելով գործուն, արվեստող ձեռքեր, // Ճարտար մատներիդ շառավիղներով, // Իբրև գործակից ամենապարգև աջին Աստծո, // Համացեղությամբ՝ Աստված կոչվեցիր: // Բաղադրվեցիր դու երեք հարյուր վաթսուն հոդերով, // Ի լրումն պատշաճ թվի՝ դրանց հետ // Միավորելով ճանաչողական հինգ զգայարան, // Որ անքննադատ չմնա մտքիդ տեսության կողմից // Քո տեսանելի կազմը նյութեղեն, // Ուր կան անդամներ՝ հաղթ ու զորավոր, // Կան, որ փոքրիկ են, բայց և պիտանի, // Որ կարծրակերտ են, բայց և զգայուն, // Կան, որ գողտրիկ են, ընտիր, պատվական, // Ինչպես նաև կան, որ կարևոր են, բայց ամոթալի: // Իսկ մեկնությունը դրա կգտնես // Նկարված քո մեջ, ա՛նձն իմ եղկելի, // Ինչպես մի անեղծ արձանի վրա. // Ժամանակի տարրն ու տարին կազմող // Իրարահաջորդ թիվը օրերի, // Սահմանված ասես ինչ-որ օրենքով // Մարմնիդ մասերին համապատասխան, // Պետք է որ պահվեն անսխալ ու միշտ անայլայլելի»** (գլուխ 46-րդ, հատված 2-րդ):

Մաարին այլ կերպ է մոտենում այս թեմային. **«Աստված կարող է մարդուն այնպես ստեղծել, որ տեսնի իր ոտքերով, ձայները լսի իր ձեռքերով, մատը լինի արցունքի հոսափող, ճաշակի իր ականջով, հոտոտի իր ուսով, քայլի իր գլխի վրա: Սա դյուրին է Աստծո համար»**: Աբուլ Ալաան շարունակում է. **«Հարատևող գործը, թեկուզ և քիչ լինի, կշատանա: Եթե ամեն օր մի չար բառ խոսես, քո էջը տարեվերջին կսևանա: Ու եթե ամեն օր մի բարիք անես, բարերար կլինես տարեգլխին: Օրը բաղկացած է ժամերից, ամիսը՝ օրերից, տարին՝ ամիսներից, իսկ կյանքը՝ տարիներից»:**

Նարեկացու և Մաարու երկերում նմանություններ կան նաև կարիճի նկարագրության մեջ: Մատյանում կարդում ենք. **«Արդ, ինչպե՞ս հիմա պիտի բժշկվես, ա՛նձն իմ եղկելի, // Երբ խոցոտված ես այսքան տեգերով, // Ըստ մարգարեի՝ ձգված ու լքված, // Տարագիր մի մարդ, անամոթ ու հեգ. // Կուտակված անթիվ ցավերից միայն // Մեկն իսկ լիովին բավական է քեզ // Չարաչար մահվան մատնելու համար. // Այնինչ դեռ որքա՞ն դժնի, սպանող, // Ժանտ դահիճների հրոսակներ են շրջապատում քեզ: // Բայց այս էլ քիչ է արտահայտելու // Տաժանավորիս վիճակը թշվառ: // Ինչպես վխտացող բազմությունն անթիվ ժանտ կարիճների, // Որոնք կրում են պոչի վերջույթում թույն օրհասական, // Պահած մաշկեղեն մի անոթի մեջ, // Արգելարանի թույնամուղ ուղին՝ // Խայթոցն, ամփոփված շրջափակությամբ, // Արտաքուստ թեև բարի են թվում, // Սակայն ներքնապես ամբար են չարի, // Կորստյան պահեստ, կսկիծի կույտեր...»** (գլուխ 45-րդ, հատված 3-րդ):

Այժմ խոսքը տանք արաբ հեղինակին. **«Աստվա՛ծ իմ, ինձ մի՛ դարձրու կարիճի նման: Կարիճներն ամենաանիծյալ արարածներն են, քանզի չարիքն իրենց մայրերից են սերում»:**

Մի ուրիշ տեղ Մաարին ասում է. **«Մեղա՜ Աստծուն, մինչև ժողովի երկնային կարիճի աստղերը, պոչը, մարմինը և երկու թունագեղձերը, որոնք պահ են եկել մի պատի անցքի մեջ, կգա մի մանուկ հետամուտ կլինի մինչև նրանց ոչնչացնելը»:**

Բազմաթիվ են նույն թեմայի շուրջ այս երկու հսկաների ասելիքները, որոնց համար մի հոդվածի էջերը բավարար չեն: Սույն գրությամբ պարզապես մի փորձ արեցինք ընդհանուր պատկերացում տալու այս երկու մտածողների գլուխգործոցների աղերսների մասին:

**Նիզար Խալիլի**
***Քեսաբ (Սիրիա)***

** «Մատյան ողբերգության», Երևան, «Նաիրի», 1996թ.: Աշխարհաբարի է վերածել Վազգեն Գևորգյանը:*

***(արաբերենից արևմտահայերեն է թարգմանել հեղինակը՝ վաստակաշատ թարգմանիչ Նիզար Խալիլին: Արևելահայերենի է փոխադրել «Շրջադարձի» խմբագրությունը:)***

# ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

2004թ. սկզբներից Ամերիկայի Միացյալ Նահանգները ակտիվ շրջանառության մեջ է դրել «Մեծ Միջին Արևելք» ծրագիրը, որի նպատակն է լիովին փոփոխության ենթարկել և վերակառուցել աշխարհագրական հսկայածավալ մի տարածք՝ Հյուսիսային Աֆրիկան, Միջին Արևելքը, Պակիստանը, Աֆղանստանը և Թուրքիան, այսինքն՝ Մեծ Միջին Արևելքը:

Վաշինգտոնը պնդում է, թե Մեծ Միջին Արևելքի վերակառուցումը միտված է այդ տարածաշրջանում լուծել առկա խնդիրներն ու վերացնել ահաբեկչությունը: ԱՄՆ-ը հավելում է, որ «Մեծ Միջին Արևելք» նախագծի իրականացմամբ ցանկանում է տարածաշրջանում հաստատել ժողովրդավարություն, բարեփոխել կրթական համակարգը, հասարակության մեջ բարձրացնել կնոջ տեղն ու դերը և ազատականացնել տնտեսությունը, այլ կերպ ասած՝ արևմտյան, մասնավորապես՝ ամերիկյան արժեքների «ներմուծումը» տարածաշրջանի երկրներ:

Ամերիկյան այս նոր նախագծում, փաստորեն, հաշվի չի առնվել իրանական փորձը, որը հանգեց Իսլամական հեղափոխության, այն դեպքում, երբ 70-ական թվականներին նավթի գների աճի շնորհիվ Իրանում կենսամակարդակը զգալի բարձրացել էր: Հեղափոխությունը սաղմնավորվեց դեռևս 1963թ., երբ Մուհամմեդ Ռեզա շահը կյանքի կոչեց հասարակական-քաղաքական բարեփոխումների մի ծրագիր, որն ընդդիմությունն ու մտավորականությունը գնահատեցին որպես կիսատ-պռատ և ցուցադրական՝ ընդգծելով, որ այն մշակվել է Վաշինգտոնում՝ հաշվի չառնելով երկրի առանձնահատկությունները:

Իրանում Իսլամական հեղափոխությունը միայն ընչազուրկների հեղափոխություն չի համարվում: Իրանցիներն այն հաճախ բնութագրում են իբրև մշակութային հեղափոխություն, տեսակետ, որը լուրջ հիմքեր ունի: Շահը, ձգտելով պատճենել արևմտյան քաղաքակրթությունը, խախտել էր թույլատրելի բոլոր սահմանները՝ կոպտորեն ոտնահարելով Իրանի ժողովրդի ազգային ու կրոնական զգացմունքներն ու ավանդույթները: Մուհամմեդ Ռեզան ջանք չէր խնայել երկիրն արհեստականորեն ամերիկանացնելու:

Թեև Իրանի բնակչությունը կրոնական սկզբունքների հարցում, Մեծ Միջին Արևելքի շատ երկրների համեմատությամբ, զգալիորեն պակաս մոլեռանդ է, ԱՄՆ հանրապետականները, ովքեր քննադատում էին դեմոկրատներին՝ շահական Իրանին ժողովրդավարություն պարտադրելու համար, այժմ իրենք են ձգտում կյանքի կոչել համանման ծրագիր՝ հաշվի չառնելով դրա հնարավոր հետևանքները: Հիրավի դիպուկ է հնչում և բոլորին (այդ թվում՝ Թուրքիային) է վերաբերում ամերիկացի հայտնի ռեժիսոր, 2004թ. Կաննի կինոփառատոնի մրցանակակիր, կինովավերագրող Մայքլ Մուրի տեսակետը: Ս. թ. մայիսի 18-ին RFI ռադիոկայանին տված հարցազրույցում նա շեշտեց. «Եթե ԱՄՆ-ն Իրանի գործերին չմիջամտի, այդ երկրում ամեն ինչ լավ է լինելու, գործընթացներն ընթանալու են բնականոն»: Մուրը հավելեց. **«Անհրաժեշտ է, որ ժողովրդավարական շարժումները բարձրանան ժողովրդի ընդերքից, ժողովուրդն ի՛նքը պետք է պայքարի հանուն իր ազատության: Դա հնարավոր չէ իրագործել դրսի թելադրանքով: Արտաքին միջամտություններով ոչ ոք չի կարող ժողովրդին ազատություն պարգևել»:**

Նշյալ տարածաշրջանի երկրներից անդրադառնանք Թուրքիային: Վերջինս, իրեն համարելով ժողովրդավարական, եվրոպական երկիր, խիստ դժգոհ է այդ նախագծում ընդգրկվելուց: Անկարան ջանք ու եռանդ չի խնայում՝ Եվրամիության (ԵՄ) անդամ դառնալու համար՝ ձգտելով ապացուցել, որ Թուրքիայում իշխողը եվրոպական ժողովրդավարական արժեքներն են: Սակայն իրականում այդ երկրում բնակչությունն ինքնագիտակցության ճգնաժամ է ապրում, երևույթ, որը կարելի է համեմատել Իրանի նախահեղափոխական շրջանի հետ: Բայց և այնպես Թուրքիայում վասն ազգային, կրոնական հիմնարար փոփոխությունների պահանջները բուռն բնույթ չեն կրել այն պարզ պատճառով, որ դրանք զսպվել են 1960-80թթ. բանակի իրականացրած հեղաշրջումներով՝ իսլամականության վերելքի ժամանակահատվածներում: Այդ մասին վկայում է նաև 1997թ. «թավշյա հեղաշրջումը», որով իշխանությունից հեռացվեց իսլամական վարչապետ Նեջմեթին Էրբաքանը: Այդուհանդերձ Թուրքիան հարկադրված էր հօգուտ իսլամականների նահանջի քայլեր կատարել. 1992 թվականից Ղուրանի ուսուցումը դպրոցներում դարձավ պարտադիր, Թուրքիան անդամակցեց Իսլամական համագումար կազմակերպությանը (ԻՀԿ/OIC), Թուրքիայի քրեական օրենսգրքի 163-րդ հոդվածը (աշխարհիկության դեմ քարոզչության արգելք) սղվեց, իսկ դրա փոխարեն կյանքի կոչվեց 198-րդ հոդվածը, որի համաձայն՝ իսլամը վիրավորելու դեպքում նախատեսվում է 6 ամիս ազատազրկում (Keyhan Newpaper, No. 559, 8 June 1995, London): Թեև Անկարան պաշտոնապես դեմ է ծայրահեղ ազգայնականությանն ու իսլամ արմատականությանը, սակայն երկրում ոչ միայն արգելված չէ նշյալ գաղափարները կրող կազմակերպությունների գործունեությունը, այլև իշխանությունները հաճախ համագործակցում են դրանց հետ, երբեմն էլ շահարկում դրանց գոյությունը: Մինչդեռ Մուհամմեդ Ռեզա շահի վարչակարգն անխտիր բոլոր քաղաքական ուժերի դեմ ճնշում էր գործադրում, այլախոհական ամենաանհնշան դրսևորման նկատմամբ ցուցաբերում խիստ անհանդուժողականություն, Թուրքիայում այդօրինակ անհանդուրժողականություն դրսևորվում էր քրդերի հանդեպ: Թուրքերի՝ իսլամին համեմատաբար ավելի հակված լինելու փաստը ոմանք բացատրում են հետևյալ «թևավոր» խոսքով. «Թուրքերը, իսլամ ընդունելով, կայսրության տեր դարձան, իսկ իրանցիները կորցրին շահնշահությունը»:

Թուրքիայում 2002թ. նոյեմբերի 3-ի ընտրություններից հետո իշխանության եկած Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) նախընտրական քարոզարշավի ընթացքում հնչած խոստումներից էր այդ երկիրը ԵՄ անդամ դարձնելու ուղղությամբ առավել ակտիվ գործունեություն ծավալելը: Ահա թե ինչու Թուրքիայի իշխանություններն իրենց բոլոր ջանքերն ու հնարավորությունները գործի էին դրել, որպեսզի նույն թվականի դեկտեմբերի 12-ի կոպենհագենյան գագաթնաժողովում (որտեղ քննարկվում էր անդամության թեկնածու երկրների լիարժեք անդամ դառնալու հարցը), ԵՄ-ն դրական որոշում կայացնի Թուրքիայի անդամակցության վերաբերյալ:

2002թ. նոյեմբերի 20-22-ը Պրահայում, ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակներում, Թուրքիայի նախագահ Ահմեդ Նեջտեթ Սեզերը հանդիպումներ էր ունեցել Ֆրանսիայի, Դանիայի, Մեծ Բրիտանիայի, Իսպանիայի և Իտալիայի առաջին դեմքերի հետ: Հանդիպումների ընթացքում Սեզերը շեշտել էր, որ Անկարայի համար միակ ընդունելին կարող է լինել 2002թ. դեկտեմբերին կայանալիք գագաթնաժողովի ընթացքում ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ բանակցությունները 2003թ. սկսելու բանաձևը («Հյուրիյեթ» օրաթերթ, 22-ը նոյեմբերի, 2002թ.): Իսկ ԱԶԿ ղեկավար, ապագա վարչապետ Ռեջեբ Թայիփ Էրդողանը, սպառնալից հայտարարել էր, թե 40 տարի է, ինչ ԵՄ-ն անորոշության մեջ է պահում Թուրքիային, ուստի

Անկարան ամենայն վճռականությամբ պահանջում է, որ կոպենհագենյան գագաթնաժողովը բանակցություններն սկսելու վերաբերյալ լուրջ որոշում ընդունի («Ռադիքալ» օրաթերթ, 22-ը նոյեմբերի, 2002թ.):

Սակայն, ըստ ամենայնի, Անկարան առավելապես հուսով էր, որ այս հարցում նշանակալից դեր կունենան ԵՄ-ի վրա Վաշինգտոնի գործադրած ճնշումները, մանավանդ, որ նոյեմբերի վերջին արդեն միջազգային զանգվածային լրատվամիջոցները, այդ թվում՝ «Նյու Յորք թայմս» օրաթերթը, հայտնում էին, թե Թուրքիան համաձայնել է համագործակցել Միացյալ Նահանգների հետ՝ Իրաքի վրա հնարավոր հարձակման դեպքում: Նոյեմբերի 21-ին թուրքական «Սաբահ» օրաթերթն ընդգծել էր, թե Վաշինգտոնը շարունակելու է հովանավորել Անկարային՝ ԵՄ-ին անդամակցելու առնչությամբ՝ հավելելով, որ Թուրքիայի տեղը Եվրոպայում է, իսկ բանակցություններն սկսելու ժամկետի հստակեցումը՝ Թուրքիայի իրավունքը: Ամերիկյան «Նյուսուիք» շաբաթաթերթը 2002թ. նոյեմբերի երրորդ համարում, ծավալուն հոդված նվիրելով այդ հարցին, գրել էր, որ Թուրքիան բոլոր առումներով համապատասխանում է ԵՄ անդամակցությանն անհրաժեշտ պայմաններին: Սակայն ո՛չ Թուրքիայի համառումն ու պահանջը և ո՛չ էլ ԱՄՆ ճնշումներն ի վիճակի չեղան ԵՄ-ին հարկադրել հստակ ժամկետ նշանակել՝ այդ երկրի հետ անդամակցության շուրջ բանակցություններ սկսելու համար, չնայած որոշվեց այդ հարցը վերանայել 2004թ. դեկտեմբերին: Անկարային այլ ելք չէր մնում, քան համակերպվել կատարված իրողությանը և ջանքեր գործադրել՝ 2004թ. դրական պատասխան ստանալու համար:

## *Անկարան համառորեն պայքարում է հանուն Եվրամիությանն անդամակցելու*

2004թ. մայիսի 1-ին ԵՄ-ին պաշտոնապես անդամակցեց ևս 10 երկիր: Նախօրեին՝ ապրիլի 30-ին, էրդողանն այս առնչությամբ տված հեռուստահարցազրույցում հայտարարեց, որ ԵՄ-ն պետք է վերջնական ժամկետ նշանակի՝ մինչև ընթացիկ տարվա դեկտեմբեր Թուրքիայի անդամակցության շուրջ բանակցություններ սկսելու համար: Նա շեշտեց, որ այլապես Անկարան իր ուշադրությունը կսևեռի այլ հնարավորությունների վրա, այդ թվում՝ ՆԱՏՕ-ի հետ կարող է շահարկել Կիպրոսի խաղաքարտը: Էրդողանը նշեց նաև, որ Անկարան հույս ունի, որ ԵՄ գագաթնաժողովը ճիշտ որոշում կընդունի Թուրքիայի անդամակցության վերաբերյալ, եթե հավատարիմ է իր հավակնություններին, թե ԵՄ-ի համոզմունքը ժողովրդավարական արժեքներն են և ոչ թե քրիստոնեական ակումբ ստեղծելու ձգտումը (ի դեպ, հանձին ԻՀԿ-ի՝ Թուրքիան իսլամական երկրների ակումբի անդամ է):

Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը ապրիլի 29-ին՝ ԵՄ ընդարձակմանը նվիրված մամուլի ասուլիսում, անդրադառնալով Թուրքիայի անդամակցության հարցին, շեշտեց, որ ուրախ կլիներ դրա համար, միաժամանակ հավելեց, որ յուրաքանչյուր երկիր, որը հավակնում է ԵՄ-ի անդամ դառնալ, պետք է ապահովի անհրաժեշտ պայմանները՝ ժողովրդավարություն, ազատ շուկայական տնտեսություն և մարդու իրավունքների պաշտպանություն, իսկ Թուրքիան, թեև վերջին տարիներին լուրջ ջանքեր է գործադրել այդ ուղղությամբ, սակայն անդամակցելու անհրաժեշտ պայմանները դեռևս չի բավարարում, և, ըստ երևույթին, դրա համար հարկավոր կլինի շուրջ 15 տարի:

Շիրակն արտահայտում էր ֆրանսիական հասարակության մեծամասնության տրամադրությունները: Ըստ վերջերս կատարված հարցախույզի արդյունքների՝ ֆրանսիացիների 70 տոկոսը դեմ է Թուրքիայի՝ ԵՄ անդամակցությանը: Նրանց կարծիքով Թուրքիան արևելյան, մահմեդական երկիր է և լիովին անհամապատասխան ԵՄ-ին (RFI ռադիոկայան, 9-ը ապրիլի, 2004թ.): Ավելին՝ ֆրանսիացի որոշ քաղաքական գործիչներ, ավելի հեռուն գնալով, շեշտել են, որ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին հավասարազոր է վերջինիս մահվան: Նույնը մայիսի 5-ին հայտարարեց նաև Ֆրանսիայի նախկին արտգործնախարար, իշխող կուսակցության ղեկավար Ալեն Ժյուպեն: Նա նշեց, որ Թուրքիային պարզապես պետք է շնորհվի մոտիկ հարևանի արտոնություն (RFI ռադիոկայան, 5-ը մայիսի, 2004թ.):

Ինչպես իրավամբ մայիսի 1-ին նշել է «Ռոյթեր» գործակալությունը, Թուրքիան, ԵՄ-ից մերժում ստանալով, կհակվի դեպի Արևելք՝ ձգտելով մոտենալ նախ՝ Իրանին և արաբական աշխարհին, ապա՝ Ռուսաստանին: Սակայն հաշվի առնելով այն, որ էրդողանի կառավարության գլխավոր նպատակներից մեկը ԵՄ-ին անդամակցելն է, հետևաբար, մերժվելու դեպքում, ծանր վիճակում է հայտնվելու: Դիտորդները չեն բացառում, որ դա կարող է հանգել կառավարության փլուզմանը, ինչից թերևս գոհ կմնան բանակն ու անվտանգության ծառայությունները, ովքեր, իրենց համարելով Աթաթուրքի հիմնադրած աշխարհիկ վարչակարգի պահապաններ, մինչև վերջ չեն վստահում իսլամականի համարում ունեցող ԱԶԿ-ին:

Էրդողանի գլխավորած միակուսակցական կառավարությունը մայիսի 11-ին խորհրդարանի քննարկմանը ներկայացրեց մի օրինագիծ, որին խիստ դեմ է բանակի հրամանատարությունը: Ըստ այդ օրինագծի՝ «Իմամ խաթիբ» կոչվող կրոնական դպրոցների սաներին ընձեռվում է ցանկացած բուհ ընդունվելու հնարավորություն, մինչդեռ ներկա դրությամբ առկա են որոշ սահմանափակումներ՝ պոլիտեխնիկական և բժշկական համալսարաններ նրանց ընդունելության համար: Էրդողանը խորհրդարանում շեշտել է, որ այդ խնդիրը խորհրդարանում կլուծվի, դա Սահմանադրությանը չի հակասում: Վերլուծաբանների կարծիքով ԱԶԿ-ն վճռական է տրամադրված և ձգտելու է օրինագիծն օրենքի վերածելու ճանապարհին հաղթահարել բոլոր արգելքները, այդ թվում՝ նախագահի հավանական վետոն (BBC ռադիոկայան, 11-ը մայիսի, 2004թ.): Եթե դա վերածվի օրենքի, կնշանակի նահանջի ևս մեկ քայլ՝ հօգուտ իսլամականների:

Թերևս ԱԶԿ-ն իշխանությունից զրկվելու հնարավոր հանգամանքով են պայմանավորված նաև էրդողանի բուռն ջանքերը՝ ԵՄ անդամ դառնալու կապակցությամբ: Նա այդ նպատակին է ծառայեցնում ամեն առիթ, նույնիսկ 2003թ. նոյեմբերի 15-ին Ստամբուլում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունները: Այդ ահաբեկչությունների առնչությամբ նոյեմբերի 23-ին BBC ռադիոկայանին տված հարցազրույցում որպես խիստ կարևոր հանգամանք նա նշել էր, որ Թուրքիան դարձել է ահաբեկիչների թիրախը և պետք է մանրակրկիտ վերլուծել դրա պատճառները, քանզի տարիներ ի վեր ոմանք ձգտում են առաջացնել քաղաքակրթությունների բախում: Ըստ էրդողանի՝ ահա թե ինչու այժմ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին առավել կենսական անհրաժեշտություն է դարձել, որովհետև Անկարան ԵՄ-ն քաղաքակրթությունների բախման վայր չի համարում, այլ այստեղ քաղաքակրթությունները փոխըմբռնման և ներդաշնակության են ձգտում: Հարցազրույցի ավարտին, դարձյալ կարևորելով Թուրքիայի՝ ԵՄ-ին հնարավորինս շուտ անդամակցելու հարցը, նա շեշտել էր, որ Թուրքիան այն մո-

դելն է, որտեղ իսլամն ու ժողովրդավարությունը համաձայնության են հասել:

Ս. թ. մայիս 3-ին Թուրքիան հայտարարեց, որ ձերբակալել է «Անսար ուլ-իսլամ» (Իսլամի աջակիցներ) արմատական կազմակերպության 25 անդամի, ովքեր նախապատրաստվում էին ահաբեկչական գործողություններ իրականացնել Ստամբուլում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի ժամանակ: Նշյալ կազմակերպության կենտրոնն, ըստ միջազգային ԶԼՄ-ների, Իրաքում է: Նշվում է, որ այն սերտ կապեր ունի «ալ-Կաիդայի» հետ: Սակայն ձերբակալվածների ազգության մասին չի խոսվում, ինչից կարելի է ենթադրել, որ նրանք թուրքեր են, հանգամանք, որը դարձյալ վկայում է Թուրքիայում իսլամ արմատականների աշխուժացման մասին: Այդ երևույթը վերլուծաբանները (այդ թվում՝ արևմտյան), իրավամբ հակված են մեկնաբանել Թուրքիայում ինքնագիտակցության ճգնաժամով: Քաղաքական իսլամի կողմնակիցներից շատերին թվում էր, թե ԱԶԿ-ի իշխանության գալով՝ երկրում գործելու են շարիաթի օրենքները, մինչդեռ շարունակում են իշխել քեմալական օրենքներն ու արժեքները, ուստի հիասթափված զանգվածները հակվում են դեպի ծայրահեղական խմբեր: Այլ կերպ ասած՝ 80 տարվա ընթացքում թուրքերի մեծ մասը ոչ միայն այդպես էլ չի յուրացրել բանակի օգնությամբ պարտադրված ու պաշտպանվող աշխարհիկ ժողովրդավարությունը, այլև հայտնվել է ինքնագիտակցության սուր ճգնաժամում, ինչը բացակայում է Մեծ Միջին Արևելքի մյուս երկրներում:

Ներկա դրությամբ թուրք ժողովուրդը դեռևս ձգտում է վերագտնել իր իսլամաթուրքական ինքնությունը, որտեղ արևմտյան ժողովրդավարական արժեքները, մեղմ ասած, տեղ չունեն: Կրկնենք՝ խոսքը թուրքերի չնչին տոկոսի մասին չէ, այլ այն հսկայական զանգվածի, որի համար արևմտյան ժողովրդավարությունը հասարակական պահանջ չէ: Հետևաբար ԵՄ-ի հնարավոր մերժումը պայմանավորված կլինի նաև այդօրինակ հանգամանքներով և ոչ բնավ Թուրքիայում իշխող կուսակցության քաղաքական կողմնորոշմամբ: Եվրոպական մերժումը լինելու է որևէ կուսակցության իշխանության դեպքում, այլ կերպ ասած՝ եթե ԱԶԿ-ն իշխանությունը հանձնի աշխարհիկ որևէ այլ կուսակցության, ապա դա ԵՄ որոշումների վրա ազդեցություն չի ունենալու:

## *Հնարավոր զարգացումները Թուրքիայում և ՀՀ շահերն այդ համատեքստում*

Թվում է՝ ԵՄ-ից Թուրքիայի դուրս մնալը պետք է մտահոգեր նաև ՀՀ-ին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՄ անդամ Թուրքիան տրամաբանորեն նվազ սպառնալիք կարող է լինել: Բացի այդ՝ ԵՄ անդամը չի կարող շրջափակել ՀՀ-ն, և, ի վերջո, ՀՀ-ն ԵՄ-ի անմիջական հարևանն է դառնալու և այլն: Սակայն իրականում ԵՄ-ին անդամակցելով՝ Թուրքիայի էությունը չի փոխվելու. նա երբեք չի դառնալու եվրոպական ցուցանիշներով երկիր: Ավելին՝ բացառված չէ, որ ԵՄ անդամ լինելու արտոնությունները Թուրքիան կօգտագործի ընդդեմ հայության: Ուստի անդամության թեկնածուի կարգավիճակը, որ երբեմն «զսպաշապիկի» դեր է կատարում, առավել նպաստավոր իրավիճակ է մեր շահերի տեսանկյունից:



Ինչ վերաբերում է ԵՄ-ից Թուրքիայի դուրս մնալուն, ինչն ամենայն հավանականությամբ կհանգի վերջինիս արևելյան կողմնորոշմանը, պետք է նկատի ունենալ նաև, որ այդ դեպքում Անկարան տուրք է տալու իր ծավալապաշտական նկրտումներին. բայց և նպատակամղված ձգտելու է իր գերակայությունը հաստատել տարածաշրջանում, ինչը հազիվ թե ողջունեն շրջակա երկրները: Պատմական փորձը ցույց է տալիս, որ թուրք իսլամականները իսլամի գաղափարախոսությունը միշտ էլ ծառայեցրել են ծավալապաշտական նպատակների իրագործմանը: Հիշենք երիտթուրքերին, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում «իսլամական միասնություն» կարգախոսի ներքո նպատակամղվել էին զավթել և կցել Անդրկովկասի մահմեդաբնակ շրջաններն ու Իրանի Ադրբեջան նահանգը: Դրա վառ ապացույցն է նաև Թուրքիայի նախկին վարչապետ Նեջմեթթին Էրբաքանի փորձը. որդեգրելով իսլամական աշխարհին մերձենալու քաղաքականություն՝ նա խոսում էր իսլամական ընդհանուր շուկայի ստեղծման մասին, անշուշտ, Թուրքիայի ղեկավարությամբ:

Մյուս կողմից՝ եթե Թուրքիան ԵՄ անդամ դառնալու հույսը վերջնականապես կորցնի և հակվի դեպի Արևելք՝ իսլամական աշխարհ, ակնհայտ է, որ դա լուրջ հարված կլինի Անկարա-Թել Ավիվ ռազմավարական փոխհարաբերություններին, քանզի Թուրքիան, ռազմավարական սերտ փոխհարաբերություն հաստատելով արաբական աշխարհի և Իրանի հետ, հարկադրված կլինի վերանայել Իսրայելի հետ իր փոխհարաբերությունները, այդ թվում՝ նրա հետ կնքած ռազմավարական պայմանագրերը: Այլապես իսլամական և, մասնավորաբար, արաբական աշխարհի հետ մերձենալը թերևս հնարավոր չլինի: 1997թ. Անկարայի նախաձեռնությամբ ձևավորվեց D-8 անվամբ հայտնի, իսլամական ութ խոշոր երկրների (Իրան, Պակիստան, Թուրքիա, Բանգլադեշ, Ինդոնեզիա, Մալայզիա, Նիգերիա, Եգիպտոս) տնտեսական համագործակցության խումբ: Անկարայում էլ տեղի ունեցավ D-8-ի առաջին՝ հիմնադիր գագաթնաժողովը: Սակայն իսլամական համագործակցության այս նախաձեռնությունը սկզբից ևեթ ճաք տվեց. բացակայում էր Եգիպտոսի նախագահ Հուսնի Մուբարաքը՝ որպես բողոքի նշան՝ 1996թ. Թուրքիա-Իսրայել ռազմավարական առաջին պայմանագրի ստորագրման դեմ: Ավելին՝ Թեհրանի նորաբաց միջազգային օդանավակայանը ս. թ. մայիսին 9-ին փակվեց լոկ այն պատճառով, որ օդանավակայանի ծառայությունների և անվտանգության համակարգերի կառավարումը հանձնվել էր թուրքական ԹԱՎ (T. A. V.) ընկերությանը. պարզվեց, որ նրա բաժնետոմսերի 50 տոկոսը պատկանում է Իսրայելին: Հետևանքը եղավ այն, որ Իրանի տրանսպորտի նախարարությունը հրաժարվեց ԹԱՎ-ի հետ համագործակցությունից, իսկ վերջինս վտարվեց Իրանից:

Թուրք-իսրայելական փոխհարաբերություններում հետընթաց լուրջ փոփոխությունները, մասնավորապես՝ ռազմավարական կապերից հրաժարումը, պայմաններ կստեղծեն, որպեսզի Թել Ավիվը պաշտոնապես ճանաչի Հայոց ցեղասպանության փաստը: Դրան, անշուշտ, կհետևի նաև Վաշինգտոնի համանման քայլը, քանզի Իսրայելն այլևս Թուրքիայի շահերը չի պաշտպանի ինչպես այսօր, ի հետևանս որի Թել Ավիվը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում լիովին բաժանում է Անկարայի տեսակետը:

Այսուհանդերձ, հաշվի առնելով տարածաշրջանում տիրող իրավիճակը (ինչից էլ բխում է Անկարա-Թել Ավիվ ռազմավարական կապերի պահպանման անհրաժեշտությունը), կարծում ենք՝ քանի դեռ չի կարգավորվել միջինարևելյան հիմնահարցը, Վաշինգտոնը լուրջ ջանքեր կգործադրի, որպեսզի առնվազն պահպանվեն Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու հույսերը: Մյուս կողմից՝ եթե, այսուամենայնիվ, Ամերիկայի Միացյալ Նահանգները Թուրքիային ընդգրկել է «Մեծ Միջին Արևելքի» նախագծում, թերևս նկատի ունենալով նաև այն, որ Թուրքիան դեռևս հեռու է ժողովրդավար լինելուց, կարելի է ենթադրել, որ Վաշինգտոնը, վերջին հաշվով, Թուրքիային Մեծ Միջին Արևելքում է տեսնում և ոչ թե Եվրոպայում:

***Էմմա Բեգիջանյան***
**24 մայիսի, 2004թ.**

# ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՂԱՐԱԲԱՂԱՑՈՒՄ, ԹԵ՞ ԹՐՔԱՑՈՒՄ...

**Շարունակում ենք նախորդ համարում սկսած մեր հրապարակումը՝ 1999թ. Մոսկվայում լույս տեսած և 2003թ. վերահրատարակված «Ազգային պատմությունները խորհրդային և հետխորհրդային պետություններում» ժողովածուի մեջ պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Հարությունյանի և քաղաքագետ Ալեքսանդր Իսկանդարյանի համահեղինակած «Հայաստան. Ազգային պատմության «ղարաբաղացումը» » հոդվածի վտանգավոր և ապազգային դրույթների դեմ:**

Բ. Հարությունյանի և Ալ. Իսկանդարյանի այս տխրահռչակ հոդվածին արձագանքեց նաև Մոսկվայի պետական համալսարանի դասախոս, փիլ. գիտ. թեկնածու Ալեքսանդր Գրիգորյանը: Նրա «Ազգային պատմության «ի՞նչ կհաճեքություն»» վերնագրով հոդվածը հայտ-նըվեց նույն՝ «Դե ֆակտո» գործակալության կայքում և լույս տեսավ «Գոլոս Արմենիի» թերթի ս. թ. ապրիլի 6-ի համարում:

Գրախոսն անդրադառնում է ժողովածուի վերահրատարակությանը: Նույն այդ հրատարակության «Նախաբանի» հեղինակ, Ֆրիդրիխ Նաումանի ֆոնդի մոսկովյան ներկայացուցչության ղեկավար դոկտ. Ֆալկ Բոմսդորֆի խոսքից նա մեջբերում է հատվածներ, որտեղ, մասնավորապես, կարդում ենք. **«Հետխորհրդային շատ երկրներում առ այսօր հաջողությամբ չի պսակվել նախկին կարծրատիպերն ու մտածելակերպը և, ամենագլխավորը, գործելակերպը հաղթահարելու փորձը... Բացի դրանից՝ հետխորհրդային շատ պետություններում պահանջվող ապաառասպելականացման փոխարեն ավելի շատ վերաառասպելականացման գործընթաց կարելի է նկատել: Ընդ որում, մի շարք երկրներում պատմության և նոր ինքնության ստեղծման բազմաթիվ ինտենսիվ փորձերը շարունակվում են, ճիշտ է՝ ոչ միշտ դրական արդյունքով»** (էջ 8):

Ալ. Գրիգորյանը, մեկնաբանելով այս արտահայտությունները, գրում է. ***«Այլ կերպ ասած՝ աստիճանաբար «բարեփոխվե՛ք», պարոնայք պատմաբաններ, համառորեն «պահանջվում է» «դրական արդյունք», այլապես այսուհետ հույս մի՛ դրեք մեր դրամաշնորհների վրա»***:

Ալ. Գրիգորյանը նկատել է տալիս, որ ***«Հարգարժան հովանավորներն ու ժողովածուն կազմողներն այս հարցում որևէ հավակնություն չունեն Բ. Հարությունյանի ու Ալ. Իսկանդարյանի նկատմամբ, ովքեր հիանալի են կատարել իրենց առաջ դրված խնդիրները»:***

Գրախոսը, մեջբերելով ժողովածուի խմբագիրներ Կ. Այմերմախերի և Գ. Բորդյուկովի «Ներածականից» հիշյալ զույգի «վերլուծության» շատ բարձր գնահատականը, դիպուկ դիտարկում է. ***«Նույնիսկ պատվիրատուները չէին սպասում իրենց ազգային պատմության հարցում «ինչ կհաճեքության» այնպիսի բարձրագույն մակարդակ, որին հասել են Բ. Հարությունյանն ու Ալ. Իսկանդարյանը՝ իրենց համատեղ հոդվածում»:***

Եվս մի քանի մեջբերում անելով այս զազրաբանությունից՝ Ալ. Գրիգորյանը եզրակացնում է, որ սույն հոդվածում ***«յուրաքանչյուր նորմալ մարդու համար ազգային արժանապատվության զգացումը և հայ պատմագրության ավանդույթում անկախ ազգային կեցության արժեքների հիմնավորումը նույնացվում են ազգային սնապարծության հետ: Մեր կարծիքով՝ նման նույնականացումը բնորոշ է այն մարդկանց, ովքեր զուրկ են սեփական արժանապատվության զգացումից»:***

Այնուհետև Ալ. Գրիգորյանը մեջբերում է հոդվածի կարևորագույն ենթավերնագրերից մեկը՝ **«Պատմագրությունը էթնոքաղաքական հակամարտության «ծառայության մեջ» »**, նաև իբր ազգային պայքարը օրինականացնելու «կոչված» պատմաբանների մասին հայազգի զույգ հեղինակների զառանցանքը և հարց է տալիս. ***«Սա ինչպե՞ս պետք է հասկանալ: Եթե պատմաբանները կոչված են «օրինականացնելու» ազգային պայքարը, նշանակում է՝ այդ պայքարն ըստ էության օրինական չի՞ եղել»:***

Ալ. Գրիգորյանը զուգահեռներ է անցկացնում հոդվածի որոշ «վերլուծությունների» և Հեյդար Ալիևի՝ **«Ադրբեջանցիների ցեղասպանության մասին»** հրամանագրի (որն, ի դեպ, տեղ է գտել սույն ժողովածուի «Հավելվածում») միջև և կարծիք հայտնում, որ հայանուն հոդվածագիրները գրեթե կրկնում են ադրբեջանական Աթաթուրքի դրույթները՝ հայկական խեղաթյուրող պատմագիտության մասին: Հոդվածագիրների՝ Երևան-Ստեփանակերտ-Բաքու ձևաչափով հակամարտության գոյության մասին ցաբռտուքը գրախոսը գնահատում է որպես օտարների աշխարհաքաղաքական պատվեր: Նա գրում է, որ հոդվածագիրների այս դրույթը նշանակում է՝ ***«Հայաստանը հանդես եկավ Ադրբեջանի նկատմամբ տարածքային պահանջներով, որոնք օրինականացնելու համար դիմեց իր պատմաբաններին, և միայն դրանից հետո նման հարց բարձրացրին Լեռնային Ղարաբաղի հայերը՝ Ալիևի խոսքերով՝ հիմարացված ազգայնամոլական կամ, Բ. Հարությունյանի և Ալ. Իսկանդարյանի ձևակերպմամբ, «գերհաղթական էթնոկենտրոնության» քարոզչությամբ:***

***Այս դրույթն են համառորեն առաջ մղում ադրբեջանցի դիվանագետները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացուցիչներին՝ որպես հակամարտության լիիրավ կողմ՝ հակամարտության կարգավորման բանակցություններին թույլ չտալու համար»:***

Ալ. Գրիգորյանը «սուտ» և «սադրիչ» է

«(Հայ - խմբ.) հասարակությունն ունի կոլեկտիվ բարդույթներ»:
Բ. Հարությունյան և Ալ. Իսկանդարյան, «Հայաստան. Ազգային պատմության «ղարաբաղացումը» », Մոսկվա, 1999թ.

**24 Nisan sendromu**

«24 ապրիլի ախտանիշը», «Հուրիյեթ» օրաթերթ, Թուրքիա, 20 ապրիլի, 2001թ.

«(Հայ - խմբ.) հասարակությունն ունի կոլեկտիվ բարդույթներ»:
Բ. Հարությունյան և Ալ. Իսկանդարյան, «Հայաստան. Ազգային պատմության «ղարաբաղացումը» », Մոսկվա, 2003թ.

համարում հեղինակային զույգի այն հաստատումը, թե հայ ժողովրդի գիտակցության մեջ **«ամուր տեղ է գտել այն հայեցակետը, որ հայերը միակ քաղաքակիրթ ժողովուրդն են՝ վայրենիների շրջապատում»:** Գրախոսը դիտարկում է. ***«Տարբեր ժամանակներում հայերին «շրջապատել են» և՛ հույները, և՛ պարթևները, և՛ արաբները, և՛ պարսիկները, և՛ այլ ժողովուրդներ, որոնց հետ հարաբերություններն այնքան էլ պարզ չեն եղել, սակայն պնդել, որ հայերն այդ ժողովուրդներին «վայրենիներ» են համարել, նշանակում է ոչ միայն մեղք գործել ճշմարտության դեմ, այլև զրպարտել սեփական ժողովրդին: Ինչ վերաբերում է թուրքերին... Այստեղ, ի մեծ ցավ մեզ, հարկավոր է խոստովանել, թե նրանք բացառություն են «չկան վատ ժողովուրդներ, կան վատ մարդիկ» կանոնից: Սա ցավալի է, որովհետև մենք դատապարտված ենք հարևան լինել այս ժողովրդի հետ, որի գազանությունն «իր չափերով և գարշելի դաժանությամբ գերազանցում է պատմության մեջ բոլոր հայտնի դաժանությունները» (Ֆրիտյոֆ Նանսեն)» »:***

Գրիգորյանը հարց է տալիս. ***«Արդյո՞ք Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկանը մտածում է այնպես, ինչպես գրել է քննարկվող հոդվածում՝ ռուսալեզու ընթերցողի համար: Արդյո՞ք նա նման «ի՞նչ կիսաճեքության» ոգով է դաստիարակում հայ պատմաբանների նոր սերնդին: Եթե դա նույնիսկ այդպես չէ, եթե նույնիսկ նա չի համարձակվում նման հայտնագործությունները հաղորդել ԵՊՀ-ի ամբիոնից, դժվար է թերագնահատել այն վնասը, որը նա պատճառել է Ալ. Իսկանդարյանի համահեղինակությամբ գրած և արդեն երկրորդ հրատարակությամբ լույս տեսած հոդվածում»...***

Մեջբերենք ևս մի քանի «գոհարներ»՝ այս տխրահռչակ հոդվածից, որոնք վրիպել են Լ. Մելիք-Շահնազարյանի և Ալ. Գրիգորյանի ուշադրությունից կամ համարժեք գնահատական չեն ստացել.

- **«Հայաստանի պատմության մեջ չափազանց կարճ են եղել այն ժամանակաշրջանները, երբ նա անկախ պետություն է եղել»:** Սա հայոց պատմության կեղծարարության գլուխգործոց է՝ թուրք «պատմաբանների» զինանոցի հիմնական զենքերից մեկը:

- **«Արևմտահայաստան»** եզրի փոխարեն հայանուն հեղինակները գործածում են **«մինչև ցեղասպանությունը հայերով բնակեցված շրջաններ»** (էջ 149), **«Թուրքիայում նախապես հայերով բնակեցված տարածքներ»** (էջ 159, ծնթ. 32) ձևակերպումները, որոնք ևս նույնքան հաջողությամբ գործածում են հեղինակների թուրք գործընկերները:

- **«Սփյուռքի հայերի տեսակետից՝ Հայաստանն այլևս գոյություն չուներ (խորհրդայնացումից հետո - Գ. Յ.)»** (էջ 149): Կատարյալ ու անհիմն սուտ:

- Թե՛ խորհրդային և թե՛ սփյուռքի պատմագրությունները **«տառապում էին համապատասխան խեղաթյուրումներով և լռությամբ»** (էջ 149): Հիշեցնենք, որ այս արտահայտությունների հեղինակներն իրենք իրենց ոչ թե թուրք, այլ հայ են համարում:

- Հայերի ռուսամետության մասին դրույթի դեպքում **«պատմությունը գիտակցաբար խեղաթյուրվեց»** (էջ 151): Խեղաթյուրողները հիշյալ արևմտամետ, արևմտյան փողերով այս հոդվածը հեղինակողներն են:

- **«Արևմուտքի հայկական գաղթօջախները հիմնականում բնակեցված են Արևմտյան (Թուրքական) Հայաստանից արտագաղթածներով... Այդ մարդիկ Թուրքիայի ներկայիս տարածքը համարում են իրենց փոքր հայրենիքը»** (էջ 152): 1) Ցավոք սրտի, հոդվածը հեղինակելիս (90-ական թվականների վերջ), արևմտյան գաղթօջախների հայերի զգալի տոկոսն արտագաղթել է ՀՀ-ից: 2) Իսկ թե ինչ է նշանակում **«փոքր հայրենիքը»**, հավանաբար միայն հոդվածագիրներին է հայտնի: 3) Հայոց պատմության նրբություններին անծանոթ ռուսալեզու ընթերցողին այն միտքն է պարտադրվում, որ սփյուռքահայերն իրենց Հայրենիքը համարում են ներկայիս Թուրքիան:

- **«...միայն հայերին թույլ տրվեց, սկսած 1946թ., վերադառնալ Պատմական Հայրենիք»** (էջ 152): Պատմագիտության դոկտոր (?!) Բաբկեն Հարությունյանը գոնե ինքը պետք է հիշեր, թե 1920-30-ական թվականներին տասնյակ հազարավոր հայեր են ներգաղթել Խորհրդային Հայաստան: Ավելին՝ 1946-48թթ. ներգաղթողների մասին գրվել է, թե **«նրանք ազգային անկախության գաղափարի կրողներ չէին»** (էջ 152): Տարօրինակ է, սակայն, որ 1949թ. այդ ներգաղթողներից շատերը Ալթայ և Սիբիր աքսորվեցին՝ հենց այդ գաղափարը կրելու համար...

- Հեղինակները, իրենց անդրօվկիանոսյան պատվիրատուներին առավել հաճոյանալու համար, ակնհայտ ափսոսանքով նշում են, որ 1990-ական թվականներին հայերն **«սկսեցին վերանվանել ադրբեջանական անուններ կրող քաղաքները, փողոցներն ու շրջանները»** (էջ 155):

- **«Անհնար է ներկայիս Հայաստանը համարել հին հայկական թագավորությունների ժառանգորդը»** (էջ 155): Խնդրեմ, սա էլ հեղինակների այցեքարտը...

- Հայտարարվում է, որ հայ ժողովուրդը **«յոթ հարյուր տարի պետականություն չի ունեցել»** (էջ 157): Ակնարկը վերաբերվում է 1375թ. Կիլիկիայի հայոց թագավորության անկմանն ու 1918թ. ծնունդ առած Հայաստանի առաջին Հանրապետությանը: Պարզ թվաբանական գործողություն կատարելով (1918-1375=543)՝ ստացվում է նվազ, քան 550 տարի: Խորհուրդ ենք տալիս տիտղոսակիր պարոններին՝ վերստին դպրոց գնալ՝ տարրական թվաբանություն սովորելու համար: Մյուս կողմից՝ ո՞վ ասաց, որ հայ ժողովրդի որոշ հատվածներ (Արցախ, Սյունիք, Շատախ, Զեյթուն և այլն), գերիշխանության առավել կամ նվազ լիազորություններով, պետականության մարմիններ չեն ունեցել այդ **«յոթ հարյուր տարիների»** ընթացքում:

- Հայ **«հասարակությունն ունի կոլեկտիվ բարդույթներ»**, ավելի որոշակի՝ **«հակաադրբեջանական տրամադրություններ»** (էջ 157): Նախընտրելի պիտի լիներ, որ Ռամիլ Սաֆարով կոչեցյալն իր կացինն իջեցներ Բաբկեն Հարությունյան-Ալեքսանդր Իսկանդարյան զույգի գլխին, որպեսզի վերջիններս հասկանային, թե չի կարելի նման կեղտագրերով բթացնել հայության զգոնությունը, որը բառացիորեն մահացու է...

Կան նաև այնպիսի անճշտություններ, որոնք վայել չեն նույնիսկ կրտսեր դպրոցականներին, ուր մնաց՝ գիտական աստիճաններ ունեցող սույն «պատկառելի» այրերին: Այսպես՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի բացման տարեթիվ է նշվում **1965-ը** (էջ 151)՝ 1967թ. փոխարեն, վարդապետ Մեսրոպ Մաշտոցը հայտարարվում է **եպիսկոպոս** (էջ 156):

Սխալների ու խեղաթյուրումների վերաբերյալ՝ առայժմ այսքանը: Ավելացնենք միայն մեկ «մանրուք»: Սույն նյութերի ժողովածուի հրատարակիչ «ԱյրոXX» հրատարակչության խմբագրական խորհրդի անդամ է ոչ անհայտ ամերիկացի քաղաքական վերլուծաբան Պոլ Գոբլը: Այսքանից հետո արժե՞ պարզել, թե ովքեր են Հարությունյան-Իսկանդարյան տանդեմի սույն զազրախոսության պատվիրատուները...

Իսկապես տեղին է Ալ. Գրիգորյանի այն մտահոգությունը, թե Բաբկեն Հարությունյանն ա՞յս ոգով է դաստիարակում հայ պատմաբանների նոր սերնդին: Այդ «դաստիարակությունը» տալիս է իր պտուղները նույնիսկ սփյուռքում: Օրինակ՝ Բ. Հարությունյանի սիրասուններից մեկը՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտ Արա Սանջյանը (այլ հարց, որ սա Լոնդոնում հրատարակած իր դոկտորական ատենախոսության մեջ իր կենսագրականում նույնիսկ չի ակնարկում, թե հինգ տարի սովորել է ԵՊՀ-ում), Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչն է: Այդ տարիների ընթացքում ամբիոնը գոնե մեկ ուսանող չի ունեցել: Մելգոնյան կրթական հաստատությունը տարիներ առաջ նրան հրավիրել էր Մեծ եղեռնի տարելիցի առթիվ դասախոսություն կարդալու: Սանջյանը համոզմունքով ասել է աշակերտներին. **«Չենք կարող աշխարհին ապացուցել, որ Հայոց ցեղասպանություն է տեղի ունեցել»**, իսկ




իր խմբագրած «Հայկազեան հայագիտական հանդէս»-ում գրել է, որ **«մինչև չբացվեն Թուրքիայի արխիվները, չենք կարող իմանալ, թե ինչ նպատակ էր հետապնդվում Հայոց ցեղասպանությամբ»** և նման «հիասքանչ», «բաբկենհարությունյանական» մտքեր:

Հիշեցնենք նաև, որ Բաբկեն Հարությունյանն ակտիվորեն ընդգրկվել էր նույն հակահայկական շրջանակներից ֆինանսավորվող, Սանկտ Պետերբուրգի սիոնական շրջանակների հետ սերտ կապեր ունեցող Կարեն Յուզբաշյանի «Արցախ-Ղարաբաղը որպես պատմամշակութային առանձին երևույթ» ծրագրի հեղինակային խմբում: Ծրագրի տապալմանը նպաստեց ներքոստորագրյալիս ելույթը՝ «Հայոց աշխարհ» օրաթերթում (2001թ., նոյեմբեր)՝ հարուցելով Կ. Յուզբաշյանի, Բ. Հարությունյանի և սրանց համախոհներ Պարույր Մուրադյանի, Մերուժան Կարապետյանի ու այլոց թշնամանքը՝ անձիս նկատմամբ:

Բացահայտելով այս պատվիրված հոդվածի բուն էությունը՝ դիմում ենք ՀՀ կրթությունն ու գիտությունը ղեկավարելու կոչված պատասխանատուներին, մասնավորապես՝ ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանին, ՀՀ կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանին, ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանին, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Հայկ Ավետիսյանին, ՀՀ ԱԺ գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հրանուշ Հակոբյանին, ՀՀ ԳԱԱ նախագահությանն ու պատմագիտական երեք ինստիտուտների ղեկավարներին, համալսարանների պատմագիտության ամբիոնների վարիչներին և, ի վերջո, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի աշխատակիցներին՝ հստակ դիրքորոշումով հրապարակայնորեն հանդես գալու պահանջով: Այս հարցում լռությունը հավասարազոր ենք համարելու մեղսակցության՝ Հարությունյան-Իսկանդարյան տանդեմի հետ:

**ԵՊՀ պատմության ֆակուլտետի նախկին դեկան (մինչև 2003թ. վերջը), այժմ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող և պատմագիտության աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի փոխնախագահ Բաբկեն Հարությունյանին պետք է զրկել նրա զբաղեցրած պաշտոններից և արգելել նրա դասախոսական գործունեությունը՝ հայկական հիմնարկներում:** Նա, որպես «տաշված քար», իհարկե, գետնին չի մնա: Նրան նման, թերևս է՛լ ավելի «պրեստիժային» պաշտոններ կարող են շնորհել Բաքվում, Անկարայում, Ստամբուլում... «Հո՛շ գելդին, էֆենդի՛մ» («Բարո՛վ եկար, էֆենդի՛»)...

***Գևորգ Յազըճյան***

**Պատմ. գիտ. թեկնածու**

**Հ. Գ.-** 1. Հայաստանի անկախության 86-րդ տարեդարձի նախօրյակին, հյուրընկալվելով ԱԼՄ հեռուստաեթերում, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պատմագիտության դոկտոր, պրոֆ. Էդվարդ Զոհրաբյանը կոչ արեց բնականոն հարաբերություններ հաստատել ՀՀ-ի և Թուրքիայի միջև: Նա «զգացմունքային» անվանեց հայերի հակաթուրքական արտահայտությունները՝ հայտարարելով, որ հարկավոր է հրաժարվել նման մոտեցումներից: Ինչպե՞ս չասես՝ թուրք-հայկական «հաշտեցման» մունետիկները հիմնավորապես արմատավորվել են մայր բուհում...

Հայ դատի աննկուն մարտիկներ՝ պատմագիտության դոկտորներ՝ երջանկահիշատակ Բագրատ Ուլուբաբյանն ու ակադ. Լենդրուշ Խուրշուդյանը պատգամում էին. ***«Հայ պատմաբանը ներկա ժամանակներում պետք է զինվո՛ր լինի», «Մարտնչո՛ղ պետք է լինեն և՛ հայագետը, և՛ հայագիտությունը»***: Սույն հրապարակման «հերոս» պարոններին կարելի՞ է զինվոր անվանել: Եթե այո, ապա միայն՝ դասալիք զինվոր...

2. Դոկտ. Արա Սանջյանն այս հրապարակմանը պատասխանեց Բեյրութի «Արարատ» շաբաթաթերթում (14-20. 05. 2004)՝ ճգնելով «հերքել» իր հասցեին սույն հրապարակման մեջ հնչած քննադատությունները: Այս «պատասխանին» հնարավոր չէ պատասխանել մի քանի պարբերությամբ: Սույն պարոնը հեգնանքով է արտահայտվում արմատներով արևմտահայ Գևորգ Յազըճյանի... արևելահայերեն ելույթների և մեջբերումների մասին՝ «մոռանալով», որ հենց ինքն է արևելահայերեն հոդված ստորագրել «Հայ սփյուռք» հանրագիտարանում: Մեզ համար և՛ արևելահայերենը, և՛ արևմտահայերենը հավասարարժեք են՝ որպես ՄԵԿ ազգի լեզվի տարբեր դրսևորումներ: Չի՛ կարելի հայ անվանել որևէ արարածի, ով կհանդգնի տարանջատել մեր լեզուն՝ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՆ ու ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ...

**«Շրջադարձ»**

# ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 2004թ. մարտի կարևորագույն իրադարձությունները

1 - «Նեշընալ Ջեոգրաֆիկ» (National Geographic) ամսագիրը տպագրել է հոդված՝ նվիրված Հայոց ցեղասպանության պատմությանը: Դա բողոքների ալիք է հարուցել Թուրքիայում:

- Թուրքիայում լույս է տեսել ամերիկահայ պատմաբան, դեյթրոյթաբնակ Անդրանիկ Չելեպյանի «Զորավար Անդրանիկ» աշխատության թուրքերեն թարգմանությունը:

2 - «Հայխնայբանկում» ավանդադրված ՀՀ քաղաքացիների խնայողական ավանդները վերականգնելու և փոխհատուցելու հնարավորություններն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողովը ներկայացրեց իր առաջարկությունների մեխանիզմը. ավանդների փոխհատուցման գործընթացն սկսել 2005թ.՝ 1000 ռուբլու դիմաց 20 հազար դրամ հարաբերակցությամբ և ավարտել մինչև 2020թ.:

- ՌԴ Կրասնոդար քաղաքի Սլավոնական գերեզմանոցում պղծվել են հայերի գերեզմանները:

4 - Սանկտ-Պետերբուրգում կայացած «Դանս Օպեն» (“Dance Open”) պարի միջազգային մրցույթի Գրան-պրին նվաճել է Հայաստանը ներկայացնող «Նանե» շոու-բալետը:

4-29 - Երևանի «Մոսկվա» կինոթատրոնում կազմակերպվել է World Press Photo միջազգային ֆոտո-ցուցահանդեսը:

5 - Թեհրանում բացվեց Իրանի հայկական եկեղեցիների պատմությանն ու ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես:

- Եվրոպական դատարանը մերժեց Ֆրանսիայի քաղաքացի հայերի հայցը, որով պահանջում էր Թուրքիային զրկել ԵՄ թեկնածուի կարգավիճակից, քանի որ 1999թ. այդ որոշումը և Եվրախորհրդի՝ 1987թ. ընդունած Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևը հակասում են իրար:

8 - Հ. Այվազովսկու «Փոթորիկը ծովում» հայտնի նկարը Ստամբուլում աճուրդով վաճառվել է մի անհայտ գնորդի՝ 65 մլրդ թուրքական լիրայով (շուրջ 50 հազար ԱՄՆ դոլար):

- Ստեփանակերտում մեկնարկեց ՖԻՖԱ-ի դասակարգմամբ 9-րդ դասի «Ղարաբաղ-2004» շախմատի միջազգային մրցաշարը:

- Հասարակածային Գվինեայում (Աֆրիկա) պետական հեղաշրջման փորձի մեղադրանքով ձերբակալվել է ՀՀ քաղաքացի վեց օդաչու:

10 - Ուրուգվայի խորհրդարանի Ստորին պալատն ընդունեց օրենք՝ ապրիլի 24-ը նշել որպես «1915թ. Օսմանյան Թուրքիայում հայերի սպանդի հիշատակի օր»:

11 - ՀՀ կառավարությունն ընդունել է ամերիկյան «Քոմսատ» ընկերության առաջարկը՝ գնել Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը:

12 - ԱԺ պատգամավոր Թաթուլ Մանասերյանն ազատ է արձակվել ԱՄՆ-ի Սան-Բերնարդինո բանտից:

- Ֆադեյ Սարգսյանը վերընտրվեց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահի պաշտոնում:

12-13 - Պաշտոնական այցով ՀՀ-ում էր Վրաստանի նախագահ Միխեիլ Սահակաշվիլին:

13 - Երևանի կենտրոնում՝ «Տրիումֆ» սրճարանում, տեղի ունեցավ փոխհրաձգություն, որի մասնակիցների թվում էր նաև քաղաքաշինության նախարար Արա Արամյանի որդին:

- Հայաստան ժամանած հայտնի ջազմեն Արթո Թունչբոյաջյանը Երևանում բացեց «Ավանգարդ ֆոլք մյուզիք» (“Avanguard Folk Music”) ֆոլք-ակումբը:

14 - ՀՀ-ում 10 ընտրական տեղամասերում տեղի ունեցան ՌԴ նախագահի ընտրություններ:

16-17 - ՀՀ ժամանեց ԵԱՀԿ-ի գործող ղեկավար, Բուլղարիայի ԱԳ նախարար Սոլոմոն Պասսին: Նա բանակցություններ վարեց երկրի ղեկավարության հետ, հանդիպեց Բուլղարիայից հայրենադարձների հետ:

17 - ՀՀ նախագահի հրամանագրով գլխավոր դատախազի պաշտոնից ազատվեց Արամ Թամազյանը: Մեկ այլ հրամանագրով այդ պաշտոնում վերանշանակվեց Աղվան Հովսեփյանը:

18 - ՀՀ ԱԳՆ-ն դիվանագիտական նոտա ուղարկեց Մեծ Բրիտանիայի կառավարությանը՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ՀՀ-ում Միացյալ Թագավորության դեսպան Թորդա էբբոթ-Ուոթթի արտահայտությունների կապակցությամբ:

22 - Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նոր նշանակումներ կատարեց դատախազության համակարգում:

- ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանն ընտրվեց ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահ:

- Ուշ երեկոյան անհայտ անձինք հարձակվել են «Արդարություն» դաշինքի ԱԺ խմբակցության քարտուղար Վիկտոր Դալլաքյանի վրա:

23 - Եվրամիության հատուկ պատվիրակ Հեյքե Տալվիտիեն այցելեց ՀՀ: Քննարկվեցին «Ավելի ընդարձակ Եվրոպա» ծրագրում ՀՀ-ի ներգրավման հեռանկարները:

23-27 - ՀՀ-ում անցկացվեցին հրամանատարական-շտաբային վարժություններ:

24 - ՌԴ խոշորագույն պետական բանկերից մեկը՝ «Վնեշտորգբանկը», դարձավ «Հայխնայբանկի» բաժնետոմսերի 70 տոկոսի սեփականատերը:

26 - Իշխանական կոալիցիայի երեք կուսակցությունները հանդես եկան արմատական ընդդիմությանն ուղղված նախազգուշացում-հայտարարությամբ:

- ՀՀ-ում էր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ռիչարդ Արմիթեջը:

28 - Գյումրիում՝ «Արդարություն» խմբակցության պատգամավորների հանդիպման ընթացքում, տեղի ունեցավ ծեծկռտուք, որը դաշինքի ղեկավարները որակեցին իշխանությունների կազմակերպած «սադրանք»:

29 - Ադրբեջանական կողմի պատճառով տապալվեց Պրահայում նախատեսված ՀՀ և Ադրբեջանի ԱԳ նախարարների հանդիպումը:

30 - ԱԺ օտարերկրյա վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնության նպատակային օգտագործման հանձնաժողովն աննպատակահարմար համարեց Երևանի ջրամատակարարման օպերատոր, իտալական «Էյ Յութիլիթի» ընկերության հետ նոր պայմանագրի կնքումը:

- ՀՀ Հելսինկյան ընկերակցության նախագահ Միքայել Դանիելյանին վաղ առավոտյան ծեծել են իր տան մերձակայքում:

- Իշխանական կոալիցիայի կուսակցությունների ներկայացուցիչները երկխոսության կոչ արեցին արմատական ընդդիմությանը: Վերջինս անհողդողդ է իշխանափոխություն իրականացնելու իր մտադրություններում:

31 - Վրաստանի խորհրդարանի անդամ են ընտրվել հինգ հայեր:

- ԱՄՆ հայկական համայնքը ուղերձ հղեց Ջորջ Բուշին, որով իր դժգոհությունը հայտնեց նրա աշխատակազմի գործունեության կապակցությամբ:

### 2004թ. ապրիլի կարևորագույն իրադարձությունները

1 - Բեռլին-Երևան չվերթով Երևան ժամանած ուղևորներից մեկի մոտ «Զվարթնոց» օդանավակայանում հայտնաբերվեց և բռնագրավվեց հնադարյան մարդու ատամ: Վերջինս նա գողացել էր մերձդյուսելդորֆյան Նեանդերտալյան թանգարանից:

- Պաշտոնական այցով ՀՀ ժամանեց Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Հարիրին բազմանդամ պատվիրակությամբ, ներառյալ՝ Լիբանանի խորհրդարանի չորս հայազգի պատգամավորներ:

- Շրջանառությունից սկսեցին հանվել 1993թ. 10, 25, 50, 100, 200 դրամանոց թղթադրամները:

2 - Երևանի ճոպանուղում տեղի ունեցավ վթար, որի հետևանքով զոհվեց մի քանի մարդ:

- Տեղի ունեցավ խոսքի ազատության և «Ա1+» հեռուստա-

ընկերության աջակցության հանրահավաք ու երթ:

5 - «Ազգային միաբանություն» կուսակցությունը հանդիպեց ընտրողների հետ, որի ընթացքում հարձակում տեղի ունեցավ լրագրողների վրա:

7 - ՀՀ-ում նշվեց Մայրության և գեղեցկության տոնը:

- ԱՄՆ-ը ԵԱՀԿ Մինսկի խմբում ներկայացուցիչ է նշանակել Սթիվեն Մաննին, որը 1990-ական թթ. աշխատել է Երևանում:

8 - Միավորված ընդդիմությունը հանդես եկավ իշխանափոխության նպատակով ձեռնարկվող քայլերի մասին համատեղ հայտարարությամբ:

8-10 - ՀՀ-ում էր Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան:

9 - Հրաժարական տվեց նախարար Արա Արամյանը:

- Երևանում՝ Անկախության հրապարակում, «Արդարություն» դաշինքի և «Ազգային միաբանություն» կուսակցության միավորված հանրահավաքը վերածվեց նստացույցի:

- Կառավարող կոալիցիան հայտարարությամբ հաստատեց իր դիրքորոշումը՝ ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ:

11 - Հայ Առաքելական եկեղեցին նշեց Հարության տոնը:

12 - ՀՀ-ի տնտեսական դատարանը սնանկ է ճանաչել «Հայկական ավիաուղիներ» ընկերությանը:

- Կոալիցիոն ուժերի ջանքերով տապալվել է խորհրդարանական եռօրյան:

- Ընդդիմության նախաձեռնած հանրահավաքը տեղափոխվեց Բաղրամյան պողոտա:

13 - Ընդդիմության ցույցը գիշերը ցրվեց բիրտ ուժի գործադրմամբ:

14 - «Թուրք-հայկական հաշտեցման հանձնաժողովը» լուծարվեց: Հանձնախումբը «ավարտեց» երկու ժողովուրդների միջև «լայն հարաբերությունների հնարավորություններ» ստեղծելու իր «առաքելությունը»:

- Իշխանական կոալիցիան հանդես եկավ համատեղ քաղաքական հայտարարությամբ, որտեղ առաջ է քաշել չորս նախապայման՝ երկխոսությունը սկսելու համար՝ ա) սահմանադրական բարեփոխումների առանցքային հոդվածները համաձայնությամբ ընդունելու հնարավորության սահմանում, բ) միջազգային չափանիշներին համապատասխանող ընտրական օրենսգրքի փոփոխությունները համաձայնությամբ ընդունելու հնարավորության սահմանում, գ) հակակոռուպցիոն պայքարում ընդդիմության գործուն մասնակցության ձևերի մշակում, դ) Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորությունների հստակ ժամանակացույցով կատարում:

15 - Մատենադարանի մոտ տեղի ունեցավ հասարակական կազմակերպությունների քաղաքացիական հանրահավաքը: Մասնակիցները բողոքում էին ընդդեմ բռնությունների ու քաղաքական հետապնդումների:

16 - Մեկնարկեց Շարլ Ազնավուրի համերգների շարքը:

- Բանտում ինքնասպան է եղել «Հոկտեմբերի 27-ի» գործով դատապարտյալներից մեկը՝ Վռամ Գալստյանը:

- Պրահայում կայացավ ՀՀ և Ադրբեջանի արտգործնախարարների հետաձգված հանդիպումը:

- ՌԴ Կոստրոմա քաղաքում սափրագլուխները փորձել են այրել հայազգի երեխայի: ՌԴ իշխանությունները հերքեցին լուրը:

19 - ՀՀ Կենտրոնական բանկը հայտարարեց երկրի ոսկու պաշարի վաճառքի մասին:

- Թուրքիայի ԱԳ նախարար Աբդուլլա Գյուլը հայտարարեց, որ իր երկիրը չի վերաբացելու հայ-թուրքական սահմանը:

20 - Երևանում ՌԴ կայազորային ռազմական դատարանում սկսվեց Դաշնային սահմանազորային ծառայության նախկին պետ Վյաչեսլավ Աբոիմովի դատավարությունը:

21 - Ընդդիմության անցկացրած չարտոնված հանրահավաքը վերածվեց երթի:

- Հիմնադրվեց «Արժանապատիվ ապագա» հասարակական շարժումը, որի հիմնական նպատակն է ընտրական համակարգի կատարելագործումը և դրա համապատասխանեցումը միջազգային չափանիշերին:

- Կանադայի համայնքների պալատը ճանաչեց Օսմանյան կայսրությունում կատարված Հայոց ցեղասպանությունը:

22 - Պաշտոնական այցով ՀՀ-ում էր Գերմանիայի ԱԳ նախարար Յոշքա Ֆիշերը:

- Աշխատանքային այցով Լոնդոն մեկնած ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը հանդիպեց իր բրիտանացի գործընկերոջ՝ Ջեք Սթրոյի հետ:

- Անհայտ անձինք դաժանաբար ծեծեցին հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Մանուչարյանին:

- Վայքում հանդիսավորությամբ բացվեց Լենինի հուշարձանը:

23 - Խորհրդարանի խոսնակը «կլոր սեղանի» շուրջ հրավիրեց բոլոր քաղաքական ուժերին:

- ԱՄՆ նախագահի թեկնածու Ջիմ Քերրին կոչ արեց աշխարհի ժողովուրդներին պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

- Թուրքիան դատապարտեց Կանադայի խորհրդարանին՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար:

- Պատերազմի վետերան Հարություն Շիգլարյանը պաշտոնապես հրաժարվեց Մեծ Բրիտանիայի՝ իրեն շնորհած երկու շքանշանից՝ բողոքելով Էբբոթ-Ուոթի հայտարարության դեմ:

24 - Երևանում, Ստեփանակերտում, ՀՀ և ԼՂՀ մյուս բնակավայրերում, Ջավախքում և աշխարհի բոլոր հայաբնակ վայրերում նշվեց Մեծ եղեռնի 89-րդ տարելիցը:

- Երիտասարդ ազգայնականների միությունը բողոքի ակցիա կազմակերպվեց ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանատան առջև:

- ՀՅԴ երիտասարդները գիշերը ջահերով երթ կազմակերպեցին դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, որի ընթացքում այրեցին Թուրքիայի դրոշը:

- Իր ամենամյա ուղերձում Ջորջ Բուշը դարձյալ չարտասանեց «ցեղասպանություն» բառը:

- Թեհրանում տեղի ունեցան բախումներ՝ տեղացի հայերի և ադրբեջանցիների միջև: Վերջիններս ցանկանում էին խանգարել հայերի բողոքի երթը՝ դեպի թուրքական դեսպանատուն:

25-27 - ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի պաշտոնական այցը Ֆրանսիա: Ռ. Քոչարյանը հանդիպեց Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակի հետ և ներկա եղավ Շարլ Ազնավուրի համերգին:

26 - Եվրոպայում ԱՄՆ զինված ուժերի հրամանատար գեներալ Չարլզ Ուոլդի այցելության ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց Իրաք հայ բժիշկներ և սակրավորներ ուղարկելու վերաբերյալ:

- ԱԺ նախագահ Ա. Բաղդասարյանի նախաձեռնությամբ քաղաքական խորհրդակցություն տեղի ունեցավ իշխանական և ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների միջև:

26-30 - ՀՀ-ում անցկացվեցին ռուսական մշակույթի օրեր:

27 - Ընդդիմությունը դադարեցրեց իր մասնակցությունը քաղաքական խորհրդակցություններին և տասը կետից բաղկացած վերջնագիր ներկայացրեց իշխանություններին:

28 - ՀՀ ԱԺ-ն ընդունեց «Հանրահավաքների, ցույցերի և երթերի անցկացման մասին» օրինագիծը:

- Վարշավայում կայացավ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների նախագահների հանդիպումը:

- Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում քննարկվեց ՀՀ-ի ներքաղաքական իրավիճակը: Որոշվեց երկրի իշխանություններին հինգ ամիս ժամանակ տալ՝ Եվրախորհրդի առաջ քաշած պայմանները կատարելու համար, ընդդիմությանը կոչ արվեց զերծ մնալ փողոցային հանրահավաքների միջոցով ընտրությունների արդյունքները փոխելու փորձերից, որոնք, չնայած խախտումներին, ընդունել են նաև տեղական և միջազգային մարմինները:

- «Ֆրիդոմ հաուս» ամերիկյան իրավապաշտպան կազմակերպության հրապարակած «Մամուլի ազատություն-2004. լրատվամիջոցների անկախության համաշխարհային ուսումնասիրություն» զեկույցում ՀՀ-ն, աշխարհի 186 երկրների շարքում, 135-րդ տեղում է՝ «ոչ ազատ» կարգում:

**Սուրեն Մանուկյան**

# SHRJADARDZ IN BRIEF

**Editorial: The Law of Irreplaceability of the National Values' System**

*In the editorial article the main reasons of the ideological crisis are discussed, and it is proved that the investment of foreign values' system in the Armenian reality is fraught with destructive consequences. The only way out is relying on sound nationalism, that is - the system of national values, taking into consideration the ongoing changes in the world.*

***Hasmik Goulakian*, From "Reconciliation" to "Rapprochement"**

*The author of the article analyses the ignominious history of the so-called "Turkish-Armenian Reconciliation Commission" expressing conviction that there can be no reconciliation between the butcher and the victim without sincere repentance and complete compensation and indemnity.*

***Hasmik Goulakian*, The Armenian Genocide - a "Factor"**

*Interview with Ashot Melkonian, Director of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, on Armenian-Turkish relations and Turkish consistent efforts of turning the issue of the Armenian Genocide into an issue to be discussed by historians. Ashot Melkonian stresses that without recognition of the Armenian Genocide's fact by Turkish historians dialogue with them is senseless.*

**To Think about the Year of 1915 from a Different Viewpoint**

*The interview of the Turkish historian Halil Berktay with the "Radikal" daily, reprinted in "Marmara" daily, issued in Constantinople, is represented. In the interview the historian unwillingly recognizes the Armenian Genocide, declaring it an "ethnic cleansing", but tries to replace that fact in the field of discussion between Armenian and Turkish historians.*

***Artem Ohanjanian*, Interpretation**

*The author of many books about the Armenian Genocide interprets some of the important propositions of the interview of the Turkish historian Halil Berktay, demanding the historian to be more courageous and to call things by their proper names or to call a spade a spade.*

***Hakob Chakrian*, Turkey's Denial of the Armenian Genocide Remains Unaltered**

*Turkologist author proves that Turkey's official viewpoint on the recognition of the Armenian Genocide remains unaltered, simply the forms of forgery and falsification are changed, which pursue the long-range goal of Turkey's overcoming the Armenian hardship in order to become a member of the European Union.*

**From the Turkish Press**

*Two translations from the Turkish press concerning Azerbaijan's evasive policy in relation to the issue of Cyprus and the projects of energetic cooperation between Turkey, Russia and Israel.*

***Sarkiss Mouradian*, Meeting**

*By means of a fiction work - a novel, the author develops the idea of eternity of Armenians' revenge upon the Turkish barbarians.*

**Armenian Conference in Washington**

*On April 18-20, 2004, the group of students from the Republic of Armenia studying in the USA have had meetings with the American Congressmen in order to discuss some issues exciting the Armenian nation.*

***Hakob Adamian*, Again About H1**

*The famous Syrian Armenian writer complains of the inappropriate, baseless and most offensive expressions often sounding in the information programs transmitted by the Public Television of the Republic of Armenia.*

**We in the Foreign Press**

*Bibliographical data of the analytical publications appeared in the foreign press, related to the Armenian nation , are represented.*

***Armine Melik-Israelian*, Tigran Levonian's Drama Continues...**

*During the interview with the incompatible sound producer of the Armenian National Opera Theater the real reasons of some official figures' intentions during the recent years to liquidate the Armenian opera school are analyzed.*

***Arshakouny*, "The "Highlight" of the Month: "Not a Single Inch..."**

*The analyst discusses the new manifestations of the political crisis in the Republic of Armenia, expressing the opinion that uncompromising approaches of both the authorities and the opposition can only contribute to the prolongation and not the end of the crisis.*

***Hakob Chakrian*, "New Manifestations of Middle Eastern Policy of the USA and the Project of the "Great Middle East"**

*The author of the article expresses his viewpoints on the role ascribed to Turkey in the USA's new strategic project and discusses the attitude of the Turkish authorities towards that project.*

**New Publications**

*Bibliographical data on the new publications issued in the*

*Republic of Armenia and abroad during the last months relating to the Armenian nation's values' system.*

***Hasmik Goulakian*, St. Mesrop's "Carrier"**

*Interview with Toros Toranian, Aleppo Armenian writer, publisher and public figure, about Syrian Armenian community, as well as about various problems and aspects of the Diaspora and Motherland-Diaspora relations, in general.*

***Nizar Khalily*, Correlations between the Works "Prayerbook of Lamentations" and "al-Fusul wal-Ghayat"**

*The author, Syrian Arab philologist and translator of "Prayerbook of Lamentations" into Arabian, by means of citations and references to the above-mentioned work shows that while creating his masterpiece medieval Arab great philosopher Abu-l-Alaa al-Maari has been familiar with the work St. Gregory of Narek and has been influenced by the book.*

***Emma Begijanian*, Crisis of Self-consciousness in Turkey**

*The author of the article, analyzing the recent developments of Turkey's relations with the USA and the European Union, comes to the conclusion that the conscience of Islamic belonging gradually increases among Turks, and that constant delays of Turkey's becoming a member of the European Union and indistinct American policy towards Turkey contribute to that phenomenon.*

***Gevorg Yazedjian*, Karabaghization or Turkization of the National History?**

*The author represents Moscow Armenian philosopher and lecturer Alexander Grigorian's theory of the critical review on the article written in tandem with Babken Haroutunian - Alexander Iskandarian, entitled: "Armenia: "Karabaghization" of the national history?" The author reveals the numerous dangerous principal propositions of the above-mentioned couple.*

***Souren Manoukian*, Armenian Chronology**

*The most important events in the life of the Armenian nation which have taken place in March-April, 2004.*

# КРАТКОЕ СОДЕРЖАНИЕ

**От редакции: Закон о незаменимости национальной системы ценностей**
Анализируются основные причины идеологического кризиса, доказывается, что внедрение иностранных систем ценностей в армянскую действительность чревато губительными последствиями. Выход один - опираться на здоровый национализм, то есть национальную систему ценностей, имея ввиду постоянные изменения в мире.

***Асмик Гулакян* От "примирения" к "сближению"...**
Автор статьи рассматривает бесславную историю так называемой "Комиссии по турко-армянскому примирению", будучи уверенным, что не может быть примирения между палачем и жертвой без искреннего сожаления и полной компенсации.

***Асмик Гулакян* Геноцид армян - "фактор"?..**
Интервью с директором института истории НАН РА, докт. ист. наук Ашотом Мелконяном об армяно-турецких отношениях и последовательных попытках турок превратить вопрос Геноцида армян в объект обсуждения между историками. А. Мелконян отмечает, что без признания турецкими историками факта Геноцида армян диалог с ними бессмысленен.

**"Думать о 1915-ом с разных ракурсов"**
Из газеты "Мармара" (Стамбул) перепечатано интервью турецкого историка Халила Берктайа, данное газете "Радикал", где он в пол-слова признает Гено-цид армян, однако старается переместить этот факт на позицию обсуждения армянских и турецких историков.

***Артем Оганджанян* Комментарий**
Автор многочисленных книг о Геноциде армян комментирует некоторые положения интервью Халила Берктайа, требуя от турецкого историка быть более смелым и называть вещи своими именами.

***Акоб Чакрян* Опровержение Турцией Геноцида армян остается неизменным**
Автор, будучи турковедом, доказывает, что официальная точка зрения Турции по поводу признания Геноцида армян остается неизменной, меняются всего лишь способы выражения лести с целью устранения довольно дальновидной армянской помехи для членства Турции в ЕС.

**Из турецкой прессы**
Это два перевода из турецкой прессы: уклончивая политика Азербайджана в вопросах Кипра и относительно программы энергетического сотрудничества Турция-Россия-Израиль.

***Саркис Мурадян* Встреча**
Посредством художественной прозы-рассказа автор выражает идею постоянной своевременности армянской мести турецким варварам.

**Армянская конференция в Вашингтоне**
18-20 апреля сего года в Вашингтоне группа студентов в США из РА встретилась с представителями конгресса - для обсуждения вопросов, волнующих армян.

***Акоб Адамян*** **Вновь о Р1**
Известный сирийский писатель армянского происхождения, выражает протест неуважительным, безосновательным и глубоко оскорбительным выражениям, звучащим в информационных программах Армянского общественного телевидения.

**Мы - в иностранной прессе**
В статье представлены библиографические данные публикаций в иностранной прессе, касающихся армян и носящих аналитический характер.

***Армине Мелик-Исраелян*** **Продолжается драма Тиграна Левоняна...**
В течение беседы с несравнимым звукорежиссером национального оперного театра Армении анализируются истинные причины замысла некоторых чиновников - разрушить армянскую оперную школу.

***Аршакуни*** **"Гвоздь" месяца: "Ни пяди!.."**
В данной статье аналитик говорит о новых выражениях политического кризиса в РА, выражая мнение, что эти неуступчивые отношения между правительством и оппозицией могут лишь способствовать постоянному затягиванию этого кризиса, а не его развязке.

***Акоб Чакрян*** **Новые проявления новой средневосточной политики США и программа "Большого Среднего Востока"**
В статье автор выражает свое мнение о роли Турции в стратегической политике США и обсуждает отношение турецкого правительства к этой программе.

**Новые публикации**
Краткое содержание и библиографические данные публикаций, вышедших в свет за последние месяцы в РА и за рубежом и касающихся армянской системы ценностей.

***Асмик Гулакян*** **"Носильщик" Св. Месропа**
Беседа с писателем, издателем и общественным деятелем алепского происхождения Торосом Тораняном о сирийской общине и, вообще, о диаспоре и об отношениях Родина-диаспора.

***Низар Халили*** **Связи между "Книгой скорби" и "Ал-фусул уал-кайат"-ом**
Автор-филолог, сирийский араб, переводчик "Книги" на арабский, приводя цитаты из вышеупомянутых произведений, показывает, что великий арабский философ Абул Алаа ал-Маари, сочиняя свой шедевр, уже был знаком с "Книгой скорби" Григора Нарекаци, которая на него сильно подействовала.

***Эмма Бегиджанян*** **Кризис самосознания в Турции**
Анализируя последние развития отношений Турции с США и ЕС - автор придет к выводу, что у турок постепенно растет сознание принадлежности к исламу, чему способствуют также и постоянное затягивание европейцами вступления Турции в ЕС и нечеткая американская политика по отношению к Турции.

***Геворг Язычян*** **Карабахизация или туркизация национальной истории ?..**
Автором представлены резюме статьи московского философа и преподавателя Александра Григоряна о статье тандема Бабкен Арутюнян-Александр Искандарян "Армения: "Карабахизация" национальной истории", а также раскрываются многочисленные опасные, антиармянские положения статьи этого тандема.

***Сурен Манукян*** **Армянская хронология**
Важнейшие события армянской жизни в марте и апреле 2004 года.

# PRECIS

**Editorial - La loi de l'irremplaçabilité de l'échelle des valeurs nationales**
L'auteur examine les vraies raisons de la crise idéologique. Il prouve que l'introduction des valeurs étrangères dans la réalité arménienne générera des conséquences catastrophiques. Il n'y a qu'une issue: c'est de s'appuyer sur l'idéologie nationale, c'est-à-dire sur le système national des valeurs, tenant compte des changements internationaux.

***Hasmik Goulakian*** **- De la "réconciliation" au "rapprochement"...**
L'auteur retrace l'histoire de la soi-disante "Comission de réconciliation turco-arménienne". Elle trouve que la réconciliation entre la victime et le bourreau passe nécessairement par un repenti sincère et par une compensation complète.

***Hasmik Goulakian*** **- Le Génocide Arménienne est "un facteur"...**
Interview avec Achot Melkonian, directeur de l'Institut de l'histoire de l'Académie nationale de

l'Arménie, portant sur les relations turco-arméniennes, des tentatives du coté turc de limiter le débat sur le Génocide à celui entre les historiens. Selon A. M. tout dialogue sera inutile s'il n'y a pas de reconnaissance du Génocide par les historiens turcs.

**Nouveau regard sur les évènements de 1915**
Le quotidien arménien d'Istambul, *Marmara*, a reproduit sur ses pages l'interview de l'historien turc Halil Berktay paru dans le quotidien turc "Radikal" ou celui-ci presque reconnaît le Génocide des Arméniens, en essayant toutefois de réduire le débat à celui des historiens.

***Artem Ohandjanian*** **- Commentaires**
L'auteur de nombreuses études historiques, Artem Ohandjanian commente les points d'importance évoqués par Halil Berktay, dans son interview. Il appelle l'historien turc d'être plus courageux et d'appeler les choses par leur nom.

***Hakob Tchakrian*** **- Le négationnisme turc n'a pas changé**
L'auteur démontre que la position officielle turque vis-à-vis du Génocide n'a pas changé. Seules, les méthodes ont évolué dans le temps du à l'aspiration turque d'évacuer "l'obstacle arménien" de son chemin vers l'adhésion à l'Union Européenne.

**La presse turque**
Deux articles tirés de la presse turque sont présentés aux lecteurs, dont le premier concerne l'attitude évasive de l'Azerbaïdjan face à la question chypriote et le second l'accord de coopération turco-russo-israelien dans le domaine énergétique

***Sarkis Mouradian*** **- Rencontre**
A travers le récit l'auteur affirme que la vengeance qui s'abat sur les exécuteurs turcs du Génocide ne perdra jamais de son actualité.

**Conférence arménienne à Washington**
Du 18 au 20 avril dernier le groupe des étudiants arméniens a rencontré des membres du Congrès américain.

***Hakob Adamian*** **- A propos de la chaîne H1**
L'écrivain syrien d'origine arménienne dénonce les propos insultants et déplacés des journalistes de la chaîne nationale H1.

**Les Arméniens dans la presse étrangère**
La bibliographie des articles analytiques sur les Arméniens parus dans la presse étrangère.

***Arminé Melik-Israelian*** **- Le drame de Tigran Levonian continue…**
Dans l'interview avec Tigran Levonian, l'un des plus grands metteurs en scène de l'Opéra Nationale, ce dernier révèle les vraies raisons qui ont poussé certains représentants de l'Etats à détruire l'école nationale de l'opéra.

***Archakouni*****, "L'événement du mois": "Pas un centimètre…"**
L'auteur analyse la crise politique actuelle et ses nouvelles expressions. Il affirme que le climat d'intolérance qui prévaut entre l'opposition et le gouvernement prolonge la crise au lieu de lui porter une solution.

***Hakob Tchakrian*** **- Des nouvelles expressions de la politique américaine au Moyen Orient, le projet du "Grand Proche Orient"**
L'auteur analyse le rôle attribué à la Turquie dans le nouveau plan stratégique des Etats-Unis. Il s'interroge également sur l'attitude du gouvernement turc vis-à-vis de ce projet.

**Nouvelles parutions**
La liste et le bref résumé des dernières parutions en Arménie et à l'étranger.

***Hasmik Goulakian*** **- "Le porteur" du Saint-Mesrob**
Interview avec Toros Toranian, écrivain et éditeur établi à Halep, ou ce dernier parle des problèmes de la communauté arménienne de Syrie et de la Diaspora en général, des relations Diaspora-Arménie.

***Nizar Khalili*** **- Etude comparative du "Livre des pleurs" et de "Al Foussoul oual-ghayat"**
Nizar Khalili, le traducteur syrien du "Livre des pleurs" de Grigor Narekatsi démontre à travers l'étude comparative qu'au moment de l'écriture de son chef-d'oeuvre, le philosophe arabe Abul-Alaa al-Maarri, avait lu le "Livre des pleurs" et s'en est inspiré.

**Emma Bezidjanian – La crise d'identité en Turquie**
L'auteur analyse les dernières évolutions des relations Turquie/EU, Turquie/Etats-Unis. Elle signale que la conscience de l'appartenance à l'islam grandit parmi les Turcs. Celle-ci est favorisée par la remise continuelle de l'acceptation de la candidature turque par l'UE et par la politique évasive des Etats-Unis vis-à-vis de la Turquie.

***Guevork Yazedjian*** **- La Turquisation ou la karabakhisation de l'histoire nationale?**
A l'occasion de la parution de l'article signé par Babken Haroutunian et Alexandre Iskandarian intitulé "L'Arménie: "La karabakhisation" de l'histoire nationale", l'auteur résume les commentaires faits par Alexadre Grigorian, le philosophe et lecteur moscovite, et dénonce des postulats dangereux avancés par les deux auteurs.

***Souren Manoukian*** **- Chronique arménienne**
Les événements les plus importants de mars-avril 2004.